



ԷԶՄԻԱՏԻՆ

1969-Ե

ՌՆԺԸ
ԻԵՏԱՐԻ

Մայիս


ԷԶՄԻԱԾԻՆ


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ե

1969

ՊԱ-11567





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հաղորդագրություն	3
Վեճափառ Հայրապետը Վիեննայում	4
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	7
Ֆրանսիացի ուխտավորները ս. Էջմիածնում	9
Մաղափա արհեստագույն Օրմանյանի նամակներից	11
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին հետ	16
ՍԱՆԴՐՈ ՔԵՀՐՈՒԴՅԱՆ—Վահան ծայրագույն վարդապետ Բաստամյանց	29
Գ. Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—«Լաստիվերցոյն՝ մեկնութիւն ընթերցուածոց»	36
Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ—«Արարատ»-ն ու երգ-երածշտության հարցերը	44
Մատենագիտություն «Արարատ» ամսագրի	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS,

Հանձնված է արտադրության 20/V 1969 թ.: Ստորագրված է տպագրության 20/VI 1969 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 361

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1969 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

44244



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը ա. թ. մայիսի 17—21-ին Վիեննայում հանդիպում և խորհրդակցություն ունեցավ ամերիկահայ ծանոթ ազգայիններ տիարք Ալեք Մանուկյանի և Տատուր Տատուրյանի հետ՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի շինարարական ապագա կարևոր ծրագրերի կենսագործման առնչությամբ:

8 հունիս 1969 թ.

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ





ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԻՆՆԱՅՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 17—24 օրերին ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ անպաշտոն այցելությանը լինում է Վիեննայում՝ տեսակցություն ունենալու համար ամերիկահայ ծանոթ ազգայիններ **Ալեք Մանուկյանի** և **Տատուր Տատուրյանի** հետ, Մայր Աթոռի ապագա շինարարական գործերի առնչությամբ:

Մայիսի 17-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը ժամանում է Վիեննայի միջազգային օդանավակայանը: Հայոց Հայրապետին ջերմորեն դիմավորում են Վիեննայի հայոց հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանը**, համայնքային վարչության անդամները՝ **պ. Սարգիս Կարապետյանի** գլխավորությամբ, և ողջ Վիեննահայ գաղութը:

Օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության արքահայր **տ. Մեսրոպ արքեպ. Հապուզյանը** և **պ. Տատուր Տատուրյանը**, որը մի քանի ժամ առաջ էր ժամանել Վիեննա: **Տ. Մեսրոպ Ծ. վարդապետը** բարի գալուստ է մաղթում, հանուն համայնքի, Հայոց Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը ողջունում է բոլոր ներկաներին և, Իր օրհնությունը բաշխելուց հետո, առաջնորդվում Վիեննայի Իմպերիալ հյուրանոցը:

Մայիսի 18-ին, կիրակի օրը. Երկրորդ Ծաղկազարդ. Վիեննայի հայոց **ս. Հովհաննես եկեղեցում** հանդիսավոր **ս. պատարագ** է մատուցում հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանը**՝ ի ներկայության Վիեննայի ողջ հայ գաղութի, որը եկել էր մի անգամ ևս ողջունելու Հայոց Հայրապետին, լսելու Նրա հայրապետական պատգամն ու ստանալու օրհնությունը:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Հայոց Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ, բոլոր ներկաներին հաղորդելով **ս. Էջմիածնի օրհնությունն** ու հայրապետական Իր ողջույնը, Բանին կենաց ոգեշունչ քարոզությամբ մխիթարում Իր հոգևոր զավակներին:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Մյունխենից ժամանած հայ պատվիրակությունը, որը մասնավոր սիրով եկել էր ողջունելու Հայոց Հայրապետին և ստանալու Նրա սուրբ օրհնությունը:

Հետմիջօրեի ժամը 13-ին Վիեննայի հայոց հոգևոր հովվությունն ու համայնքային վարչությունն ի պատիվ Հայոց Հայրապետի Իմպերիալ հյուրանոցում կազմակերպում են բարիգալստյան ընդունելություն, որին ներկա է լինում նաև Մյունխենից ժամանած հայ պատգամավորների խումբը:

Հյուրերի թվում էր նաև Մխիթարյան միաբանության արքահայր **տ. Մեսրոպ արքեպ. Հապուզյանը**:

Ընդունելության ժամանակ տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանը, հանուն իր, եկեղեցական վարչության և ողջ համայնքի, որդիական սիրո և երախտագիտական զգացմունքներով բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին և հաջողություն՝ Նրա եկեղեցանվեր, հայրենաշեն բոլոր ձեռնարկներին:

Վեհափառ Հայրապետը Իր պատասխան խոսքում գոհունակություն է հայտնում ջերմ դիմավորության և հանուն համայնքի արտասանված որդիական անկեղծ ու խորը խոսքերի համար և Իր շնորհաբեր ներկայությամբ և օրհնությամբ մխիթարում բոլորին:

Ընդունելությունն անցնում է սրտագին մթնոլորտում:

Մայիսի 19-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վիեննա է ժամանում պ. Ալեք Մանուկյանը՝ իր ազնվափայլ տիկնոջ հետ և Իմպերիալ հյուրանոցում բարի գալուստ մաղթում Ամենայն Հայոց Հայրապետին:

Մայիսի 19—21 օրերին Իմպերիալ հյուրանոցում, Ամենայն Հայոց Հայրապետին հատկացված մասնավոր ու շքեղ հարկաբաժնում, տեղի են ունենում խորհրդակցություններ Վեհափառ Հայրապետի, պ. Ալեք Մանուկյանի և պ. Տատուր Տատուրյանի միջև՝ գլխավորաբար Մայր Աթոռի շինարարական ապագա ծրագրերի կենսագործման մասին:

Մայիսի 21-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Իմպերիալ հյուրանոցում Ամենայն Հայոց Հայրապետին է այցելում իր շքախմբով Ավստրիայի կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Վսեմություն կարդինալ Ֆրանց Գյոնգը և, ողջունելով Հայոց Հայրապետին, բարի գալուստ է մաղթում:

Երկու մեծ հովվապետների միջև տեղի է ունենում մտերմիկ զրույց, սրտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա են լինում նաև տ. Մեսրոպ Ծ. վարդապետը, պ. Սարգիս Կարապետյանը, տեր և տիկին Ալեք Մանուկյանը:

Մայիսի 21-ին, չորեքշաբթի, օրվա երկրորդ կեսին, պ. Ալեք Մանուկյանը իր հարգելի տիկնոջ հետ և պ. Տատուր Տատուրյանը, հրաժեշտ առնելով Հայոց Հայրապետից ջերմ ու սրտագին մթնոլորտում, մեկնում են ԱՄՆ:

Մայիսի 22-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում բարեհաճում է ընդունել մի շարք այցելություններ:

Երեկոյան ս. Հռիփսիմե եկեղեցուն առընթեր Գալուստ Կյուպենկյան մշակութային սրահում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում վիեննահայ համալսարանական ուսանողական միության ավելի քան 50 անդամների հետ, որոնք եկել էին ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը հայրական մասնավոր սիրով ու գուրգուրանքով ընդունում է երիտասարդ ու խանդավառ այդ հոգիներին, խոսում, խրախուսում, Իր ողջույնն ու օրհնությունը բաշխում բոլորին, պատմում հայրենիքի հայ ուսանողական կյանքից, բարեմաղթում, որ հաջողությամբ ավարտեն իրենց համալսարանական բարձրագույն կրթությունը, և հորդորում, որ իրենց ապագա կյանքով և գործունեությամբ անբաժան կերպով կապված մնան միշտ հայ իրականության հետ և, հատկապես, վերածնված մայր հայրենիքի իրականության և մեր ազգային-մշակութային կյանքին ու հոգևոր արժեքներին, ապագայում, մի երջանիկ օր, մայր հայրենիքի քաղաքացիներ լինելու իղձով ու տեսիլքով:

Մայիսի 23-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Մեսրոպ Ծ. վարդապետի, փոխ-այցելու-

թյուն է տալիս Ավստրիայի կարդինալ Նորին Վսեմություն **Ֆրանց Գյոնիգին**՝ նրա կարդինալական ապարանքում, և ուր արժանանում է հարգալիք մեծարանքի և ընդունելության: Սիրալիք զրույցի ընթացքում Հայոց Հայրապետն ու կարդինալը հուշանվերներ են փոխանակում:

Ժամը 13-ին Հայոց Հայրապետը, սիրալիք հրավերովը Վիեննայի Մխիթարյան հայրերի, այցելում է վանք և զրույց ունենում արքահոր ու միաբանների հետ և ճաշում միաբանության և ուսանողության հետ, վանական սեղանատանը:

Երեկոյան ժամը 17-ին Հայոց Հայրապետի բարձր նախագահության ներքո գումարվում է Վիեննայի համայնքային վարչության նիստը Իմպերիալ հյուրանոցում: Ն. Ս. Օծությունը ծանոթանում է նոր կազմված համայնքային կանոնադրության նախագծին, Իր թելադրությունն անում և մաղթում, որ այդ կանոնադրությունը շուտով ստանա իր վերջնական ձևը՝ վավերացվելով կառավարության կողմից:

Նույն երեկոյան, ավելի ուշ, ս. Հովհաննես եկեղեցուն առընթեր Գալուստ Կյուլպենկյան մշակութային սրահում վիեննահայ տիկնանց միությունը թեյստեղանով պատվում է Հայոց Հայրապետին:

Վիեննայի Հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ Ծ. վարդապետը խոսք առնելով ողջ համայնքի երախտագիտությունն է հայտնում Հայոց Հայրապետին այս անպաշտոն այցելության առիթով, որը, սակայն, իր հոգևոր իմաստով ու տպավորություններով և Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությամբ նվազ պակաս չեղավ, քան հայրապետական նախորդ երկու օրհնաբեր այցելությունները, 1961 և 1968 թվականներին:

Հրաժեշտի սեղանի շուրջ խոսք է առնում նաև **Վեհափառ Հայրապետը**, մի անգամ ևս բաշխում Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությունն ու տալիս հայրապետական Իր ողջույնը բոլոր ներկաներին՝ նրանց սիրտն ու հոգին ողողելով Իր հավատքի կրակով, հայրենասիրական շնչով՝ հայ մնալու և հայ ապրելու սրտառույշ պատգամով, միշտ կապված մեր ժողովրդի հավերժության երկու աղբյուրների՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնին և վերածնված մայր հողին հայոց:


Ընդունելության ժամանակ Վիեննայի հայոց համայնքային վարչության անդամ, գորգավաճառ պ. **Հակոբ Թարյանը** Մայր Աթոռին է նվիրում Ղարաբաղի հայկական մի գեղեցիկ գորգ:

Վեհափառ Հայրապետի Վիեննա գտնվելու առիթով Ջմյունհայի նախկին առաջնորդ և 1918 թվականին Իզմիրի բանտում նահատակված տ. **Հակոբ-Աշոտ եպս. Փափագյանի** հարազատներից սթենոգրաֆիկ տիկին **Փափագյանը տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանի** միջոցով **Վեհափառ Հայրապետին** է հանձնում Մայր Աթոռի թանգարանի համար նահատակ տ. Հակոբ-Աշոտ սրբազանի եպիսկոպոսական մատանին:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

Մայիսի 24-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Վիեննայի համայնքից լավագույն ու սրտագին տպավորություններով և վերադառնում Մայր Աթոռ:

Հայոց Հայրապետին Վիեննայի միջազգային օդանավակայանում նա-նապարհում են տ. Մեսրոպ Ծ. վրդ. Գրիգորյանը, համայնքի վարչության անդամները, Մխիթարյան հայրեր և վիեննահայ ողջ համայնքը:



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 4-ին, կիրակի.—Տօն երեման ս. Խաչի:

Մայր տաճարում հանդիսավոր ս. սբատարագ մատուցեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը՝ «Այսօր երեւալ նշան յաղթութեան քո Տէր» բնարանով:

*
* *

Մայիսի 11-ին, կիրակի.—Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերապիւսյանը և քարոզեց «Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ, մտցէ և ելցէ և ճրագ գտցէ» բնարանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 12-ին, երկուշաբթի.—Հոգևոր ճեմարանի հանդիսասրահում Կոմիտաս վարդապետի կյանքի և գործունեության մասին դասախոսութեամբ հանդես եկավ Միհրան Թումաճանը: Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

*
* *

Մայիսի 14-ին, չորեքշաբթի.—Հոգևոր ճեմարանում «Սփյուռքահայությունը և հայ հո-

գեվորականության դերը» շահեկան և բովանդակալից դասախոսությամբ հանդես եկավ լիբանանահայ հայտնի բանաստեղծ և «Նաիրի» շաբաթաթերթի խմբագիր Անդրանիկ Մառուկյանը, որը ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում: Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

*
* *

Մայիսի 14-ին, 15-ին և 16-ին «Արդի աստվածաբանության հետաքրքրող հարցերը» թեմայով երեք դասախոսություններով հոգևոր ճեմարանում հանդես եկավ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, Օհիոյի (ԱՄՆ) համալսարանի փիլիսոփայության դասախոս դոկտ. Հակոբ Ներսոյանը: Դասախոսություններին ներկա եղան Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներն և ուսանողությունը:

Դասախոսությունների ընթացքում հարգելի բանախոսը պատասխանում էր նաև ներկաներից շատերի և մանավանդ՝ ուսանողների հարցերին:

Դասախոսությունների ավարտին տեսուչ տ. Ներսես Ժ. վրդ. Պողոպոսյանը ջերմ շնորհակալություն հայտնեց դոկտ. Հակոբ Ներսոյանին՝ շահեկան և հետաքրքիր դասախոսության համար:

*
* *

Մայիսի 15-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.

Քրիստոսի Համբարձման հրաշափառ տոնի առթիվ հանդիսավոր ս. պատարագ մատուցվեց Մայր տաճարում: Պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը և քարոզեց՝ «Համբարձաւ Տէրն մեր Քրիստոս» բնաբանով:

*
* *

Մայիսի 18-ին, կիրակի.—Երկրորդ Մաղկազարդ.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և օրվա խորհրդի առթիվ քարոզեց «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ» բնաբանով:

*
* *

Մայիսի 19-ին, երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանում սկսվեցին 1968—1969

ուսումնական տարվա ամսվերջի քննութիւնները, որոնք կտեսնեն մինչև հունիսի 10-ը:

*
* *


Մայիսի 25-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ), հիսնեւորդ օր ի Զատիկէն.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը և գեղեցիկ ու շինիչ քարոզ քոսեց՝ «Առաքելոյ աղանոյ» բնաբանով:

*
* *

Մայիսի 30-ին, ուրբաթ.—Այսօր Մայր տաճար այցելեց սովետական տիեզերագնաց-օդաչու Վալերի Բիկովսկին՝ իր հարգելի տիկնոջ հետ: Վեհարանում Ամենայն Հայոց Հայրապետը ընդունեց պատվարժան հյուրին և զրույց ունեցավ նրա հետ՝ ջերմ, սրտագին մթնոլորտում:





ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

Մայիսի 7-ին, առավոտյան ժամը 9.30-ին, Մայր Աթոռ ժամանեց 300 հոգուց բաղկացած ֆրանսիացի կաթոլիկ հավատացյալների խումբը, որին գլխավորում էր հայր Ռիկեն:

Պատվարժան ուխտավորները գլխավորաբար գիտության, արվեստի և առողջապահական բնագավառի աշխատողներ էին:

Քրիստոնեական այս փոքրիկ, նորակազմ ընկերությունը դեռևս մի քանի տարի առաջ որոշում է պարբերաբար ուխտի գնալ արևելքի քրիստոնեական հին սրբավայրերին: 1967 թվականին այս խումբը իր առաջին ուխտագնացությունը կատարել է դեպի Կ. Պոլիս, հունաց եկեղեցին, որին ընդունել է Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարք Աթենագորաար:

Այժմ հավատացյալների այս խումբը իր երկրորդ ուխտագնացությունը կատարել է դեպի հայ եկեղեցու դարավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածին:

Մայր տաճարում պաշտվում է հատուկ ժամերգություն: Ֆրանսիացի ուխտավորները ջերմեռանդությամբ աղոթում են հայ եկեղեցու կամարների տակ, կատարում իրենց աղոթքը:

Ժամերգությունից հետո Հուսիկ եպս. Սանթրոյանը, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, ողջունում և բարի գալուստ է մաղթում հյուրերին: Սրբազանը նրանց ծանաթոցում է հայ եկեղեցու առաքելական ծագման, եկեղեցական նվիրապետության

հաստատման ու ապա՝ ողջ աշխարհում քրիստոնեական այս հնագույն եկեղեցու գոյությունը անցած դեպքերին և իրադարձություններին:

Թարգմանչի պաշտոնը կատարում է Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար, հոգևոր ճեմարանի ավագ դասախոս պ. Ծախբազյանը:

Ապա ֆրանսիացի ուխտավորները խումբ-խումբ այցելում են Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարանը, որից հետո Մայր Աթոռի միաբանների գլխավորությամբ հյուրերն առաջնորդվում են Վեհաբանի ընդունելության մեծ դահլիճը, ուր նրանց բարեհաճում է ընդունել և ողջունել Ամենայն Հայոց Հայրապետը:

Հանուն ուխտավորների, Հայոց Հայրապետին շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում խմբի ղեկավար հայր Ռիկեն:

«Ձերո Սրբություն, Ամենայն Հայոց Հայրապետ, ուխտավորական մեր ողջ խմբի անունից, հայտնում եմ մեր խորին շնորհակալությունը այն ջերմ ընդունելության համար, որով եղբայրորեն բացվեցին հայ եկեղեցու դռները մեր աղոթքի և ուխտի համար: Մենք բախտավոր ենք, որ գտնվում ենք քրիստոնեական այս հնագույն սրբավայրերի մեջ, ուր նահատակության գնով դարեր շարունակ պահպանվել է Քրիստոսի լույս հավատքը: Հայ ժողովուրդը աշխարհում ա-



Վեհափառ Հայրապետը ֆրանսիացի ուխտավորների խմբի հետ

ուաշինգտոնից է, որ հասկացավ, ըմբռնեց քրիստոնեական կրոնի վեհությունը, բարոյական բարձրությունը և մարդասիրական ոգին: Մենք անչափ ուրախ ենք, որ այս րուպեին ողջունում ենք, հանձին Ձեզ, քրիստոնեական աշխարհի հոգևոր պետերից մեկին, որն աշխատում է մաս համագործակցություն ստեղծել Բրիտանիայի եկեղեցիների միջև՝ Էկումենիկ ոգով»:

Ամենայն Հայոց Հայրապետը Իր պատասխան խոսքում ողջունում է ներկայությունը ֆրանսիացի ուխտավորների Մայր Աթոռի հարկի տակ և ապա շեշտում, որ հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամությունը, մշակութային կապերը խոր անցյալ ունեն: Այս երկու ժողովուրդներն էլ հանուն քրիստոնեական կրոնի և հայրենիքի բազմիցս դուրս են եկել պատերազմի դաշտ՝ օտար բռնակալների դեմ: Վեհափառ Հայրապետը հիշեցնում է, որ երբ հայ ժողովուրդը 451 թվականին Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ Ավարայր էր իջել իր հավատքը պաշտպանելու պարսիկների դեմ, զարմանալի զուգադրությամբ նույն թվականին,

նույն ամսի գրեթե միևնույն օրերին, աթիլ-լայական արյունոտ թանակները ներխուժել էին Գալիա, որոնց դեմ մահու և կենաց պայքար էր մղում ազատատենչ ֆրանսիացի ժողովուրդը Էջիուսի գլխավորությամբ:

Իր խոսքի վերջում Ն. Ս. Օծությունը օրհնում է ֆրանսիացի բարեպաշտ ուխտավորներին, բոլորին հանձնում է հուշանվերներ և բարի ճանապարհ մաղթում նրանց:

Հյուրերը Վեհափառի մուտքի առաջ նրկարվում են Վեհափառ Հայրապետի հետ և հրաժեշտ տալիս Նրան:

Պատվարժան ուխտավորները այցելում են Վաղարշապատի մյուս եկեղեցիները՝ ս. Գալանե, ս. Հռիփսիմե, ուր Հայոց Հայրապետի մասնավոր արտոնությամբ խմբի ղեկավար հայր Ռիկեն ս. պատարագ է մատուցում: Պատարագի երգեցողությունը ջերմեռանդորեն կատարում են՝ բոլոր ուխտավորները: Արարողությանը ներկա է լինում մաս Մայր Աթոռի միաբանությունը: Հավարտ ս. պատարագի, ամբողջ խումբը հաղորդվում է և հրաժեշտ առնում Մայր Աթոռի միաբանությունից լավագույն տպավորություններով:



ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ*

Համար 10

Կ. Պոլիս, Սանսթեփանո. 14 օգոստոս 1909

Հոգեշնորհ սիրելի

տ. Երվանդ վրդ. Տեր-Մինասյան

ս. Էջմիածին

Հուլիս 21 թվակիր գրությունդ ստացա ժամանակին. շնորհակալ եմ սիրելությանդ, և միշտ շնորհակալությամբ պիտի ընդունիմ գրություններդ. և եթե մեր գործերը Ձեզ հետաքրքրեին, ես ալ այստեղեն լուրեր կրնայի հաղորդել:

Մեզ շատ զարմացուց օծման հանդեսին վեհին հասնելն ետքը երեք ամիս հետո ձգելնիդ, ինչ ալ ըլլա պատճառը, ով ալ ըլլա պատճառողը: Եթե հանդեսը փառավոր ընելու համար է, ցուցամոլություն կլինի, իսկ եթե նվերի առատության համար է, արծաթսիրություն կլինի: Ասոցմե թարծր պետք էր նկատել պաշտոնական գործունեությունը, և երեքամսյա հետաձգումը վնաս է պաշտոնական արդյունավորության:

Կլավի ևս որ վեհը չկարենալով օգտվիլ Բյուրականի օղեն, և մորթային հիվանդությունը սաստկանալով Էջմիածին է դարձած: Կհուսամք որ առողջությունը գտած ըլլա:

Բարենորոգությանց մասին խոսողներ երեք տարբեր իմաստներ կուտան նույն բառին: 1. Ոմանք կիմանան մոտավոր անցյալին մեջ տիրող նախանձահույզ պահպանողականությունը, և մեր տերերուն հեղինակության գերակշռությունը: 2. Ուրիշներ կիմանան հայ եկեղեցվույն մեջ սկսողած հունամոլ և լատինամոլ հավելվածների հապավել, և հավատք ու դավանանք, և ծես ու կանոն Թարգմանչաց դարուն

և նախաքաղկեդոնական միջոցին պարզության վերածել: 3. Ոմանք ալ կիմանան՝ եկեղեցվո ավանդականությունը. իսպառ չհարգելով՝ մոտավորական զարգացման տեսությամբ նոր կարգադրություններ ընել:

Հետաքրքիր էր որ ճշտեք, թե Դուք ո՞ր ձևին կմտիք, ո՞րը պիտի ըլլա վեհին առաջարկվելիք ծրագիրը, և ո՞րը կիմանա վեհը, երբ որ բարեկարգությանց վրա կխոսի:

Ձեր պատասխանն ետքը, թե հարկ ըլլա, ես ալ իմ տեսությունը կավելցնեմ:

Հ. Բաբգենի* կհաղորդեմ հԱնկյուրիս, Ձեր առաջարկը: Այժմ հովվական այցելությանց շրջանի մեջ է: Ողջույն սիրո Կարապետ, Հուսիկ, Գարեգին և Կոմիտաս վարդապետաց սիրելյաց, և ջերմ մաղթանք մնամ սիրելությանդ աղոթարար.

Մաղ. արք. Օրմ.

Խաչեն ետքը Բերա կվերադառնամ:

*
* *

Համար 11

Բերա Կ. Պոլիս. 2 նոյեմբեր 1909

Հոգեշնորհ սիրելի

տ. Երվանդ վրդ. Տեր-Մինասյան.

1. Նորապսակ եպիսկոպոսներն Ներսես Խարախանյան և Կարապետ Տեր-Մկրտչյան սրբազաններու շնորհավորական գիրերս Ձեզի կղրկեմ, որ եթե հոն են հանձնեք, իսկ եթե մեկնած են՝ ապահովաբար ետևնեն հղեք: Կանխիկ շնորհակալություն:

2. Կիսնդրեմ որ նոր եպիսկոպոսներուն լուսանկարները հոգաք ինձի հղել՝ իմ հավաքածոյիս համար:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1969 թվականի № 9-ից:

* Բաբգեն վրդ. Կյուլեսերյան, հետագայում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս:

8. Նույն հավաքածոյին համար աշխատություն հանձն առնուք գտնել Աշոտ Ծախյան, և Նահապետ Նահապետյան, և Կարապետ Տեր-Գալստյան և Թադեոս Տեր-Դանիելյան սրբազաններու լուսանկարները: Այդ մասին Ղևոնդ սրբազանի բարյացակամության ալ դիմեք:

4. Ստացած եմ ժամանակին սեպտ. 18-ի նամակնիդ պ. Լևոն Երամյանի ձեռքեն, որ խոսեցաւ ալ տեղական լուրերու մասին: Ինքն շուտով մեկնելու էր Զմյուռնիա:

5. Ստացաւ նաև սեպտ. 24-ի ընդարձակ գիրերնիդ: Տրամադրություննիդ և զգացումնիդ բավական վերդոված կտեսնեմ. պետք չէ այնչափ շուտով այլալիջարկունքին գործիչներն մին ալ ժամանակն է. սպասելու է որ այն ալ իր գործությունը ցուցնե:

6. Ընեմարանի մասին գրածներդ ուղիղ որ միայնաբանական չեն. անունը հոգևոր էր դրված. մի՞թե անունն ալ պիտի փոխեն:

7. Բարենորոգմանց և բարեկարգությանց մասին ինն տարբեր տեսություններ կ'առնենք, որոնց հավանություն տալ պիտի դժվարիմ: Պետք չէ մոռնալ որ մեր եկեղեցւոյ հիմնական դրությունը չենք կրնար այլալիջ առանց զայն վտանգելու, և կ'վտանգենք ըստ իս, եթե positivisme սկզբունքը անտեսելով՝ պարզ rationalisme կընդունինք: Նպատակս վիճաբանություն չլինելով՝ այսչափը բավական կսեպեմ. և սիրելությունդ ալ կ'հորդորեն հիշել թե խոհեմ և հանդարտ քայլը ավելի կ'հառաջն, քան թե հախտուն վազը: Հնարավորը մտածե առ այժմը, և ոչ բացարձակապես ցանկալին:

8. Չեմ կարծեր որ այժմյան հայրապետությունը ընդարձակ և գիտական տեսությամբ ճոխացած ըլլա, մանավանդ թե կրնա սեղմալ գաղափարներ ալ մշակել. եթե ժամանակը դեռ հասած չէ ավելիին, պետք է լռել, և ոչ մտաց շփոթություն և գործի խառնակություն պատճառել: Իմ ծրագիրս բացատրելու իսկ պատեմ չեմ կարծեր ժամանակը:

9. Կլնեմ, թե Էջմիածնի մատենադարանին մեջ կ'գտնվի Քյոմյուրճյան տ. Կոմիտաս նահատակ քահանայն գրված և տպված (1600-ին մեջ) Գործք առաքելոցը՝ ոտանավորի վերածված, յուր տեսակին միակ օրինակը: Խնդրեմ որ փնտրողներ ընեն և լուր մը հաղորդեն: Ընտիր գործ մըն է եղեր կըսեն Սամաթիո քահանայք՝ նախնայց ավանդությամբ:

Կապաւեմ նամակիս պատասխանին ըստ որոշյալ հատվածոց:

Անտոնյան հարք շնորհակալությամբ ստացան մկերներդ. կ'պափագին միայն Տիմոթեոսի հրատարակված և հրատարակելի գործերն ալ ունենալ:

Ողջուն սիրո բարյացակամ ծանոթներու:

Կաթողիկոսի անվան շնորհավորություն հեռագրեր էի. պատասխան չստացա:

Մնամ սիրելությանդ աղոթակից

Մաղ. արք. Օրմ.:

Համար 12

Կ. Պոլիս, հերա 20 դեկտ. 1909

Սիրեցյալ Երվանդ վրդ.

Վերջին նամակիս պատասխանը չեմ ստացած. կ'հուսամ թե հասած և ծրարյալ շնորհավորականներն ալ նորընձա եպիսկոպոսներուն հանձնված են:

Կարապետ եպիսկոպոսնն նամակ մը առի, բայց իմն առնելն առաջ գրած էր:

Ինչչափ ալ Դուն լռեմ, ես նորեն Քեզի կ'դիմեմ իմ աշխատություններս տալու: Լուսանկարներ ուզած էի, այս անգամ ալ վիճակագրություն մը կուզեմ, որուն շատ պետք ունիմ: Ծառ ճիշտ ըլլալուն հարկ չկա, բավական է որ ճշմարտամամն և մերձավոր ըլլա:

Քեզի դյուրացնելու համար վիճակներու ցուցակը կազմեցի, հաջորդությանց կամ մասնավոր վիճակներու կարգով, և կ'սնդրեմ, որ դիմացի պունակներուն մեջ հայերու, կաթողիկոսներու, բողոքականներու, գյուղերու և եկեղեցիներու թիվերը նշանակես, և որչափ հնար է շուտով ինձի դարձնես:

Միանգամայն հիշես ինձի մեկ կամ երկու Մայր Աթոռն օրացույցներն հղել. վստահ չեմ կարծեր որ ուրիշ մտածող գտնվի:

Այս անգամ շատ գրելիք չկա: Դուրյանի հրաժարականի խնդիրը կշարունակե և նոր դահլիճին ձեռքով լուծվելու մնաց: Իմ խնդիրն ալ մեծ քայլ մը չառաւ. քերականի հարցաքննության ալ կ'անչվեցաւ և գացի, սակայն շատ հեռու ենք գործին վերջը տեսնել: Առայժմ միշտ քաշված կ'անքս կշարունակեմ և գրական աշխատությանց կ'զբաղիմ:

Կողջունեմ սիրով և կմնամ բարենմալ շնորհավորությամբ աղոթարար

Մաղ. արք. Օրմ.:

Վիճակք	Յուր խնդիր	Կարծիք	Բողոքական	Գյուղական	Եկեղեցի
1. Երեւան					
2. Նախիջևան					
3. Ալեքսանդրապոլ					
4. Կարս					
5. Տաթև					
6. Թեֆլիս					
7. Գորի					
8. Ախլցխա					
9. Գանձակ					
10. Շուշի					
11. Նուխի					
12. Շամախի					
13. Բազու					
14. Աստրախան					
15. Ղըզլար					
16. Քիշնե					
17. Նոր Նախիջևան					
18. Պետերբուրգ					
19. Մոսկվա					

Համար 18

Կ. Պոլիս, հերա 14 փետրվար 1910

Սիրեցյալ Երվանդ վարդապետ.

Ծառոնց էր մամակներդ չունեի, և միտքս շփոթած էր, ո՛չ թե լուրջանդ համար, այլ կացությանդ նկատմամբ, մամականդ որ անուղղակի լուրեր ալ կհասնեին հուզյալ վիճակիդ վրայով:

Հունվար 31-ի մամակդ կուգա հաստատել իմ շփոթությունն, որովհետև վաճառ թողնելու և հեռանալու կետը այնպես ես շեշտեմ, որ նույնիսկ կոչումդ թողլու միտք մը կտեսնեմ ծածկված: Արդեմ «Մշակ»-ի մեջ մեկ մամակդ էր աչքիս դպած, ուր ըսեր էիր, որ եկեղեցական կամ աշխարհական վիճակի մեջ նպատակիդ համար պիտի աշխատես:

Տակավին չեմ ուզեր հավատալ որ այդ ծայրահեղ որոշման համաձիս, և դուն ալ հետևի որ այն քանիներուն, որոնք կոչումնին թողլով՝ դիրքերնին ալ կորսնցնուցին և աննշանակ անհատներ դարձան: Կանոնական սկզբամար չեմ դատապարտեր կոչումնին թողուցողները. կուզեմ ազատության այդ դուռը բաց թողուլ, այլ միայն իբր տկարամիտներու դարձան ու ապաստան, և ոչ երբեք իբր գորավոր միտքերու գործնական միջոց: Կոչումը թողուլը ասպարեզե ու կոխվե խուսափիլ է, անհատական դյուրության միջոց է, բայց գործի հաջողության և նպատակի դիմելու փաստ չէ:

Քեզ անձամբ չեմ ճանչնար, և ոչ ալ տեսնված ըլլալը կհիշեմ. միայն ի հեռուստ լավ գաղափար մը կազմած եմ. մեկ մը, որ իմ ծանոթներուս՝ Կարապետի և Գարեգինի և Հուսիկի և Կոմիտասի և հենիկի մտերմ էիր, և երկրորդ որ լուրջ երկասիրությանց հեղինակ էիր: Այդ երկու փաստերը Քեզ իբր գորավոր հոգի մը ցուցուցին ինձի, և այժմ չեմ հանդուրժեր որ տկարամիտներու հետևող մը տեսնեմ Քեզ:

Վաճառքի մթնոլորտն հեռանա, և պահ մը առանձինն տեղ մը, հեռու վարչական գործերե, գրական գործերով պարապիս, կիմանամ, բայց ոչ կոչումն հեռանալով. այս կերպով հակառակորդներու իրավունք կուտաս ըսելու՝ «Դեմաս եղող զիս և սիրեաց գաշխարհ»*: Եկեղեցվո և եկեղեցական բարեկարգության վրա խոսելու իրավունքն զրկվիս և կարծել կուտաս թե եկեղեցվո վերանորոգման համար ճիգերդ ու խոսքերդ անձնդրության նպատակը քողարկելու համար էին: Ահա քեզի բացերաց, հաղաբար խրատներս, որովհետև Քեզի սիրեցի, և չէի ուզեր որ նախատվեիր ու բամբասակիր:

Իսկ եկեղեցվո վերանորոգման մասին, ինչ ալ ըլլա Քու ծրագիրդ, մի՛ կարծեր թե հանկարծ կրնաս բան մը փոփոխել, կամ թե որևիցե ոք կրնա այդ բանը իրագործել: Եկեղեցին քայլ առ քայլ զեղծումներու և ապալումներու ենթարկված է, և միայն քայլ առ քայլ կրնա հետ դառնալ: Պետք է որ հնարավորները և դյուրությունները ձեռք առնենք առաջին անգամ, որ անկե ետքը ուրիշ կետեր դյուրին և հնարավոր դառ-

նան և կարգը անոնց գա: Ես ալ իմ տեսություններս և գաղափարներս ունիմ, սակայն կհասկնամ, որ գաղափարը գործ չէ, և գործի համար գործնական կերպեր պետք են: Իմ տեսություններես մաս մը արտահայտած եմ գաղղիներն գրվածքի մը մեջ, գոր այսօրեր Փարիզի մեջ տպագրել տալու ետևն եմ, և որ հայոց եկեղեցվույն վրա զանազան գաղափարներ կպարունակե, սակայն զգուշացած եմ ամեն գաղափարներս միանգամայն հայտնել:

Ես Պողոսի սկզբունքն եմ, որ երբ հմար չէ ժողովուրդին հաստատուն կերակուր ջամբել, պետք է անոնց լոկ կաթ մատակարարել իբր տկար տղայոց*:

Իսկ գողությունն ու շողոքոթությունը, ասոնց պատճառ տվող տգիտության և տկարամտության հետ, մի՛ կարծեր, թե աշխարհքես պիտի կարենաս վերցնել. ցորչափ մարդկային տկար բնույթը կմնա ինչ որ է, պիտի մաքառիք մեղմացնել, հետևանքները դարմանել, ուղղությունները տարբերել. այլ իսպառ ջնջել տակավին մարդկություն չէ հաջողեր. ապագայն ալ անցյալն է կշափվի:

Եթե մեկը կա, որ այս ամենուն փորձառուն եղած է, այն ալ Քեզմե ավելի ես եմ, և համարձակորեն պիտի ըսեմ՝ «Եղերոք իբրև զիս»: Ամուր համբերություն, տոկուն երկայնատևություն: Եվ ես այս կերպով ավելի շահեցա, քան եթե որևէ հախտուն ընթացք ունենայի, կամ ծանր քայլ անեի:

Չերկարեմ այլևս. միտքս իմացար: Պատասխանիդ կսպասեմ:

Ներսես և Կարապետ եպիսկոպոսներն շնորհավորականներու պատասխաններն առի, իսկ լուսանկարներու մասին՝ չեմ գիտեր թե ինչ միջոց գործածեմ հավաքածույս լրացնելու համար:

Գիտես որ Էջմիածնի գրադարանը ինչ առաջ իսպառ ալ փակ էր, և ես պատճառ եղա զայն մատչելի դարձնել: Հարկավ մատենադարանավետին թափառումները կավարտի, և նորեն գործը կդյուրանա:

Տիմոթեոսի Քո առաջին հրատարակութենն Անտոնյանց հղվածներու մեջ չկար. ուստի երկրորդի հետ առաջինն ալ կցել հաճիս:

Ստացա Մխիթար վրդ.-ի, այժմ եպիսկոպոսի, հրատարակած վիճակագրությունը. ի՞նչ անել, կերպով մը յուս կերթամ:

Ազգային հիվանդանոցի ընդարձակ օրացույցներն յոթը հատ ճարեցի այս ու այն կերպով, և հետզհետե կհղեմ ցուցած հասցեիդ հսկեքսանդրապոլ: Ամենուն մեջն ալ քիչ ու շատ օգտակար տեղեկություններ կրնար քաղել: Քննասերի ծիսական բառարանը իմ գրվածն է:

Վերջն առաջի խոսքիս դառնալով՝ կսպասեմ Քեզն մխիթարական և հանդարտեցուցիչ պատասխան մը ստանալ, որպեսզի այս երեսնն ալ վիշտ մը զգացած չըլլամ: Քու լուրջանդ բացատրությունը Կարապետ եպիսկոպոսն խնդրած էի, երբ որ Դուն չէիր ուզեր խոսի:

Ողջունիվ սիրո և համակիր զգացմամբ մնամ աղոթարար

Մաղ. արք. Օրմանյան:

* Բ Տիմոթեոսի, Դ 9:

* Ա. Կորնթացոց, Գ 2:

Համար 14

Կ. Պոլիս. 8 դեկտեմբեր 1910.

Բարեսեր ուսուցիչ
Երվանդ Տեր-Մինասյանց

Ալեքսանդրապոլ

Սիրելի.

Բարգեն եպիսկոպոս, Կովկասի ուղևորություններն դատնալով հանձնեց ինձի հո աշխատասիրությամբ կատարված Իրենիոսի հատորը՝ հաղորդելով միանգամայն սիրալիի ողջույնները: Այդ առթիվ լսեցի նաև առողջությանդ և հանգստությանդ լուրերը, տուն տեղ եղած ըլլալդ, արժանավոր զուգակցի մը միանալդ, և զավակի ալ տեր եղած ըլլալդ: Փափագող՝ ինձ սիրելիներուն բարօրութեան և երջանկության, բավական ազատամիտ՝ յուրաքանչյուրին յուր բարօրությունը յուր գիտցած կերպով իմանալու համար, ապահովված հեզի համար պատվալոր միջավայր մը կազմած ըլլալուդ համար, առանց վարամաման կիսնակցիմ հեզի, որ փափագիդ համեմատ կյանք մը կրցեր ես կազմել, և կմաղթեմ, որ հաջողությամբ, բարօրությամբ և պատվով գորացած կենցաղ մը ունենաս միշտ: Այդ տեսություններն զուգակցիդ համար ալ են, որուն մասին միշտ նպաստավոր լսած եմ, և միասին ու սերնդյամբ երջանկություննիդ կմաղթեմ:

Հրատարակությանդ արժեքը հայտնի է, կրկնել պետք չունիմ. նախընթաց երկասիրությանդ թիվը կավելցնե: Պիտի շարունակի՞ն արդյոք... Անտոնյանց համար օրինակը տեղը հատուցի:

Առողջությունն լավ է, կացությունն միշտ առկախ բան մը ունի, իսկ ես այդ վիճակը կդարձանեմ գրական աշխատություններով:

Այս անգամ այսչափով կփակեմ: Եթե պատասխանե՞ս թղթակցությունը կշարունակեմ:

Օրհնաձայն ողջունիվ հեզ և հոյոց մնամ

Մաղ. արք. Օրմ.:

*
* *

Համար 15

Բերա, 18/26 փետրվար, 1911
Ազնվամեծար Երվանդ Տեր-Մինասյան
Ալեքսանդրապոլ

Սիրելի.

Հունվար 7-ի թվակիրդ ստացա: Ուրախ եմ ընտանեկան երջանկությանդ համար, կօրհնեմ բոլոր տունըդ, կմաղթեմ որ արտաքին միջոցներն ալ դյուրացնեն Ձեր բարօրությունը:

Գլխավոր հեզ զբաղեցնողը կաթողիկոսական պաշարն է, որուն մասին կերևի թե մտադիր եք ասպարեզ նետվիլ, ինչպես Գարեգին վրդ. ալ գրած էր:

Բայց ըսելով՝ ես ոչ հույս ունիմ որ հաջողիք, և ոչ ալ փափագող եմ որ հաջողիք: Հույս չունիմ, վստահ զի բարձրաստիճանները մեկ կողմեն, և կուսակցականները մյուս կողմեն, ամեն միջոց, մինչև իսկ խարդավանք և բռնություն պիտի գործածեն, որ Օրմանյան չըլլա: Արդեն առջի անգամեն ամբաստանության անուղիղ և ապօրինի միջոցը գործածվեցավ, և դեռ կտևե, և պիտի աշխատվի որ դեռևս տևե, գոնե տարի մը եւ: Ասոր դեմ, չեմ տեսնար ույժ մը որ կամ այդ խաղը վերջացնել տա, և կամ այդ խաղը առ ոչինչ համարի:

Իսկ փափագ ալ չունիմ, որովհետև առջևնիս շենք շնորհք պաշար պիտի բացվի, և ես ալ այլևս 70-են ետքը պատերազմիկ ըլլալու միտք չունիմ:

Այս տեղին գալով՝ այժմ բոլոր միտքեր պատրիարքությունով գրավված են և դեռ կաթողիկոսով չեն զբաղվիր: Կուսակցականներ, հարկավ, Օրմանյանի դեմ են, և առաջի ույժերնին թեպետ նվազած, բայց ազդեցությունը կորսված չէ, մանավանդ երբ որ նեղ ժամուն թիբն ու բռնող ձեռք առնեն: Խոհականներն ալ ազդու գործունեությունն հեռու են, և ինչ ույժ որ ունին տեղական գործերու իսկ չբավեր: Հետևաբար առ այժմ կարևոր բան մը չկա այստեղ. լրագիրներն իսկ անով չեն զբաղիր:

Ինձի գալով՝ առողջությունն լավն է, ոչ հիվանդության հետք ունիմ, և ոչ հիվանդության ակնզբնավորություն. ամեն առթի մեջ տարիքիս պահանջեն շատ ավելի ծիր, ավելի կայտառ, և ավելի առողջ եմ: Կանոնավորապես կաշխատեմ գրասեղանիս վրա.

օրը մինչև երկու ժամ քաղելով պտույտ կընեմ հերաքի վերին և քիչ քնակված կողմերը, երբ օդը ներե. բայց քաղաքամիջի չեմ երևար, այցելություն քնակ չեմ տար, եկեղեցին ալ դժբախտաբար արգելված եմ մեր պատրիարքներու շնորհիվ, որ Օրմանյանի մեջ տեղ ելելու դուռ չբացվի:

Երբ որ տեղեկություն մը ուզես, որոշակի նշանակե կետը, վստահ ընդհանուր տեղեկագիր գրելու դյուրություն չեմ գտար:

Ողջունիվ սիրո հեզ և հոյոց մնամ աղոթարար
Մաղ. արք. Օրմ.

*
* *

Համար 16

Բերա, ապրիլ 18/1 մայիս 1911.
Մեծարգո Տիար Երվանդ Տեր-Մինասյանց

Ալեքսանդրապոլ

Ծառ մեծ ոգևորությամբ գրված էր մարտ 31-ի նամակդ: Ես ալ կընդունիմ որ մարդ մը իր գործին եռանդյամբ փարելու է, եթե կուզե բան մը ընել. բայց առանց հեզ վհատեցնել ուզելու պիտի ըսեմ, թե դիմացինին ույժն ալ կշռելու, և ըստ այնմ գործելու է: Ձեզի դեմ եղողներ իրենց միջոցներուն մեջ չեն խղճեր ստություն ու գրպարտություն ու բռնություն ալ գործածել անխտիր: Եվ որովհետև անոնք հիմնական աշխարհքին մեջ իրենց ույժն ու ազդե-

ցությունն ունիմ, հետևաբար հարկավոր ավելի զորավոր կենսական, և իրենց նպատակին հասնելու հավանականություն կվայելեն:

Այս կշռեմ ոչ թե Քեզ կամ Ձեզ վիստեցնելու, այլ իմացնելու համար թե ես ինչպես ըմբռնած եմ իրականությունը: Հետևաբար ըստ այնմ ալ կազմած եմ իմ տրամադրությունները: Պաշտոններու փափագող ու հետամուտ չեմ եղած, և ասկե ետքն ալ տարբեր չեմ կրնար ըլլալ. քացք միանգամայն փախչող ու խուսափող ալ չեմ եղած, և այս միտքս ալ մինչև այսօր փոխած չեմ: Գործ մը ստանձնելէն ետքն ալ տկարանալու չեմ գիշանիր: Փառք Աստուծո, տակավին միտքս ու կամքս ալ, մարմինս ու ջիղերս ալ դեռ զիս թողած չեն. և կհուսամ թե գործակիցներ ալ ունենալու կրողավորովիմ. և այն ատեն ալ այնպես կխորհիմք: Բաց առայժ իրականությունն ալ աչքն չեմ հետացներ, և ունայն հույսերով չեմ օրորվիր:

Ինչ որ կովկասյան թերթերուն մեջ կնկատեմ, «Մշակին» մեջ դեպ Օրմանյան կծու հակառակության շեշտը թողած ըլլալն է: Արդյոք հեղաշրջումի մը նշան է: Ամեն առթի մեջ Կովկասի կարծիքին վրա ազդող ույժ մըն է:

Իմ գիրքերես գաղղիներէնին հայերէնը տպագրելու վրա եմ, և անկե Քեզի կղրկեմ: Կկարծեմ թե շատ լավ տպավորություն ալ կրնա հառաջ բերել նույնիսկ ազատականներու վրա: Իսկ Ավետարաններու համապատասխան չեմ գիտեր թե Քեզի կրնա շահագրգռել. եթե ոչ այն ալ կրնայի դրկել: Ծառ մեջտեղ ինկած ըլլալու ձևեր չեմ ուզեր տա ինձի:

Օրմանյանի ողջույն սիրելվույդ և հուկիներուդ և մնամ միշտ աղոթարար

Մաղ. արք. Օրմ.:

Պարոն Կոստանյանի* ըսե, որ ապրիլ 3-էն գրածը եկավ, անկե առաջ գրածին կապաւեմ, որ պատասխանեմ:

* Խոսքը հւլտնի հայ բանասեր գիտնական Կարապետ Կոստանյանի մասին է, որը ճեմարանի տեսուչ էր եղել 1894/5—1898/9 և 1902/3—1904/5 ուս. տարիներին և որպէս ճեմարանի ուսուցիչ Օրմանյանի հետ միասին պաշտոնավարել էր այդ հիմնարկում:

Համար 17

հերա, 19 հունիս 1911.

Արգո սիրելի ուսուցիչ Եր. Տեր-Մինասյանց

Ալեքսանդրապոլ

Պատասխաններու ուշանալու մասին դիտողություն չունիմ: Չեմ կրնար ենթադրել, որ առևտրական գործերու ոճով օրը օրին թղթակցություն պահվի:

Օրվան խնդիրի մասին գրածներդ կարդացի. ես միշտ այն համոզման մեջ եմ, թե միջոցները չխըտրողներ ավելի ընդարձակ ասպարեզ ունին, և անոնց դեմ գործողներ շատ ավելի ժրույթան պետք ունին:

Այստեղ ալ կա միջոց չտխրողներու խմբակը, որոնց կծայնակցին ինքզինքնին առջև մղելու փափագողները:

Այդ մասին մտադրությանդ կհանձնեմ Ազատամարտի թիվը, ուր քսու միտքերը հայտնապես կցուլան, և կհիշեցնեն ընդհանուր ժողովին երկարելու ջանքը, որպէսզի գոնե օգտակար ժամանակին մեջ Օրմանյանի գործը չվերջանա, և բացատրական զենք դառնա:

Հաւաս Մեյլանի հողվածները «Մշակ»-ի հունիս 8-ի համարին մեջ: Նա կուզէ օգտվիլ Քու գրախտականէդ Համապատասխան վրա, և հակառակություն կգտնէ եկեղեցականաց ամուսնության մասին հայտնած կարծիքիս և հաղիշեցի քահանաները արգելելու մեջ: Համապատասխան կրնար ինքն ալ տեսնել և փնտրել թե ինչ է գրվածը և օղին վրա շենք չի շիներ: Ես միշտ ազատ թողած եմ ամուսնությունը, այլ եկեղեցական չմնալու պայմանով, և ասկե չեմ շեղած. «Հայոց եկեղեցի»-ին մեջ ալ շեշտած եմ: Հարկավոր լուր չես կենար, քանի որ Քու անունդ ալ խառնած է: Նա ի բնէ ոչ միայն հյուրասիրություն է տեսեր, այլև գրածներուն հակառակ կարծիքներ հայտնել է:

Գարեգին վրդ. հոս է: Ազգային Մատենադարանի գրչագիրներ կարպտե:


Կոմիտաս վրդ.-ի Գահիրէն մեկնելը դեռ չլսեցի:

Համապատասխան և Հայոց եկեղեցի կղրկեմ:

Ողջույն սիրո սիրելությանդ և ընտանիքիդ:

Մաղ. արք. Օրմ.:

(Ծարունակելի)



ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

ԺԲ ՀՈՒՍԿ ՔԱՎԱՐԱՆԸ

I.—Դարման մուրալու համար

Հայ եկեղեցին քավարան չունի։ Շատ չի շարշարեր իր մեռելները։ Ճակատագիրը սակայն հատ մը ստեղծեց Կոմիտասին համար։ Բավ չանպեղ չորս տարիներու անոր Գողգոթան, և ուզեց որ խաչը շալկած ան դեռ պտտի։ Զայն Փարիզ բերավ՝ խաբելով որ դարմանելու կբերե։ Կոմիտաս, ինքը, չհավատաց։ Մենք էր որ պիտի խաբվեինք անգամ մը ևս։

Զորիցս Փարիզ էր եղած Կոմիտաս, 1901-ին, 1906-ին, 1911-ին և 1914-ին, ու ամեն անգամուն ալ գացած էր լույս-քաղաքը հայ երգին պանծացման համար, ու ամեն անգամուն ալ հաղթական դարձած էր ետ։ Հիմա, հինգ տարի հետո, վերջին անգամ մըն ալ զայն կտանեին Փարիզ դարման մուրալու իր ցավին համար։

Ավա՛ղ, ան կերթար իր տառապանքը շարունակելու համար նոր միջավայրի, նոր շրջապատի մեջ, միշտ շարունակելով զգալ այդ տառապանքը։

Ընդարմացած չէր իր հոգին որպեսզի չզգար զայն, ինչպես չէր եղած Պոլիս գտնված տարիներուն ալ։ Մաղհար Օսմանի խնամքին տակ եղած օրերուն՝ գիտակցության այն պահերուն մեջ, զորս ան կապրեր հաճախ, ան

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի ՊՄ Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի ՊՄ Ա-Զ-ից, Ը-Ժ-ից, 1967 թվականի ՊՄ Գ-Զ-ից, 1968 թվականի ՊՄ Ա-Դ-ից, Է-Ժ-ից և 1969 թվականի ՊՄ Գ-Դ-ից։

չարշարվեր էր հոգվույն խորունկեն։ Հիմա, Փարիզի մեջ, միևնույն ողբերգությունն էր։ Գիտակցության այդ պահերը պիտի ունենար և այնտեղ, հետևաբար հոգեկան միևնույն շարշարանքները։ Ու բոլոր այն այցերուն՝ զորս կու տային իրեն զինք սիրողները, կամ իրմով հետաքրքրվողները՝ սփոփանքի առիթներ կարծելով հայթայթած ըլլալ իրեն, իր հոգեկան տվայտանքներն է որ հաճախակի կդարձնեին մարդիկ։

Արդարև Փարիզի մեջ ևս ան քեն էր ըրած մարդոց, առավելապես իր ծանոթներուն և իր երեկվան բարեկամներուն։ Ու մարդիկ հաճախ առիթ կու տային որ բորբոքի իր մեջ այդ քենը, և ավելի ևս տառապի։

Փարիզ զրկեցինք զայն՝ դարման ճարելու հույսով։ Իրականին մեջ շարունակեցինք տառապանքն իր զայն։

II.—Վիլ Էվրարի բուժարանին մեջ

Պոլիս երբ 1919 մարտ 19-ին Կոմիտասը Փարիզ կղրկեր, պահ մը ինքզինք ազատած կարծեց հոգեկան բեռն մը։ Ան իրապես կհավատար թե հրաշք կրնա գործել Փարիզը, ու անձկությամբ կսպասեր բարի լուրերու։

Մեր հույսը դրած էինք Կոմիտասի Փարիզի բարեկամներուն, և առաջին հերթին Մարգարիտ Բաբայանի և Արշակ Զուպանյանի վրա, երկու մտերիներու՝ որոնք տասնյակ տարիներ իրենց գուրգուրանքն անպակաս էին ըրեր հայ մեծ արվեստագետին հանդեպ, և զորավիճ էին եղեր անոր առաքելության։ Անոնք, իրենց կողքին, սրտցավ բժիշկ մը ևս ունեին հանձին Պողոս Քոլոլյանի։

Սակայն այն օրերու Փարիզը ևս անճրկեցավ պահ մը։ Մանր էր բեռը զոր պիտի

առնելու իր ուսին, որովհետև հիվանդը՝ որ իր հոգածության կրկնվելը՝ ահապոր պատասխանատվության առջև կոչվելու դիմելու ֆորմա մը ըրին նախ դեմոկրատիկ եկեղեցի մեկ խուցը՝ ուզելով հոն դարձանել զայն, հետո ստիպվեցան բուժարան մը դնել:

Հետագային մամուլին մեջ լույս ընծայած իր մեկ լուսաբանության ընթացքին, որու մասին դեռ պիտի խոսինք, Կոմիտասի խնամատար հանձնաժողովը կանգնադառնար նաև վարդապետին Փարիզ փոխադրության պարագաներուն ու կրքեր:

«Հանձնաժողովս չէ որ վարդապետը հիվանդանոց դնելու առաջին գաղափարն ունեցած է, այլ Պոլսո հայ բժիշկները, և Պոլսեն է որ՝ պատրիարքարանի ալ հանձնադրույամբ՝ զայն ղրկած են Փարիզ որպէսզի դարձանվի այդ տեսակ հիվանդությանց հատուկ բուժարանի մը մեջ, հուսալով որ ֆրանսացի մեծ վարդապետներու հսկողության ու խնամքներուն տակ անոր բուժումը կարելի կըլլա ձեռք ձգել:

Փարիզ հասնելուն, անիկա առաջնորդվեցավ հայոց եկեղեցին. խնդրվեցավ իրմե երիցատան վերի հարկը ելլել (որ պատերազմեն առաջ տարի մը հյուրընկալված և աշխատած է), սենյակ, անկողին տրամադրվեցավ իրեն. մերժեց, ու համառեցավ քանի մը օր բակին մեջ առանձին պատնելով անցնել իր ժամերը, չոր ու նեղսիրտ պատասխաններ տալով իրեն եղած ամեն սիրալիր խոսքերուն, և գիշերը խորհրդարանին մեջ գետինը կպռակելը»:

Կացութիւնը կկնճոտներ. Փարիզ փոքր գաղութ մըն էր դեռ այն օրերուն, ու մարմին մը չկար որ Կոմիտասի հոգն ստանձնէր: Վարդապետը սիրող քանի մը անձեր քով-քովի եկան այն ատեն, ու խնամատար հանձնաժողով մը կազմեցին, որուն կորիզը օր. Բաբայանն ու Չոպանյանն էին և որուն շուտով մաս պիտի կազմէր պատվական Աստվածատուր Հարենցը ևս, ու հետզհետեւ ուրիշներն ալ Կոմիտասի սաներն և զայն սիրողներն, իրենց գուրգուրանքին ու հոգածության տակ պահելու համար հիվանդ արվեստագետը, մինչև անոր մահին ալ հետո:

Հանձնաժողովը 1928-ին մամուլին հանձնած իր հայտարարության մեջ կըսէր նաև.

«Այդ միջոցին է որ կազմվեցավ Կոմիտասյան խնամատար հանձնաժողովը, բաղկացած վարդապետը խորապես հարգող անձնավորություններէ, որոնց ոմանք անոր վաղեմի ու մտերիմ բարեկամները կամ զինքը պաշտող աշակերտներն էին, և հանձնաժողովը, խորհրդով մասնագետ բժիշկ Քոլոլյանի և համախոհության մը բժիշկ Համո Օհանջանյանի (որ այն ատեն Փարիզ կգտնվէր և անդամ էր այդ մարմնուն), որոշեց, համա-

ձայնելով նաև Պոլսեն եկած հանձնարարության, վարդապետը դնել Վիլ Վիլարի ջլախտաբուժարանը, որ Փարիզի այդ կարգի լավագույն հաստատություններն մին է, և որուն պայմանները բավական բարձր են: Մեր բարեկամը հոս ունէր առանձին բնակարան, զմայլելի պարտեզներու մեջ, դաշնակ, թուղթ, գրիչ դրված էր իր տրամադրության տակ: Բուժարանին բժշկապետն ու պաշտոնեւորները գիտեին թե ո՞վ է այդ հիվանդը և զայն կպաշարեն հարգանքով, գուրգուրանքով, խնամքով. երեք տարի մնաց հոն, և սակայն դժբախտաբար ոչ մեկ բարեկամում հառաջ եկավ իր մտավոր վիճակին մեջ: Զինքը հարգող հայրենակիցներ, ու նույնիսկ իր լավագույն բարեկամներն ոմանք, որ այցելեցին իրեն այդ միջոցին, իրմե ընդունվեցան կամ զայրացելու ջղայնություններով, կամ մեղմ ցուրտ վերաբերմունքով. ան միշտ քանի մը հակիրճ բառերով կզգացներ թե կուզէ որ զինքը մինակ ու հանգիստ ձգեն. երբեմն, պատահած է որ ավելի բարեհաճ ու նույնիսկ զվարթ տրամադրություն ցույց տված է, երբ իրեն այցելած են՝ օրինակի համար՝ տիկ. Զապել Փանոսյան կամ օրիորդ Պյոլպյուլյան»:

Իրավ ալ Վիլ Վիլար դրված առաջին օրն իսկ շատեր փորձեցին այցի երթալ իրեն, ու քիչեր միայն բախտավոր եղան: Զգիտներ թե ինչպես ընդունեց Կոմիտաս իր երեկվան մտերիմները, որպիսին էին օր. Բաբայան, Չոպանյան և Հարենց. բայց կերևի թե Կոմիտաս չէ վճռած Փարիզի հայոց հոգևոր հովիվը:

Վոսմշապուհ արք. Քիպարյան, Փարիզի հայ եկեղեցիով վաղեմի հովիվը, որ 1901-ին սկսելով մոտ բարեկամ էր Կոմիտասի, և հետագային նախագահ էր Կոմիտասի խնամատար հանձնախումբին՝ երբ ան դարձանվելու տարված էր Փարիզ, բուժարան տված իր այցելությանց մասին հետևյալը պատմած է Աղալնի Մեսրոպյանին 1926-ին էջմիածին գտնված օրերուն.

«Օր մը երբ հոգեբուժարան գացի, իր կվարտեստով այնտեղ էր նաև քու փոքրիկ ջութակահար եղբայրը՝ Թորգոմը: Ինձ արգիլեցին Կոմիտասին մոտենալ: Պարզվեցավ, որ հոգեբուժարանի բժշկապետը փորձ մը պիտի կատարէր այդ օր: Հոգեբուժարանի պարտեզին մեջ, ծառի մը տակ Կոմիտաս հանգարտ նստած էր: Թորգոմի կվարտեստը մեղմ կերպով սկսավ նվազել Շուքրեթի մեկ եղանակով: Հազիվ էր վերջացած առաջին մասը, երբ հանկարծ, նստած տեղեն վեր ցատկեց Կոմիտաս, և ծառին ճյուղերը կտրտնելով սկսավ պոռալ, որ այլևս չէր ուզեր լսել: «Բավ է, բավ է,—կպոռար ան,—ամոթ ձեզ... ի՞նչու



մի տանջվեք... Ես կարիք չունեմ դրանց... Ուր եք կորցրել դուք իմ երգերը...»:

Ուրիշ օր մը, երբ հաջողեցա երթալ ներս ու կարոտագին փաթաթվել իմ սիրեցյալ Կոմիտասին, անիկա պահ մը վրաս տարօրինակ հայացք մը ձգելի վերջ՝ երկու ձեռքով բռնեց ուսս և ցնցեց՝ ըսելով. «Ասա տեսնեմ, անմահ է այն գործը, որի համար ես մեռա...»: Փորձելով թաքցնել իմ հուզումս ու սարսափս՝ «Դուն անմահ ես, Կոմիտաս...», — շնչացի... և զգացի, որ դանդաղորեն կթուլանային ուսերուս մատները իմ ուսիս վրա... և հետո՝ կարծես մոռնալով և՛ իմ, և՛ իր սեփական գոյությունը, Կոմիտաս իր դատարկ հայվածքը սեռեց հեռուն...

Վերջին հանդիպմանս, քանի մը ամիս առաջ, Կոմիտասին՝ նախորդ այցելությանս անոր ըրած խնդրանքին համաձայն, պիծամա մը տարած էի՝ որպեսզի «շմբեք»: Պիծաման երբ երկարեցի անոր. «չե՞ս մոռացել, հա՞...»: Բայց իզուր ես բերել այդ, իզուր... ըսավ, և տարօրինակ ժպիտ մը դեմքին ավելցուց. «Թող ողջ մնա իմ ժողովուրդը... ես նրա սրտում երբեք չեմ մոռնի...»:

Էվարյի բուժարանին մեջ Կոմիտասի ուրիշ այցելուներ ալ անշուշտ եղած են, բայց հազվադեպ եղած է որ Կոմիտաս սիրալիր ըլլա դեպի այցելուները: Գրեթե միշտ վռնտած է զանոնք բովեն: Բժիշկ Ալլահվերտի որդի, օրինակ, սապես կպատմե իր այցը Կոմիտասին.

«Առաջին այցելությունս ըրած եմ իրեն էվարյի բուժարանին մեջ տ. Վոսադյանի սրբազանին (այն ատեն քահանա) և բարեկամիս Մերուժան Պարսամյանի ընկերակցությամբ:

Շաբթվան մեջ ամրան տաք օր մըն էր երբ այցելության գացինք: Ընկերակցությամբ մասնավոր պահապանի մը, ամենեն առաջ ես ներս մտա և տեսա որ հայր սուրբը ծունկերը թևերուն մեջ առած, կծկված, գդակ մը գլուխը և մտածկոտ ձևով մը ընկողմանած էր դիվանի նմանող բազմոցի մը վրա:

Սենյակին մեջ, բացի այդ բազմոցեն, կար երկաթյա մահճակալ մը, պարզ աթոռ մը և պարզ սեղան մը որուն վրա կգտնվեր շիշ մը ջուր, գավաթ մը և վարդապետական իր մասնավոր փակեղը:

Անմիջապես որ վարդապետը դիս տեսավ՝ «Դու՛ս եյիք, Բանկաթիբի բժիշկին տղան չե՞ս միթե՞, դո՛ւս, ես բժիշկի պետք չու-

նիմ», կրկնեց պոռալով և անմիջապես դիվանեն վար ցատկելով աթոռը առավ՝ վրաս նետելու կամ հարձակելու համար:

Զինքը չարկացնելու և ավելի չզրգուելու համար, անմիջապես դուրս ելա: Տեսա որ ընկերներս հայր սուրբի պոռալու ձայնեն հաճախած՝ հեռացեր և պարտեզին հանդիպակաց կողմը անկյուն մը կեցած՝ դուրս ելելուս կսպասեին:

Զարմացա վարդապետին սուր հիշողությանը վրա: Մեկ անգամ միայն դիս նշմարած էր և այն ալ քանի մը վայրկյանի տևողությամբ, Պոլիս, Բանկաթիի պողոտային վրա, մեր տան դրան առջև երբ պիղալի պաշտոնատեղիես նոր ժամանած՝ կառքեն վար կիջնեի: Արդեն ամեն անոնք որոնք վարդապետին այցելած են, զարմանքով կրկնած են անոր հիշողության կարողությունը: Եվ այդ կարողությունը միշտ անվթար մնացած էր անոր քով, ինչ որ բժշկական տեսակետով զարմանալի կթվեր:

Կոմիտասի քենը, ինչպես հիշեցինք քանիցս, իր երեմնի ծանոթներուն հանդեպ էր առավելապես: Զանոնք կվտարեր դուրս՝ երբ այցելել ուզեին իրեն: Զեր խնայել նույնիսկ իր երեկվան մտերիմներուն: Շատ ալ բախտավոր չեղավ, օրինակ, Փանոս Թերլեմեզյանն ալ երբ Փարիզեն անցնելուն ուզեց տեսնել իր սիրական վարդապետը՝ որուն այնքան մտերիմն էր:

«1921 թվի մարտին, — կպատմե ան, — մի առավոտ ուզեցի Կոմիտասի հետ անցկացնել: Մտալովի հետ միասին իր սենյակը մտա: Պառկած էր, վեր ցատկեց. ես էլ իր վզին ընկա և սկսեցի համբուրել իրեն: Նա երեսներս բռնեց և փաղաքշական ապտակներ տալով ասաց. «Արի քեզ ծեծեմ, արի քեզ ծեծեմ»: Հետո «Նստիր» ասաց, ու ինքն իր առողջ ու աշխույժ մարմնով ոտքի մնաց ու սկսեցինք խոսիլ:

— Կոմիտաս, — ասացի, — գիտեմ չափազանց վշտացել ես մարդկանցից, իրավունք ունես, ես էլ եմ վշտացած, սակայն չի կարելի հավիտենապես խռովել: Մենք բոլորս անհամբեր քեզ ենք սպասում:

Սակայն նա բառերի ստուգաբանություն և փրկսոփայություն էր անում: Հետզհետե ավելի լրջացավ: Նկարչության մասին հետևյալն ասաց. «Պետք չէ. հարկավոր է միայն լույս և բնություն»: Առաջարկեցի միասին Սևան գնալ:

— Ի՛նչ ունեմ այնտեղ, — ասաց: Էջմիածնի մասին էլ անտարբեր մնաց:

— Գնանք դուրս ման գանք, — ասացի:

— Այստեղ շատ լավ է, — ասաց:

Կյանքի և մահվան մասին խոսելիս՝ ասաց, որ մահը գոյություն չունի և իսկույն սենյակի դուռը բանալով ավելացրեց. «Սա

¹ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 329.

² Կոմիտաս կահնարկի բժիշկ Հովհաննես Ալլահվերտի, որ իր հարեան էր և որ նույնպես ձեռքավորված և քրոն էր դրված իր հետ, իրեն նման ետ դառնալու համար քրոնեն, շնորհիվ իր ունեցած կապերուն իթիհադին հետ, որուն անդամ ալ էր:

գերեզման չէ, ապա ի՞նչ է»: Կոմիտասին հանգստացնելուց հետո ասացի. «Գնամ, չձանձրացնեմ»:

— Զէ, եկել ես, նստիր, էլ ո՛ւր ես գնում: Ասացի, որ իր բարեկամներից մեկին իրեն մոտ են բերելու, որը եկել է Փարիզ դերասանություն սովորելու:

— Ո՛ւշ, ինչի՞ է պետք այդ արվեստը:— Եվ Ազաթանգեղոսից մի քանի խոսք ասաց, և երբ չափազանց խրթին լինելուն համար սկսեցի մտածել, նա անմիջապես բացատրեց, — խողերը երբ աղբաջրի մեջ կլողան, կարծում են, որ լավ լողանք են անում:

Խոսքիցի իր աշակերտների մասին, ուրախացավ, որ եկել են Փարիզ սովորելու:

Հարցրի՝ հայ երաժշտությունն էլ ավ, թե եվրոպականը: «Շղբայր (բարկացած), դուն ուզում ես ծիրանից դեղձի համ առնել. նա իր տեղն ունի, մյուսը՝ իր»:

Հարցրի. «Կերգե՞ս»: «Այո», ասաց: «Դե, Կոմիտաս ջան, մի բան երգիր ինձ համար»: «Զէ՛, հիմա ես ինձ համար եմ երգում և այն էլ շատ կամաց»:

Մի կես ժամ էլ դեսից-դենից խոսելուց հետո հանկարծ խռովեց. դուռը բաց արավ և զնաց երեսը կայրեց պատուհանի ապակուն ու էլ լխոսեց: Հագնվեցի, մնաս բարև ասացի և առանց պատասխան ստանալու, դուրս եկա՞մ:

...Վիլ էվարի սուլյն բուժարանը, ուրկե պահ մը հրաշք հուսացեր էին իր բարեկամները, իրականին մեջ չարչարանքի նոր կայան մը եղավ Կոմիտասին համար, որ այնտեղ ևս պիտի շարունակեր առել մարդիկը, ու բեն ընել աշխարհի դեմ:

III.—Երբոր բացիճք իր սնդուկները

Մենք, ասդին, Պոլսո մեջ, մենք ևս հրաշքի մը լուրերի կսպասեինք Փարիզեն, իսկ այդ լուրը միշտ կուշանար:

Գինովության մեր օրերն էին, ու Պոլիս, բովանդակ հայ ժողովուրդին հետ, բռնկած էր անհնարին երազներով ու հույսերով:

Պետք ունեինք մենք Կոմիտասին: Ու ան, ավա՛ղ, մեր մեջը չէր:

Հայ ժողովուրդին հետ սգավոր էր նաև հայ երգը: Հույսերու և ցնորքներու այդ պահուն Կոմիտաս, այո, մեր մեջը չէր: Զայն խելը էին մեզմե իսպառ: Եվ սակայն նույն այդ պահուն, հանկարծ, «Կոմիտասի սաներ»-ը անուշ սփոփանք մը կըլլային մեզի: Վեց էին եղեր թիվով անոնք ի սկզբան, բայց մեկը, Արտաշես Ապաճյանը, որ Ղալաթիո

հայ եկեղեցվո երգեցիկ խումբը կվարեր, մահացեր էր պատերազմին: Մնացյալները, Միհրան Թումաճանյան, Բարսեղ Կանաչյան, Վարդան Սարգիսյան, Հայկ Սեմերճյան և Վաղարշակ Սրվանձության, զինվորութենի արդեն դարձած, գործի կլծվեին իրենց տարաբախտ վարպետին տեղ, փորձելով անոր առաքելությունը շարունակել իրենց համեստ ուժերով: «Կոմիտասի նախկին սաներ» անվան տակ խմբակ մը կազմակերպեցին, մեկ քանի համերգ սարքեցին, լույս ընծայեցին երգերու քանի մը տետրակ, հետո արտասահման անցան գրեթե բոլորն ալ, մեկ կողմն իրենց երաժշտական կրթությունը հառաջ տանելու, և մյուս կողմն հայ երգը ծավալելու հայ սփյուռքի մեջ, բոլորն ալ պատիվ բերելով իրենց վարպետին:

Պոլիս դարձավ երգի կարոտ մնաց:

Ան սակայն վերջին անգամ մըն ալ պիտի բռնկեր քիչ հետո: Գեպեղը հայ արվեստագետներու հոծ թիվ մը համախմբեր էին Պոլիս, որոնցմե Հայ Արվեստի Տունը պիտի կազմվեր 1920-ի վերջերը՝ Հովհաննես Թումանյանի մեղ աջցելած օրերուն: Այդ արվեստագետներուն մեջ երաժիշտներ ալ կային: Գեորգ Յաղուպյան, որ առենին Շան-զէլիզի թատրոնին նվագախումբը ղեկավարեր էր, մեր մեջն էր հիմա, և մեծ նվագախումբ մը կվարեր. եվրոպացի դասականներն էին սակայն իր երգացանկը: Գրիգոր Սյունի և Հարություն Մեհրաբյան, որ Կովկասեն կու գային, խանդավառություն բերին պահ մը իրենց կազմած երգախումբերով և սարքած համերգներով, անգամ մը ևս սիրցնելով հայ երգը:

Բայց Կոմիտաս միշտ հոգ մը կկաղմեր մեր մտածումին մեջ:

Քանի մը տարի առաջ՝ Թաքստոցիս մեջ՝ զարհուրելի այն հոգեբուն հետ զորս այն օրերը ապրողները միայն կրնան երևակայել, միտքս հաճախ կերթար անոնց ալ որոնք կտվայտեին աքսորի, բանտի կամ Թաքստոցներու մեջ: Մտածումիս չէի կրնար դատել Կոմիտասը ևս, որ այդ պահուն կձգներ բուժարանի մը անկյունը նետված: Ու միշտ ալ մտքիս մեջ կցցվեր դժբախտ հարցումը. ի՞նչ եղած են իր ձեռագիրները:

Թաքստոցին ելլելու՝ կլանված ուրիշ հոգերով՝ անոնցմով հետաքրքրվելու առիթը ինձի պակսեցավ: Բայց երբ, 1921-ի վերջերը, Հայ Արվեստի Տունը ստեղծեցինք, մեր մտածումներն մեկն եղավ տեր կանգնել անոր գույքերուն: Զանոնք փնտրել և անոնց ցուցակը կազմել անհրաժեշտ էր նախ: Եվ ահա պատրիարքարանեն քանի մը սնդուկ բերին մեզ, Բերա, Աղբային Մատենադարանի սրահ, ուր կգտնվեր կեդրոնը Հայ Արվեստի Տան:

³ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», 1960, էջ 196—197:

Երկու տարի հետո այդ մասին հետևյալ տողերը կգրեի Պուլբերշի «Նավասարդ»-ին մեջ:

«Այն ու կես տարի կա, պատրիարքարանի կողմից կարգված հանձնախումբի մը՝ և Հայ Արվեստի Տան անդամներու՝ ներկայության, Պուլսո մեջ իր սնդուկները բացինք: Տեսակ մը երկյուղածություն համակեր էր մեզ: Հոն էին ինչ որ վարդապետ մեզի կթողուր իր տաղանդին ճիգերն: Հոն էին ինչ որ վարդապետը օր մը պիտի տար: Մեծ եղավ մեր սարսափը. մեր սպասածները չկային սնդուկներում մեջ. դեզերով իր տպագրված գործերն, հարյուրավոր թղթիկներ՝ որոնց վրա չոր մոթիվներ միայն կային, գրչագիր հին Ավետարաններ, ահա բոլորը: Ո՛ր էին հապախեցրու մասին իր այնքան սպասված ուսումնասիրությունը, Անուշ օպերան, և մյուս ավարտած գործերը: Անոնցմե ո՛չ մեկ հետք: Ոչ իսկ պատարագը կար: Դժվար էր համարալ թե եկած վերցուցած էին սնդուկներում մեջն: Ուրեմն դեռ ան թուղթին չէ՛ր հանձնած մեծ մասը իր հղացումներն, իր նյութերն: Ու վարդապետին կորուստը այդ պահուն ավելի մեծ թվեցավ մեզի»:

Ավելի հետո Հարություն Մեհրաբյան պիտի գրեր Բոստոնի «Հայրենիք»-ին մեջ.

«Կոմիտաս վարդապետի գործերը, շնորհիվ մի քանի ապիկար մարդկանց անհոգ վերաբերմունքին, կորստյան մատնվեցին:

1921-ին Պուլսո մեջ հիմնվում է Հայ Արվեստի Տունը, որ առաջին հերթին սկսում է ցուցակագրել Կոմիտաս վարդապետի ձեռագրերը և իրերը, որոնք մի քանի սնդուկների մեջ հավաքված՝ պահ էին տրված Պուլսո Մատենադարանի մեջ:

Հնարվեց առանձին մարմին հետևյալ անձերից. նկարիչ Փանոս Թերլեմեզյան, երաժշտագետ Գ. Յաղուպյան, Հ. Զ. Սիրունի, Գուսան վարդապետ և տողերիս գրողը: Սրբազան Նարոյանի նախագահությամբ ցուցակագրեցինք Կոմիտասի սնդուկների մեջ և իր մասնավոր բարեկամ Թերլեմեզյանի մոտ մնացած իրերը ու ձեռագրերը:

Դժբախտաբար սնդուկների մեջ չգտնվեց հայ երաժշտության վերաբերյալ որևէ արժեքավոր նյութ: Զգտնվեցին նույնիսկ բազմաթիվ անգամ իր համերգների մեջ երգված մի շարք անտիպ երգերի մաքուր օրինակները: Զգտնվեցին մի շարք ուսումնասիրություններ և երաժշտական գործերը հայ երաժշտության պատմական խաղերի մասին, շարականների

ուսումնասիրությունը և բազմաթիվ ժողովրդական երգեր, որոնք գրի էին առնված և ուսումնասիրված երկար տարիների ընթացքում:

Սնդուկների մեջ կային անձնական գործածելի իրեր, համերգների ժամանակ տրված թանկագին նվերներ, կրոնական և երաժշտական գրքեր: Կային նաև մի քանի աննշան կիսատ-պոետ անհասկանալի թերթիկներ, և այլն: Իսկ այն, ինչ որ անձկությամբ սպասում էինք գտնել, չկար, կորսված էր»:

Իսկ Աղավնի Մեսրոպյանի հուշերում մեջ հանդիպած ենք այդ մասին հետևյալ քանի մը տողին.

«1921 թվին Կոմիտասի ձեռագիր արխիվը ցուցակագրելու համար՝ անոր Պուլսո բարեկամներն կազմվեցավ հետևյալ հանձնախումբ՝ Փ. Թերլեմեզյան, Գ. Յաղուպյան, Հ. Մեհրաբյան, Գուսան վարդապետ, Նարոյան վարդապետ և Մեսրոպ ավագ քահանա Մեսրոպյան: Մեծ եղավ այդ հանձնախումբի վիշտը, երբ աշխատանքները ավարտեց և տեսավ, որ չկային իր ակնկալած նյութերը»:

Ինչպես շատ հաճախ՝ այստեղ ևս օր. Մեսրոպյանի հիշողությունը կղավաճանե իրեն, այս անգամ ալ հանձնաժողովի անդամները թվելու ատեն:

Կարևորն այն է սակայն որ այդ ցուցակագրությունը մեր հոգին խռովեց: Ո՛ր գացած կրնային ըլլալ Կոմիտասի մյուս գույքերը: Պատրիարքարանն պատասխան մը չկրցան տալ մեզի, իսկ իր հինգ սաներն ոչ մեկը այդ պահուն Պուլսո չէր՝ որպեսզի կարենար լուսաբանել զարհուրելի առեղվածը:

Տարիներ հետո էր միայն որ Կոմիտասի պատկանող իրեր մեջտեղ ելել սկսան տակավ:

Ինձ համար խորհրդավոր կմնա միշտ այն պարագան թե ո՛ր պահվածք էին Կոմիտասի գույքերը այդ պահուն, և ինչպե՞ս կրցան տարիներ հետո անոնք հայտնվել հանկարծ, Թորոս Ազատյանի ձեռքն իյնալու համար մեկիկ-մեկիկ: Երախտապարտ ենք անշուշտ Ազատյանին այն գուրգուրանքին համար որով հավաքեց զանոնք՝ թանկագին նշխարներ կորուստեց փրկելով այսպես, բայց ան թերացավ մեզ ըսել թե զանոնք ուրկե՞ր են ևս հանած էր, ու ան ալ տարիներ հետո...

IV.—Վիլ Ժուիֆի մեջ

Հազիվ երեք տարի մնաց Կոմիտաս Վիլ էվրարի մեջ: Այնտեղեն, 1922-ին, տեղափո-

⁴ Մեսրոպ եպ. Նարոյան և Գրիգոր Գուսան վարդ.:

⁵ Փանոս Թերլեմեզյան, Գրիգոր Սյունի, Հարություն Մեհրաբյան, Գեորգ Յաղուպյան և Հ. Զ. Սիրունի:

⁶ Սիր. Աստղեր որ կմարին. Կոմիտաս վարդապետ, «Նավասարդ», Պուլբերշ, 1923 նոյեմբեր, էջ 77:

⁷ Հ. Մեհրաբյան, Կոմիտաս վարդապետ և իր դերը հայ երաժշտության մեջ, «Հայրենիք» ամսագիր, 1936 հունվար, էջ 71:

⁸ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 319:

խեցին հոգեկան հիվանդներու ուրիշ բուժարան մը, Վիլ ժուիֆ: Խնայողական նկատումներ պատճառ եղած կթվին ըլլալ այս տեղափոխութեան:

Խնամատար հանձնաժողովը իր հրապարակային բացատրութեան մեջ խոսելով Կոմիտասի Վիլ էվարեն Վիլ ժուիֆ փոխադրութեան պարագաներուն մասին, կգրեն.

«Վիլ էվարի բժշկապետը որ Սենի նահանգին այդ կարգի հիվանդանոցներուն ընդհանուր բժշկապետն էր միանգամայն, ինք իսկ թեյադրեց հանձնաժողովին, փոխադրել զայն Վիլ ժուիֆ, ուր շրջապատը նվազ շքեղ է, բայց ուր միևնույն հոգածութեան առարկա պիտի ըլլար ծանոթ մասնագետներու հսկողութեան տակ, նույնքան լավ սնունդ պիտի առնէր, ծախքը գրեթե կեսվակեա պակսելով հանդերձ: Հանձնաժողովս կըսէ թե ստիպված էր այդ խորհուրդին հետեի մանավանդ այն պատճառով որ իր նշույթական միջոցները ևս սուղ էին, և հրապարակային կոչերով կամ շրջաբերականներով կատարած դիմումները ցանկալի արդունքը չէին տված: Ու այդ, ավաղ, այնպիսի պահու մը երբ հայ կրեստոները միլիոններ կվատնէին ձի և խոտ պահելու համար Փարիզի մեջ, մանկավարժներ կերակրելու համար հաստատութիւններ կհիմնէին, կամ հիմնադրամներ կհայթայթէին ուստի միապետականները տպարանով ու թերթով օժտելու համար: Արեւմտեան Ղուկասյան, համբավաւոր նավթատերը, իր խիղճը խաղաղեցնել կարծեր էր քանի մը երգի տպագրութեան ծախքը հոգալով...»

Մարմնամասնութիւններ չունինք այցելութիւններուն մասին՝ զորս իր բարեկամները տված են Կոմիտասին, Վիլ ժուիֆի մեջ: Բայց տարակույս չունինք որ սիրալիր չեն եղած Կոմիտաս ոչ մեկուն հանդեպ, կամ պարզապէս մերժած է զանոնք ընդունի:

Գրիգոր վարդապետ Գուսան, իր հայրենակիցը, այն ատեն Լոնդոնի հոգեւոր հովիւ, հետեյալ կերպով կպատմէր մեզի այցը զոր 1924-ի վերջը տվեր էր Կոմիտասին.

«Վարդապետը որ կոնակի վրա պառկած գտա մահճակալին վրան, ոտքի ելավ և ուշադրութեամբ զննել սկսավ զիս հոտից ցլուկ, առանց սակայն բառ մը արտասանելու. ոչ հուզում, ոչ բարկութիւն, և ոչ այլ ինչ. ուշադիր նայել հետո կրկին գնաց անկողին մոտ և այս անգամ երեսի վրա պառկելու առանց այլևս շարժելու. բոխին իսկ զարմացավ հիվանդին ցուց տված հանդարտութեանը համար»⁹:

Իր ուրիշ մեկ հայրենակիցը, բժիշկ Ստեփան Կարապետյան, հետեյալը կգրէր 1926-ին Ռումանիո հայ թեմին առաջնորդ

Հուսիկ վարդապետ Զոհրապյանի՝ Կոմիտասին տված իր մեկ այցեն հետո.

«... Կփափագեիք նաև ստույգ տեղեկութիւններ ստանալ մեր ամենուս հույժ սիրելի եղող տարաբախտ Կոմիտաս վարդապետի մասին: Փարիզ գտնված միջոցիս անձամբ զացի իր ապաքինատունը որ Վիլ ժուիֆ կոչված արվարձանը կգտնվի. բժիշկ ըլլալուս կրցա դուրսով թույլտվութիւն ստանալ իր մոտը երթալու. նախապէս հանձնարարեցի պահապաններուն որպէսզի իրենք հեռու մնան, և ես ուղղակի առանձին իր սենյակը մտա: Ծիշտ միևնույն Կոմիտաս վարդապետն էր, իհարկե քիչ մը ավելի ծերացած, մազերն ու մորուքը արդեն ըստ բավականի ճերմակած էին, բայց իր ուժն ու կայտառութիւնը գրեթե անփոփոխ. ինքը մահճակալի վրա պառկած էր երբոր ես ներս մտա. նախ շեշտակի երեսս նայեցավ ու ելավ մահճակալին վրա նստալ: Ես փորձելու համար թե տեսնանք զիս պիտի ճանչնա, հետը թրքերեն խոսեցա, որուն հայերեն պատասխանեց, որով վստահաբար զիս ճանչցավ. նախ հանդարտութեամբ ըսավ թե ինք մենե և ոչ մեկը տեսնել չի փափագիր, թե մենք ամենքս ալ հանցավոր ենք և մեզ պիտի պատժեն. հարմար բառերով ու անուշութեամբ պատասխանեցի իրեն, բայց չուզեց մտիկ ընել, և երթալով ավելի բորբոքեցավ, ու դուրս վռնեց զիս. ըսի թե ես եկած եմ իբր իր բարեկամը և կուզեմ զինքը մեկ քանի րոպե տեսնել, որուն պատասխանեց թե՝ երբեք չուզեր զիս մտիկ ընել, և բարկացած երևույթով մը պահապանը կանչելով ըսավ որ զիս դուրս հանն ու ակնշնորհալ ձեռքերովը գոցեց. տեսնելով որ երթալով ալ ավելի պիտի գրգռվի, խոհեմութիւն համարեցի հեռանալ, ու զինքը առանձին թողուլ. բավական մըն ալ դուրսն դիտեցի զինքը, որ շարունակ ինքնիրենը կխոսեր, մերթ բարկանալով մերթ ալ հանդարտելով: Պահապանները կպատմեն թե՝ իր վիճակը միշտ հանդարտ է երբոր ինք նախկին բարեկամի մը չի հանդիպիր. իսկ երբ բարեկամ մը տեսնէ ծայրահեղ կգրգռվի. իսկ ընդհակառակը անծանոթներու հետ շատ մեղմ ու հանդարտ է, կխոսակցի անոնց հետ, բայց ալ ավելի կուզէ առանձին մնալ. խորժակը լավ է. երբեմն պարտեզը կպտտի, լավ կքնանա, իր հագուստները խնամքով և մաքուր կպահէ ու կրոնական տարազը միշտ կպահէ. վերջերս սկսած է նույնիսկ երբեմն ինքնիրենը երգել: Տարակույս չկա թե բոլոր այս տեղեկութիւնները նպաստաւոր գաղափար մը կազմել տվին իր առողջութեանը մասին»¹⁰:

¹⁰ «Նավասարդ», Պուրբիշ, Բ տարի, Թիվ 11, մայիս 1926, էջ 319:

⁹ «Նավասարդ», Պուրբիշ, 1925 փետր.—մարտ, էջ 3:

1927 մայիսին Փարիզ էի: Այցի գացեր էի մորս աճյուններուն: Մտքս անցավ Կոմիտասին այցելել, բայց քաջութիւն չունեցաւ: Լսեք էի որ կվճռուի իր ծանոթները: Վնասվելն չէ որ կվախնայի. պիտի սոսկայի աչքերն. ո՛վ գիտե՞ր քան դառնութիւն ու զայրույթ կուտակված պիտի ըլլային անոնց մեջ:

Ինչ որ լսեցի իր հոգեկան վիճակին մասին Փարիզ գտնված օրերուս հետո էր միայն Փարիզ ըլլալն: Բոլորը արդեն կտրած կթվեին արդեն հեք վարդապետը, և այլևս իրենց միակ պարտականութիւնը կկարծեին հոգալ օրվան սնունդի անոր ծախքերը:

Թերևեմեզյան Ամերիկային Հայաստան դարձին Փարիզին անցնելուն՝ նոր փորձ մը կընէ իր վաղեմի բարեկամին այցելելու: Ան կպատմէ իր հուշերուն մեջ.

«1928 թվին մի անգամ ևս այցելեցի Կոմիտասին: Հիվանդանոցի այգում պառկած մտածում էր: Մազերը բոլորովին սպիտակել էին: Մոտեցաւ և կես ժամ զանազան հարցեր տվի, սակայն իմ ոչ մի հարցին չպատասխանեց: Այդպես էլ բաժանվեցի նրանից»¹¹:

Որոշ է, որ Կոմիտաս ամենն ավելի ինքը կզգա իր էութիւնը բզկտող տառապանքը. «Զիս հանգիստ ձգեցեք», «Ես իմ անելիքներս ունիմ...», — կըսէ մեկու մը: Եվ երբ իր ներկայութեան ընդունված ուրիշ հայրենակից մը բաժանվելու ատեն փափագ կհայտնէ կրկին այցելել, ան կհարե՞ս սրտատուչ կերպով. «Վերադարձին ինձ այլևս հոս չեք գտներ. ես ճամփորդ եմ»:

Բոլոր այն հանդիպումներուն մեջ զորս Կոմիտաս ունեցավ իր այցելուներուն հետ, կամ ավելի ճիշտ այն խաղաղ պահերուն մեջ՝ ուր Կոմիտաս զանոնք ընդունեց, ամենն նշանակալիւն այն տեսակցութիւնն եղավ զոր ծանոթ հայ գրող Ասատուր Նավարյան ունեցավ վարդապետին հետ, Արաքսի և Հայկանուշ Թորոսյան քույրերուն ընկերակցութեամբ 1927 դեկտեմբեր 25-ին, Վիլ ժուիֆի անոր մենարանին մեջ: Բայց թողունք որ Նավարյան ինքը պատմէ այդ հանդիպումը.

«... Ահա խուցին առջև Փոքր, երկայն, աղքատիկ նեղ խուց մը, ավելի խցիկ մը, պզտիկ մահճակալ մը, աթոռ մը, պարզ խեղճուկ սեղան մը: Լույսը կու գա պատին վերև բացված մեկ պատուհանէն, խուցին մեջ ստվեր մը որ կճեմէ, առանց հապճեպի, ակնարկը հեռուն, տարտամ երազներու մեջ: Զյուներ կան մազերուն և մորուքին մեջ, նիհար և քիչ կըսէ գրեթէ ծերացած, դալուկ, ակնվակալան դեմքով: Կոմիտասն է, եղբրական սքեմը վրան, փոխանակ հիմարներու հատուկ տարազը հագնելու: Տարիներն ի վեր չէին

տեսած զինքը. հոգիս գալարում մը ունեցավ, արցունքներս կու տվի ու մտա խուցը: Օրիորդները անոր ձեռքը համբուրեցին, նույնը ըրի ես ալ. սակայն ինքը, անուշ աչքերը հառած վրաս, զիս ողջագուրեց հանկարծ ու համբուրեց ձակատես. հետո դարձավ օրիորդներուն ու երբեմնի կնահաճութեամբ, իբր թե սալոնի մեջ եղած ըլլար, մրմնջեց.

— Սխալ եղավ... Ես պետք է համբուրեի ձեր ձեռքը:

Ու փափկորեն, առավ փեղրուն մեջ, զատ-զատ, յուրաքանչյուրին ձեռքը ու զողողող շրթներով դրավ անոնց վրա իր խնկավետ, հայրական մաքուր համբույրը:

— Նստեցեք, վարդապետ.

— Ես իմ աթոռս ունիմ, — պատասխանեց ու նստավ իր նեղ անկողնին եզրը:

Պահապանը գրեթէ ուրախ այս անակնկալ ընդունելութենէն, բերավ անմիջապէս աթոռներ ու հեռացավ:

Նավարյան կհայտնէ հետո Կոմիտասին թե բարենուն ունի Ռումանի առաջնորդ Հուսիկ եպիսկոպոսի կողմէն որ կփափագի գալ այցելել իր վաղեմի ընկերոջ: Վարդապետը կպատասխանէ.

«— Տիեզերքը լայն է. ամեն ոք իր տեղը ունի. պետք է հարգե տանը սրբութիւնը, ուր ծլած ու ծաղկած է. թող մնա ան իր տանը, ես ալ իմ տանը... Ամեն ոք պետք է մնա իր տունը. կյանքի հասակցողութիւնը այդ կպահանջէ. տունը ազգային ոգին է, մեր մարմանդ դաշտերու ծաղիկը, մեր զեփուռը, մեր Մասիսը... Տունը ընկերական պայմաններու հիմնական սկզբունքն է... Երբեմն հեղեղը կու գա, արշուճատ հեղեղը որ կգլխկտանի...»

— Դեպի կորո՞ւտ...

— Երբեք: Նորեն ամեն ոք կգտնէ իր տունը, նորից կծի ու կծաղկի հոն... Հեղեղը կգնա ծովու անհունութեանը մեջ...»:

Նավարյան կակնարկէ հետո վարդապետին Ատափազար այցելութեան 1911-ին, երբ մասնակցեցավ ծերունազարդ ուսուցիչ Գեորգ Շիրինյանի հոբելյանին հայ եկեղեցւո մեջ, երգեց Տէր ռդուրմեան, բայց մերժեց Կոմիտէի երգել:

«— Բնական է, մերժեցի. խորանին վարագույրը քաշած էիք. կարծեցիք այդ կերպով սեղանին սրբութիւնը հարգած ըլլալ... Աստված իր տանը մեջ էր, ինչպէ՞ս կարելի էր Աստուծո տունը հասարակաց սրահի վերածել...»

Ապշահար դիտեցի վարդապետին երեսը: Անհավասարակշի՞ր թե ողջամիտ մարդու խոսքեր էին ասոնք: Ինչպէ՞ս կարելի էր աղջամուղջներու մեջ խորասուզված բանականութիւն մը այսքան տրամաբանորեն

¹¹ «Կոմիտաս» ժողովածու, 1930, էջ 91—92:

կշռեր իր ըսածներուն տարողութիւնը: Հակասական և փոթորկոտ մտածումներու մեջ կտատանէի, երբ հանկարծ հոմերական քրքիշ մը թուով կոկորդան:

—Այո, ես պեպեքեմ եմ, բայց ոչ պոպոֆ.

Օրիորդները նմանապես սկսան անկեղծորեն թռիչ տալ իրենց ծիծաղներուն: Նույնիսկ պահապանը դրանք դուրսը գոհ իր հիվանդին ուրախ տրամադրութենէն, սկսավ ան ալ քթին տակ խնդալ:

—Ի՞նչ է պոպոֆը, հարցուցի օր. Հայկանուշին:

—Պոպոֆը, այնպես չէ՛, վարդապետ, սոխին մեջի ծիւն է որ կը քրքրանայ:

—Այո՛, պատասխանեց վարդապետը, սակայն սոխը հողին մեջ կը տանի, իսկ պոպոֆը հողէն դուրս:

Վարդապետը խորհրդավոր ժպիտ մը ունեւր. մտածեցի որ արդէն իմար մարդիկ կարող են ըմբռնել այս զանազանութեան թաքուն ու խորունկ իմաստը:

—Կհիշե՞ք, վարդապետ, հարցուց օր. Արաքսի զվարթորեն, դուք մեզի ֆերքենֆելշ կըսեիք...

—Հիմա ի՞նչ եք որ...

—Այն ատեն փոքր էիք...

—Տարիքը կփոխվի, կյանքը միևնույնն է...

—Հետո օր մը, հյուրասիրեցիք մեզ՝ Բանկալթիի ձեր տունը, թեյ հրամցուցիք:

—Այն ատեն ես չէի...

—Թերեմեզյանի պատկերները ցույց տվիք...

—Ես չէի... Թերեմեզյանը ըլլալու է... Ես Զանդերը քսոր գացի...

—Մենք ալ Քյոթհաճ, ձեր ծննդավայրը քսորվեցանք... Դուք, բարեբախտաբար, վերադարձաք:

—Անշուշտ քանի որ հիմա հոս եմ, իմ տունը...

Երբ վայրկյան մը իր աղու նայվածքը սեւեռած կամար օր. Հայկանուշի վրա, այս վերջինը մեղմաբար համարձակեցավ ըսել.

—Ես երգչուհի եմ. ձեր գեղեցիկ երգերը կերգեմ եվրոպացիներու առջև, մեծ հաջողութիւն կունենամ... Կուգե՞ք որ երգեմ.

—Ո՛ր, մի երգեք, ոչ նայտեղ:

—Փարիզի երաժշտանոցէն երգի առաջին մրցանակ ստացած եմ:

—Այդ, ոչինչ... Մրցանակը քեզ համար, բայց երաժշտութիւնը ժողովրդի համար:

—Վարդապետ, ի՞նչ տարբերութիւն կտեսնեք հայ և օտար երաժշտութեան միջև:

—Հա՛... Սրանք երկու հսկայ են. մին քու մեջն է, մյուսը դիմացը. իրարու հակառակ չեն, զիրար կըրցեն. քու հոգ ավելի պայծառ է, ավելի գեղեցիկ... Դա քու տունն է, քու հայրենի օջախը, հայրենի անցյալը, ավան-

դութիւնները, սրբութիւնները... Քու հոգ քու տունն է... Նախ՝ ամեն ոք իր տունը, ուր ծլած ու ծաղկած է. պետք է պահել զայն իր նվիրականութեամբ մեջ. սակայն մյուս հսկայ, օտարը, կարող ես օգտվիլ անկէ, որպէսզի ավելի ճոխացնես քու հոգ, քու տունդ, ուր ծլած ու ծաղկած ես, քու հայրենի դաշտերը, ծաղիկները, գետերը իրենց կարկաշտով...

—Վարդապետ, հարցուց օր. Արաքսի իր կարգին. —Ի՞նչ պետք է ընել. կուգե՞ի ուսումնասիրել հայ եկեղեցական երաժշտութիւնը:

—Կամենալը արդեն կարենալ է. հետեցեք ուրիշներու օրինակին. նրանք կամեցեր ու գրեր են, դուք ալ կարող եք նույնը ընել:

—Հայր սուրբ, — ըսի, — Գարեգին սրբազանը էջմիածինէն Փարիզ կու գա, իբր Եվրոպայի առաջնորդ:

—Կարող է գալ. կհանաչեմ. մեր միաբանութենէն է: Ան պաշտօնով կու գա. ան կլինի իր տունը, ես իմ տունը...

—Կփափագի՞ք որ գա այցելել ձեզ:

—Եթէ ուզենա, թող գա. բայց դուք մի առաջնորդեք:

—Կթույլատրե՞ք որ վերստին այցելենք, վարդապետ:

—Եկեք, բայց ոչ թէ զիս փորձելու:

—Ուրեմն կրնանք մեկնիլ:

—Այո, մեկնեցեք:

Ոտքի ելավ, համբուրեցինք իր ձեռքը ու հեռացանք. Երբ պահապանը մեզ առաջնորդեց, շատ գոհ կերեար: Ըսավ մեզի որ վարդապետը քովէն անցած միջոցին իրեն մըրմընջեր է, շատ մեղմ ձայնով.

—Մեռա՛հ...:

Նավարյան Հառաջի մեջ¹² իր այցելութիւնը նկարագրելով այսպես, երկրորդ հոգեվածով մը կարող իր կրած տպավորութիւնները այդ այցեն, ու կրսեր թէ Կոմիտաս հիվանդ չէ այնպես ինչպէս կկարծվի, թէ ան միայն երբեմն «մտքի անհավասարակշռութեան թեթեւեղ ցուցանիշները», թէ ան եթէ անարգած ու վնասած է իրեն այցելողներին շատեր, պատճառը այն է որ անոնք իրեն հետ «իր անբուժելի հիվանդի մը հետ վարված են», տափալ, ստորնացուցիչ գթութեան մը ծամածոտութիւններով փորձած են անոր ցավը ամոքել, թէ «իրմով հետաքրքրվող չկա», թէ «տասնհինգ ֆրանկ օրականով զինքը նետեր են հիմարանոցի մը անկյունը», թէ «մասնագետ բժշկներու կարծիքը սխալ կրնա ըլլալ», և թէ «անոր ապաքինումը կախում ունի իր բարեկամներուն ընթացքէն»:

¹² «Հառաջ», 1929 հունվար:

Նավարյանի հոգևածը ռումբի մը պես պայթեցավ և բազմաթիվ թերթեր արտատպեցին զայն, վրդովման ալիք մը տարածելով ամենուրեք: Կոմիտասի խնամատար հանձնախումբը չէր կրնար լուռ մնալ և արդարև ան հրապարակ եկավ իր լուսաբանութիւններով, որոնք լույս տեսան արտասահմանի հայ մամուլին մեջ 1928 հունվարին: Հրապարակային այդ հայտարարութիւնը, որ Արշակ Զոպանյանի գործին ելած կթվեր և ուր Նավարյանի պարզած տեսութիւնները «լրջութենէ և բարեխղճութենէ զուրկ» կհռչակվեին, բացատրութիւններ կու տար այն պարագաներուն մասին որոնց մեջ Պոլսէն Փարիզ էր փոխադրված վարդապետը և ապա տեղափոխված մեկ բուժարանէն մյուսը, և նաև այն հոգածութիւն մասին զոր հանձնաժողովը յուլց կու տար տարիներէ ի վեր դժբախտ հիվանդին հանդեպ:

Երբ Ասատուր Նավարյանի այցելութեան նկարագրութիւնը լույս տեսավ մամուլին մեջ՝ վրդովում ևս ստեղծելով, և խնամատար հանձնախումբը ինքն ալ մամուլով հրապարակ եկավ՝ Նավարյանի մեղադրանքներուն պատասխանելու համար, մենք ևս այս վեճին նվիրեցինք, Պոլսո Ազդարարին մեջ, մեր շաբաթական «Մաղկե-ծաղիկ»-ը, ուր Նավարյանի գրածներուն և հանձնախումբի չքմեղանքին անդրադառնալէ հետո, կըսեինք թէ այնուամենայնիւ պետք է որոնել «Հայ արվեստագետ մը Վիլ ժուիֆի հիմարանոցը պահող ահավոր գաղտնիքը», ու կհարցնեինք. «Ինչո՞ւ Կոմիտաս իր բարեկամներէն ու ծանոթներէն կխորշի, ու սիրով կընդունի իրեն անծանոթ դեմքեր: Ինչո՞ւ կոնակ ցուց կու տա իր լավագույն բարեկամներուն՝ Մարգարիտ Բաբայանին, Արշակ Զոպանյանին ու Փանոս Թերլեմեզյանին, օրինակի համար, կամ կվճարէ Բոլոլյանի ու Թորգոմյանի պես զինքը սիրող բժիշկներ, ընդհակառակը սիրալիր կըլլա տիկ. Զապել Փանոսյանի մը, օր. Պոլսկայուլյանի մը, օր. Թորոսյաններու հանդեպ, որոնք բան մը չեն հիշեցներ իրեն անցյալին: Թող ներեն դոկտ. Բոլոլյանը և իմ Թորգոմյան բժիշկ բարեկամս, և Վիլ էվրարի ու Վիլ ժուիֆի բոլոր մասնագետ ջլախտաբույժները, եթէ ես ալ հավակնիմ պնդելու թէ Կոմիտաս վարդապետը իրենց կարծած խելագարը չէ: Գիտեմ թէ մեծ հանդգնութիւն պետք է յայսպիսի տեսութիւն մը աղաղակելու համար, երբ մանավանդ փորձութեան արդիւր տված են վաղուց իրենց վճիռը, ու Կոմիտասի խնամատար մարմինը ամեն միջոց փորձած կկարծէ՝ վարդապետին հոգիին մեջ խորասուզված ախտը արմատախիլ ընելու համար: Այո՛, կկրկնեմ, Կոմիտասը իրենց կարծած հիմարը չէ: Այս կարծիքը

հայտնեի եմ ես վաղուց, բայց ան շատերուն քմծիծաղին է միայն արժանի եղեր: Այսօր նորեն կկրկնեմ»:

Արտատպելէ հետո ապա հատված մը «Նասավասարդ»-ի մեջ 1925-ին լույս ընծայած մեր մեկ հոգևածնէ, կըսեինք. «Երեք տարի հետո ես նորեն կկրկնեմ այս տողերը. ալիւի՛ն. անգամ մըն ալ կամբաստանեմ ես այն մարդիկը որ ժամանակին պաշտոն ունեին աշակցելու Կոմիտասի ձեռնարկներուն, և մեկնասի ձեռք առնելով իբրև թէ կհոգևանալորեն կամ պիտի՝ հոգևանալորեն անոր հիմնելիք երաժշտանոցը: Այդ մարդիկն էին որ պատերազմի ատեն ամսե-ամիս ապրուստի գումար մը կու տային Կոմիտասին՝ անոր իսկ քրտինքով ժողոված հիմնադրամներ: Ու այդ մարդիկն էին որ աշխարհին դեմ դառնացուցին հեք արվեստագետը: Ոչ անուններ պիտի հիշեմ, ոչ ալ մանրամասնութիւններ պիտի տամ. բայց խղճովին համոզված եմ որ Վիլ ժուիֆ չէր հասներ կուտինացի սոխակը, եթէ այդ մարդիկը գիտնային արվեստագետի մը հետ խոսելուն, վարկանք կերպը: Հիմա թող դարձալ կրկնեն թէ խաղաղ է իրենց խղճմտանքը»¹³:

Կոմիտասի խնամատար հանձնաժողովը մամուլին հանձնած իր ծանոթ բացատրագրին մեջ կըսե թէ վարդապետին մտային վիճակը որէ բարվոքով չկրնց Վիլ ժուիֆ փոխադրվել հետո ևս, հակառակ հիվանդանոցի բժիշկներուն և մշտական հոգածութեան և իր բարեկամներուն գորգորոտ շահագրգռութեան, և թէ, սակայն, «իր լավագույն, հնագույն, մտերմագույն բարեկամներուն այցելութիւնը, իրեն հաճուլք պատճառելու տեղ, կհուզէ, կնեղէ զինքը, և բժիշկներն իսկ նկատած են որ իր ամեննէ մտտիկ բարեկամներուն, իր անցյալը հիշեցնող անձերուն այցելութիւնը ալիւի կըղայնացնէ կամ կվրդովէ զինքը քան անծանոթներունը, և թէ, հետեաբար, անոնք ցավագին ստիպողութեան մեջ են զայն իրենց ներկայութեամբ չնեղելու, զայն ձգելու իր մենութեան խաղաղութեան մեջ, զոր ինք կնախընտրէ: Դոկտ. Թորգոմյան, երբ երկու տարի առաջ գնաց զինք տեսնել Վիլ ժուիֆ, տեսակցութիւնը հազիվ մեկ վայրկյան տևեց. վարդապետը երկու բառով հասկցուց որ չէր ուզեր զայն ընդունիլ»:

Կոմիտասը հայ միջավայր մը փոխադրելու հարցը շատերուն միտքը զբաղեցուցած է. նույնիսկ առաջարկողներ եղած են Հայաստան կամ Երուսաղեմ տեղափոխել զայն: Խնամատար հանձնաժողովը իր հրապարակային զեկույցին մեջ կըսե սակայն որ «ան,

¹³ Շրջիկ, Կոմիտասի մասին, «Ազատարար», 10 փետրվար 1928:

ավա՞ղ, որևէ գանգատ չընելու հոն գտնվելուն, որևէ փափագ դեռ չէ հայտնաժ առկայեց դուրս ելլելու: ...Երբ երկու տարի առաջ, հիվանդանոցին բժշկապետը, հոգեբանական փորձ մը ընելու համար իրեն հարցուց թե կուզե՞ր որ զինքը Հայաստան փոխադրեին, ուժգնորեն հակառակած էր, պնդելով ու կրկնելով թե հանգիստ էր հոտ ու կուզեր հոտ մնալ: Երուսաղեմ տեղափոխելու հարցին գալով, հանձնաժողովը պահ մը համաձայն եղած է, և «պաշտոնապես գրած է Դուրյան պատրիարքին և անոր հավանությունը խնդրած. բացասական պատասխան ստացած է սակայն, լուրջ պատճառաբանություններով, որոնց առջև խոնարհիլ միայն կիյնար հանձնաժողովին»:

Երբ 1928-ին Կոմիտասի խնամատար հանձնաժողովը մամուլին հանձնեց իր հրապարակային լուսաբանությունները վարդապետին անցուցած կյանքին մասին Վիլ Ժուիֆի իր բուժարանին մեջ, տարտամ հույս մը դեռ կար թե Կոմիտաս թերևս օր մը վերագտնե հոգեկան իր խաղաղությունը, տեր դառնա կրկին իր հեք ջիղերուն, ու հաշտվի աշխարհին հետ: Հանձնաժողովը դեռ կհուսար որ «այդ առանձնացման խաղաղությունը մեջ ուր վարդապետը կհանգչի կարող բժշկներու հոգածության տակ, թերևս բացառիկ մեկ շնորհովը Նախախնամության՝ ներքին խորհրդավոր ուժ մը, փրկարար ցնցում մը պիտի գա օր մը զինքը սթափեցնել իր երկարատև ցավազին երազանքն ու զայն դանձնել մեր ամբողջ ազգին հրճվածքին ու բարիքին համար, իր երբեմնի գործոն, բաղմարդյուն, հոյակապ կյանքին»:

Այդ օրը չհասավ սակայն: Նախախնամությունը չեկավ օգնության, ու թույլ տվավ որ ան ութը նոր տարիներ տառապի իր ճգնարանին մեջ՝ իր աչքերը վերջնապես փակելն առաջ այս շար աշխարհին:

Այդ ութը տարիներու ընթացքին ևս շատեր փորձեցին Կոմիտասին օգնել, և անոնցմե ոմանք պատմեցին, մամուլին մեջ, իրենց այցելությունը, և տպավորությունները զորս կրեցին այդ առթիվ: Նույնն եղան բոլորին ալ տպավորությունները, — Կոմիտասը քեն ըրած է մարդոց և աշխարհին դեմ:

Հ. Ղևոնդ Տալան հետևյալ կերպով կպատմե իր այցը Վիլ Ժուիֆ 1930-ի ամբարն.

«Ընկեր առի ինձ մեր վաղեմի աշակերտներեն մին (Հարություն Սինանյան), ու միասին ճամփա ելանք ցերեկե մը վերջ դեպի Վիլ Ժուիֆ: ...Դռնապանը ներս կընդունի զմեզ, և հետ իմանալու մեր այցելության նպատակը՝ հյուրանոց կհրամցնե: Քիչ վերջ տոմար մը կբացվի մեր առջև. հեք վարդապետի անձին վերապահված էջն է: ...Հետ դնելու մեր ստորագրությունները՝ երկյուղած

քայլերով կհետևինք մեզի սահմանված պահապանին, և որ. ձեռքին մեջն ունի այցաքարտ: Կանցնինք սրահներն տարտամ ու մտածկոտ՝ հակառակ մեր առաջնորդի վճռական քայլերուն: Եվ ահա կանգ կառնենք սենյակի մը մուտքին առջև.

«— Այս է, — կըսե ան:

Ու ներս կմտնենք դռնեն՝ որ բաց է արդեն: Ոչ ոք կա հոն:

— Բայց ո՞ւր էր վարդապետը:

Պահապանը կանգ կառնե խուցին մեջեն դեպի քառանկյուն պարտեզ մը բաց թողված դրան մը առջև: Կնայիմ թուլնտի. և ահա մոտը՝ պատին առջև՝ հոտու պարեգոտով, զխաբաց և անկոշիկ, ոտք-ոտքի վրա դրած աթոռի մը վրան նստեր է տարաբախտ մեծ երգչին ու երաժիշտը Կոմիտաս վարդապետ, անշարժ՝ ինչպես մարմարյա անդրի մը: Աթոռին մոտ կան զույգ մը կոշիկներ: Պահապանը մեղմով կերկարե այցաքարտս ուղիղ անոր աչքին առջև՝ տալով իր անունը: Ո՛չ մեկ շարժում. ո՛չ մեկ պատասխան:

«Այցելուներ եկած են քեզի, հայր Կոմիտաս», — կըսե պահապանը, միշտ նույն ուղղության վրա բռնած իմ այցաքարտը:

Դարձյալ բացարձակ լռություն:

Պահապանին հանձնարարությամբ՝ այս անգամ ե՛ս կմոտենամ և մեղմորեն կըսեմ.

«Հարգանքներս, վարդապետ»:

Միշտ լռություն, միշտ անշարժություն:

Մեր առաջնորդին նոր թելադրության վրա՝ քիչ մը ավելի բարձր կկրկնեմ նույնը. և ահա արձանը կյանք կառնե, կշարժի, արտորանքով կառնե կոշիկները, ոտքը կանցընե. և աթոռը ձեռքին մեջ սենյակ կմտնե. այս ժամանակ է որ աչքերնիս առաջին անգամ իրարու կհանդիպի իրենը՝ ահարկու և խոժոռ, մերը՝ կարեկցական ու թախծոտ: Այս շարժումին՝ ավելորդ է ըսել՝ թե փորձ պահապանը մեր և իր միջև էր արդեն: Վայրկենական կկատարվի այս ամենը: Աթոռը հոն ձգելն վերջ կուղղվի դեպի քառանկյուն, և ձեռները ետև անցուցած ցանկապատին երկայնությամբ դիմացի եզրերը կսկսի միակերպ շրջան մը, բոլորովին ինքնամիտվի և ինքնազբաղ, առանց ունե հետաքրքրության ցույցի մը՝ ո՛չ դեպի մեզ, ո՛չ իր շուրջը: Այլևս մեզի ուրիշ բան չէր մնար՝ բայց եթե համարացած ու կսկծանքով դիտե՛լ...:

... Հուսկ՝ զխիկոր մեկնեցանք Վիլ Ժուիֆեն այնպես՝ ինչպես կիսամեռ ասպետի մը թուլենք¹⁴:

Ավելի հետո իրեն այց մը տված է երիտասարդ երգահան Գուրգեն Արեմյան Արմենակ Շահմուրատյանի հետ: Ան սապես կպատմե այդ այցը.

¹⁴ «Բաղմավեպ», 1936, էջ 14—15:

«26 մարտ 1933.—Այսօր, ժամը 3-ին, Պյուլպյուլյան երկու բուրժուարներն հետ վարդապետին այցելության գացին: Վերջին պահուն պ. Ա. Շահմուրատյանն ալ մեզի միացավ իր տիկնոջ հետ:

Հիվանդներու այցելության ժամը արդեն անցած էր երբ հասանք Վիլ Ժուլիֆ և երկար բանակցություններ հետո միայն կարելի եղավ վարդապետը տեսնելու արտոնություն ստանալ:

Հիվանդանոցի տնօրենը համոզելու համար, հարկ եղավ Շահմուրատյանը ներկայացնել իբրև վարդապետին մտերիմներեն մին, որ նույն օրն իսկ հասած էր Ամերիկային և քանի մը ժամ վերջ պիտի մեկներ կրկին արտասահման:

Վերջապես մեզ առաջնորդեցին վարդապետին գտնված շենքը: Մտանք հյուրանոց, և հիվանդապահ մը զնաց վարդապետին իմացնելու, որ հյուրեր եկած են իրեն:

Շահմուրատյան, որ տարիներ ի վեր չէր տեսած զինքը, սկսավ մտահոգության նշաններ ցույց տալ:

—Այնպես, ըսավ, իմացա որ վերջերս վարդապետը իր հին բարեկամները լավ չընդունին, ավելի լավ է չերեամ և դուրսը սպասեմ. եթե տրամադրությունը լավ ըլլա, կանչե՛, ես կու գամ:

Խոսքը դեռ չէր ավարտած, երբ վարդապետը վրա հասավ և էն առաջ Շահմուրատյանը տեսնելով մոտեցավ իրեն և «Արմեն, այս դե՛ս ես, ո՛ր էիր այսքան ատեն» ըսելով գրկեց զինքը և զարմանալի հիշողությամբ մը լուրեր ուզեց, անուններ տվավ: Հետո կարգով բոլորս աչք համբուրեցինք և սեղանի մը շուրջի նստեցանք. միասին: Վարդապետը՝ իրեն ուղղված մեր հարցերուն կատասխաններ երբեք խիստ բանավոր կերպով, բայց հաճախ մեզի համար բոլորովին անհասկանալի լեզվով մը, զոր մենք կատարելապես հասկնալ կձևացնեինք:

Առանց ընդմիջելու երկար մտիկ ըրինք և ի վերջո խոսակցության նյութը փոխելու համար հարցուցինք կատակով. «Վարդապետ, Շահմուրատյանը քանի տարեկան կըլլա. ինք կայնո՞ք որ դեռ 45 չկա»: Խնդալով՝ «Քիչ էլ կենա, կասի թե դեռ չի ծնվել», ըսավ ու շարունակեց կատակել: Հետո սկսավ մեզի հայրական խրատներ տալ. «Դուք, բարի պեպեքներ, երեսնիդ որ այսպես բարի ըլլա, ձեր տուններուն մեջ միութուն կըլլա, ապա թե ոչ ընտանիքը կբախտվի»:

—Վարդապետ, հարցուցի, — ինչպե՞ս կանցնե՞ք ձեր ժամանակը. կկարդա՞ք, կգրե՞ք, կշարունակե՞ք ձեր թանկագին աշխատանքը:

—Ոչ, որքան ատեն որ հոս մնամ, կինս, զավակներս՝ չառնեմ ու նորեն տուն-տեղ չըլլամ, չեմ կրնար աշխատիլ: Հոս դեռ շատ

գործ ունիմ, շատ զինվորներ կան, ես բոլորին վրա պետք է հսկեմ: Աշխատանքը ծանր է, շատ դժվար է, շատ: Դուք որ եկաք, նոր էի ավարտեր. բայց դուք քիչ ուշ եկաք, ես կանուխ վերջացուցի, և այդպես լավ եղավ, կրցանք տեսնվիլ:

—Ուրեմն արգելք չըլլանք ձեր գործերուն, վարդապետ, հիմա երթանք ու նորեն կու գանք: Եթե զբաղած չըլլաք, դարձյալ այսպես կտեսնվինք:

Վարդապետը մեզի ընկերացավ մինչև պարտեզ: Շահմուրատյանն ու ես կրկին ու կրկին համբուրվեցանք հետը՝ և օրիորդները նորեն աչք համբուրեցին: Վարդապետը հանձնարարեց իրենց, որ իր կողմն բարև տանին «քերթները կենդանուն»:

Երբ հեռացանք մեր ուխտավայրեն, բոլորիս աչքերը խոնավ էին»¹⁵:

Շահմուրատյան ականակելով Վիլ Ժուլիֆի մեջ Կոմիտասի տված իր այդ վերջին այցելության 1933 մարտ 26-ին, կգրեմ.

«Մեր ընդունելությունը այս անգամ տարբեր եղավ առաջին այցելությունն, երբ հայհոյանքով ընդունվեի էի: Վերջին անգամուն երկար խոսեցավ, սիրալիր և պայծառառես, հետո տեսնելով կինս (Ֆրանսացի), որ ինձի կընկերանար, ըսավ ֆրանսերեն.

—Շահմուրատյանը սարսափելի մարդ է, բարկացու է, զգո՛ւյշ...»¹⁶:

Բացառապես սիրալիր եղած է Կոմիտաս այն այցելության գործերն տված է 1935 մայիսին, իր հայրենակիցը՝ Հովսեփի եպիսկ. Կարապետյան, Աստվածատուր Հարենցի և ուրիշ երկու հայրենակիցներու հետ: Ահա Հովսեփի եպիսկ.-ի սկսած այդ այցելության մասին.

«Որչա՞ր ուրախ եմ, ի Փարիզ, տարվույս մայիս ամսո մեջ ինքս, ազնվասիրտ պ. Ա. Հարենց և տիարք Նշան Չուրբեքտիյան և Կարո Ուշագլյան հայրենակիցներս միասնաբար այցելեցինք հիվանդանոց, ուր Կոմիտաս վարդապետ զատ-զատ խոսեցավ բոլորիս հետ, հիշեց ծնողքս և մեր ընտանեկան պարագաները, հիշեց Քյոթահյան, ծննդավայրը, հիշեց ս. էջմիածինը և հստակ պայծառառեսությամբ հորդորեց մեզ որ գուրգուրանք հայ ազգի զավակաց ամբողջության վրա. — «Սիրեցեք, շատ սիրեցեք զիրար՝ որպեսզի ապրիք» ըսավ: Արդեն՝ անոր սիրող սիրտն ու մաքուր հոգին ուրիշ բան չէին կարող թելադրել, այլ միմիայն սիրել, ցվիրջ սիրել:

Հուսկ հետո, իր հրամանով ծունկ չոքեցանք անկողնուն առջև, և ինք կրոնականի վեհ ու ջինջ սրտով, ուժասպառ ձեռքը մեր

¹⁵ «Հառաջ», 1935 հոկտեմբեր 27:

¹⁶ «Հառաջ», 1935 հոկտեմբեր 27:

գլուխներուն վրա դնելով մի առ մի օրհնեց զմեզ, ապա, համբուրել տվավ իր օծում ձեռքը, և մենք բոլորի վեհաթիվան տակ հուզված, արցունքը աչքերնուս հրաժեշտ առինք իրմե, հրաժեշտ մը՝ որ անմոռանալի պիտի մնա ցվելը կյանքիս:

Հուլիս ուրախ էինք, որ արժանացանք վարդապետին խնկարույր օրհնություններուն, այլ միանգամայն տխուր էինք հուլիսի, զի տեսանք անոր խնկազույն և հեծյալ դիմագիծը»¹⁷:

Իր վերջնական շիրջման առաջ՝ Կոմիտասին տրված մեղի ծանոթ վերջին այցելությունն էր աս: Հանձինս Կոմիտասի երեք հայրենակիցներուն և այն պատվական մարդուն որ Աստվածատուր Հարենցն էր, հայ ժողովուրդը ինքն էր որ կերթար ծունր դնել իր մեծ զավկին տառապանքի անկողնին առջև ընթերցանքները կ'ընէր անոր սրբազնասուրբ ձեռքերուն որոնք տարիններով դողդապեցր էին իր փառքին համար, և կստանար անոր հուսկ օրհնությունը:

Կոմիտաս ներեց արդոք մարդոց՝ դառնություններուն համար զորս տվեր էին իրեն: Զգիտենք: Մարդկային ուժերն վեր էր այդքան դառնությանց ներել, և Կոմիտաս ղեռ շատ կտառապեր. որպեսզի կարենար մոռնալ զանոնք:

Բայց իր մեծ հոգին օրհնեց այնուամենայնիվ իր ժողովուրդը, որ ձերարդեր էր իր առաջին, իր մատներուն կմատչեր այդքան երկյուղած, ու իր խուցեն կմեկնէր արտասուքը աչքերուն...

V.—Կոմիտաս կնետներ մեզ

Ժիշտ այն տարին երբ Կոմիտասը վիլ էվրարեն վիլ ժուիֆ կիոխադրեին, նոր փոթորիկ մը մեզ ցրվեր էր աշխարհի շրջա հովերուն: Օտար փախու վրա ապաստան մուրալու կերթար արևմտահայ ժողովուրդի մնացորդացը: Մոլորած ճամփորդի մը նման անծանոթին կվազեր, ասպնջական կայք մը փնտրելով իրեն: Հայու նոր կորիզներ կըստեղծվէին այսպես, Բալկաններեն մինչև Սենի ափերը, արարական երկիրներեն մինչև Ամերիկաները: Աշխարհը կըցնեինք անբաղձալի հյուրերով, խուժի բախելով մեր ամեն մեկ քայլին, արհամարհվելով, նախատվելով, վռնտվելով ալ հաճախ:

Ի՞նչ կտանեինք մեզ հետ խորթ երկիրներու տակ: Մեր օճախները, մեր գերեզմանները, մեր ավանդությունները լքած, կփախչէինք շվարած: Սարսափն էր որ կընկերանար մեզ, և անստուկությունը: Մեր հոգիներուն մեջ դառնություն կար ու զայրույթ, ատելու-

թյուն ու նողկանք: Պոռնիկ աշխարհը կզարհեցներ մեզ, բայց ստիպված էինք միշտ բռնիլ անոր, խշտյակի մը, ձորձի մը, պատառ մը հացի սիրույն: Տոկալու հույսը չունեինք, որովհետև ընկճված էր մեր հոգին հեղեղին կարենալ տոկալու համար: Պարպված էր ան անգամ մը ևս իր ավանդություններեն, ու լեցված քննով ու թշնամությամբ: Միասին էինք տարած մեր ցնորքներն ու մոլորությունները, ու զաղութները մեյ-մեկ կրկես դարձուցած ունայն վեհերու:

Ո՞վ էր որ պիտի դիմացներ մեզ հեղեղին: Առանց հայրենի հողեն ավել ծծելու ո՞վ է դիմացեր որ: Օտար արևը մեզ կխամբեցներ օրե-օր, ու կաթիլ-կաթիլ կլորճեր մեր արյունը: Մոռցեր էինք մեր գերեզմանները, կծիճաղեինք մեր ավանդությանց վրա, մեր տղաքը կստակային արդեն հայ դասեն: Լաստերը կփնտրեինք ընդունայն:

Կորանցուցած մեր հոգին՝ պատվաստ կմուրայինք օտարեն:

...Բայց Կոմիտաս մեզ կհետևեր: Ան, իր բուժարանեն, օգնության կհասներ իր ժողովուրդին:

Ան ներած էր մեզ: Ան թույլ տված էր որ իր երգերը տանինք մեկտեղ, որպեսզի անոնցմով ամոքենք մեր պանդխտությունը:

Երբ 1927-ին հայկական երգչախումբ մը կկազմակերպեինք Պուրբեշի մեջ՝ Կոմիտասի հովանին էր որ կանչեցինք մեզի: Իր երգերը, շատ մը տասնամյակ, մեր հոգիներուն զխավոր սփոփանքն եղան ու մեր հպարտությունը: Անոնք երբեք չհեռացան մեր հանգստեներեն, մեր սեղաններեն, մեր պտույտներեն, մեզ հուզեցին ու ջերմացուցին, մեզ եղբայրացուցին: Անոնք գուրգուրանքին առարկան դարձան նաև օտարներուն, մեր հոգին ճանչցուցին անոնց, և ստիպեցին զանոնք որպեսզի հիանան հոգեկան արժեքներուն վրա ժողովուրդի մը, զոր իբրև խանութպան և կոշկակար միայն ճանչցեր են: Արվեստի մարդիկ՝ բառեր չգտան հայ երգին ներքոդին համար, ու զայն փնտրեցին նաև լայն խավերը: Հայ երգը մեզ կեղբայրացներ այսպես նաև օտարներուն հետ:

Կոմիտաս մեզ կընկերանար զաղութն գաղութ իր երգերուն հետ: Սաները որոնք մարգրվեր էին իր իսկ շունչին տակ, ու ասոնց ալ սաները, հայ երգը կշարունակեին տարածել հայ սփյուռքի մեջ:

Կոմիտաս տեղյակ էր իր հաղթանակին: Աշխարհին դեմ փակած իր խուցը՝ ան չգիտեր որ հայ ժողովուրդը իր երգերը հետը կպտտցեն աշխարհն աշխարհ, որպեսզի բաղդրացնեն դառնությունները իր տարագրություն: Ան չգիտեր որ հայ ժողովուրդը իր հետը կպտտցներ և զինքը ուր ալ տաներ զայն իր ճակատագրի:

¹⁷ «Կոշնակ», 1935 թվական, 14, էջ 1185:

Ու ահա, ուրիշ սև օր մը, Կոմիտաս իր աշքերը ցմիշտ փակեց աշխարհին, ամբողջ քսան տարի տառապելի, ու խմելի հետո կարգով դառնութեան բոլոր բաժակները: Մահվան գույժը մեզ հասավ հինգ օր հետո: Հոկտեմբեր 27-ին, երբ հավաքվեք էինք Պուրբեշ, Աթենքի մեջ, տոնելու համար 1500-ամյակը Աստվածաշունչի հայերեն թարգմանություն: Իբրև վերջին հարգանքի նշան՝ քանի մը վայրկյան սրահը լռություն պահեց հոտնկայս, մինչ ան պետք էր այդ լռությունը պահեր ծնրադիր, մարդու մը համար, որ հայ ժողովուրդին հոգին էր գտեր խավարին մեջ անոր խարխափած պահուն, տասնհինգ դար հետո այն մեծ սուրբեն՝ որ լույսի ճամփան էր բացած հայուն:

«Ով մեծասքանչ դու լեզու»-ն որով բացվեցավ հանդիսությունը՝ տեսակ մը խորհրդողանշան եղավ: Զայն դաշնակեր էր Կոմիտաս 1913-ին՝ երբ հայ ժողովուրդը կտոներ հայ

տառերու գյուտին մեծ հոբելյանը, և հիմա, 22 տարի հետո, ան կերգվեր վերստին, պանծացնելու համար թարգմանության թագուհին՝ զոր հայ հանճարը պարգևեր էր դարերուն նույն այդ տառերով: Ու այդ երգին մեջ կպանծացվեին հիմա երկու մեծ մարդիկ, Մեսրոպն ու Կոմիտասը, որոնցմե մեկը հայուն տվեք էր իմաստության բանալին որպեսզի ան այլևս պատմութենեն շամշնա, և մյուսը՝ որ ճանչցուցեր էր, մեզ և օտարին, հայ ժողովուրդի հոգեկան գանձը, և որ իր երգերով կշարունակեր սփոփել հիմա դառնության մեջ տվայտող ու սգավոր մեր հոգին:

Կոմիտաս մեզ հետեցավ նաև իր մահեն հետո: Մեր հոգիներուն մեջ շարունակեց ան ապրիլ, նույնիսկ երբ իր աճյունները տարավ պահ տալու հայրենի տաքուկ հողին:

Մենք դեռ պիտի գտնենք զայն Պանթեոնին մեջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այստեղ շնորհակալությամբ և երախտագիտությամբ ավարտում ենք հրատարակությունը բազմամասնակ գիտնական պրոֆ. Հ. Ճ Սիրունու «Կոմիտասին հետ» հուշագրությունը, շուրջ 14—15 տպագրական

մամուլի ծավալով: Հոգվածաշարը, որը սկսվեց տպագրվել 1965 թվականից, նվիրված էր հայ երաժշտության Մեսրոպ Մաշտոցի՝ անմահ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին:





ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ

ՎԱՀԱՆ ԾԱՅՐԱԳՈՒԾՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄՅԱՆՑ

(Մայր Աթոռ և Էջմիածնի միաբան)

19-րդ դարի հայ մտավորականության համաստեղության մեջ որպես իրավագետ, պատմաբան, գիտնական-հրապարակախոս, ռուսագետ-թարգմանիչ և հմուտ մանկավարժ իր պատվավոր տեղն ունի Էջմիածնի միաբան և ս. Գալանեի վանքի վանահայր Վահան վարդապետ Բաստամյանը։ Կարճ է նրա կյանքի պատմությունը, սակայն բովանդակային ու ազդեցիկ։ Նա ապրել է ընդամենը 39 տարի, բայց իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է հայ եկեղեցու պայծառության, հայրենական մշակույթի զարգացման և, հատկապես, մատաղ սերնդի դաստիարակության սրբազան ու նվիրական գործին։

Եղիա Բաստամյանը ծնվել է Թիֆլիսում, 1842 թ. սեպտեմբերի 2-ին։ Իր սկզբնական կրթությունը ստացել է հայտնի մանկավարժ Հարություն Ծախնազարյանի մոտ։ Ուսումնառենից պատանին 1856 թ. մեկնում է Մոսկվա և ընդունվում Լազարյան ճեմարան։ Նա այնտեղ ուսումնասիրում է ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն ու գերմաներեն լեզուները։ Այդ տարիներին ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչն էր հայտնի հայկաբան Մսեր Մսերյանը։

Բաստամյանը 1862 թ. «Ոսկի Աշան» առաջադիմության մրցանակով ավարտում է Լազարյան ճեմարանը։ Այնուհետև, նույն թվականից ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի բնական գիտ. բաժնում, որից հետո ընդունվում է իրավաբանական



Վահան վրդ. Բաստամյան

Ֆակուլտետ և 1868 թ. «Ի՞նչ տեսակ հանցավոր գործերը չի կարելի հանցանք համարել մարդու համար» ավարտական շարադրության համար կայսերական համալսարանը նրան շնորհում է իրավագիտության կանդիդատի գիտական աստիճան և առաջին կարգի մրցանակ:

Բաստամյանը արտակարգ ընդունակությունների տեր ուսանող է եղել. ահա թե ինչ է գրում նրա ուսանողական շրջանի մասին իր հուշերում հայ անվանի գրող Ղազարոս Աղայանը.

«Ամեն ինչ սովորում էր ինքն իրան, հենց դրա համար համալսարան չէր հաճախում, և բոլոր կուրսերի քննությունն էլ միանգամից տվեց, որով զարմացրեց շատերին և գրավեց պ. Սանասարյանցի ուշադրությունը: Նա դեռ ուսանող ժամանակ «Մեղու»-ի առաջին տարիներում տպեց Բենիամին Ֆրանկլինի կյանքը»¹:

Սանասարյանցն ու հայագետ և պետական բարձր պաշտոնյա Կարապետ Եզյանը Բաստամյանցին խորհուրդ են տալիս զնալ Էջմիածին և օգտակար լինել ազգին: Մանավանդ որ Բաստամյանը ցանկանում էր խորն ուսումնասիրել եկեղեցական իրավագիտությունը: Նա առանց հապաղելու ճանապարհվում է դեպի ս. Էջմիածին:

Մուտքը հոգևոր ասպարեզ

Ժամանակի կաթողիկոսն էր Գևորգ Դ-ը: Ինչպես ս. Սահակի և ս. Մեսրոպի օրոք, այնպես էլ Գևորգ Դ կաթողիկոսի ժամանակ գիտության, ուսման եռանդով ու կրակով լի մի շարք ուշիմ երիտասարդներ Եվրոպայում սովորելուց հետո բարձր գիտելիքներով վերադառնում են Մայր Աթոռ և հայրենիք՝ հայ եկեղեցին գորացնելու, հայ ժողովուրդը լուսավորելու բռնուն տենչով:

Ահա այդ ուսյալ և ազգանվեր ուսանողներից մեկն էր նաև Բաստամյանը: Նա որոշ ժամանակ Էջմիածնում բանասիրական ուսումնասիրություններ կատարելուց հետո, 1872 թ. փետրվարի 18-ին ս. Գայանե վանքում ձեռնադրվում է ավագ սարկավագ, իսկ նույն ամսի 26-ին Վաղարշապատ գյուղի եկեղեցում պոլսեցի Անդրիաս արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվում է արեղա՝ երեք այլ ընկերների հետ, որոնցից մեկն էլ Մոսկվայի համալսարանի պատմական գիտությունների կանդիդատ Խորեն Ստեփանեն էր, «Նորոգմա քարեշմորի վահան արեղայն Բաստամյանց երամեայ ժամանակս կալով աստ և ի մոտոյ տեղեկացեալ

զկարգաց և զկանոնաց և զամենայն հանգամանաց կուսակրոն կենցաղավարության, մոտադիր յօժարության և հոգւոյ և ըստ ներքին համոզմանց ընտրեալ ինքեան զայս վիճակ խնդրեաց ի մենջ ընդունել զինքն ի կարգ կուսակրոն քահանայութեան և մեք, որ զբոսոյ բարուց և խոհեմ և զովանի ընթացից և զուսումնասիրական աշխատութեանցն նորա էաք փորձառու ցնծութեամբ արտի ընկալեալ զխնդիր նորա կոչեցաք ի կարգ քահանայութեան և ի կուսակրոն արեղայութիւն ի միաբանութիւն արդոյ վանոցն Գայեանեայ ի ձեռն Անդրիաս արքեպիսկոպոսի»²: Այնուհետև սույն կոնդակով Գևորգ Դ կաթողիկոսը պատվիրում է Վահան վարդապետին. Կատարել «ի շինութիւն և ի վերանորոգութիւն համայն շինութեանց սենեկաց վանոցն և այլոց», ս. Գայանե վանքում միաբանություն հաստատել, հայերեն և ռուսերեն դասեր տալ ժառանգավորաց վարժարանում ու նոր բացվելիք ձեմարանում և աշխատակցել «Արարատ»-ին:

«Ս. Գայանեի վանահայրերու մեջ հռչակավոր հանդիսացած է Վահան Բաստամյան, որ 1872 թվին... կարևոր նորոգություններով պայծառացուց վանքս: Հյուսված պատահանները բացալ և մեծցուց 18 պատահան, նորոգեց գմբեթը և որմերը. եկեղեցվոյն մեջն ալ զարդարեց բյուրեղյա ջահով, կարևոր պատկերներով, խաչերով և այլ սպասներով: Խարխալված պարիսպներն ալ նորոգելով, եկեղեցվոյն մեծ դրան դիմաց, բոլորովին նոր պարիսպի վրա բացալ կամարակապ մեծադիր դռներ: Նույնպես կառուց վալեղուչ բնակարան վանահոր՝ չորս սենյակներով և կարևոր կահ-կարասիքով: ...Եվրոպայեն դառնալով 1879-ին, վանացս մեջ հաստատեց Ազգագրական թանգարան մը, հայոց զգեստներու, տարագներու, կահ-կարասյաց, ձեռագործաց և այլ իրաց»³:

Բաստամյանը 1873 թ. կրթական, մանկավարժական, վանական գործունեության համար արժանացել է վարդապետական լանջախաչի, իսկ 1880 թ.՝ ստացել ծայրագոնության աստիճան:

Վարդապետական լանջախաչ կրելու թույլտվության առթիվ Գևորգ Դ կաթողիկոսը 1873 թ. մայիսի 15-ի № 243 կոնդակով գրում է.

«Ախորժական է մեզ տեսանել զփոյթեռանդն ջանադ ի բարոքել զվիճակ երկսեռ դպրոցացն Վաղարշապատի, զորս հաւա-

² Հայկական ՍՍՀ ՊԿՊՍ, ֆ. 57, ց. 2, գ. 19, թ. 101—106:

³ Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Բ. I, Վենետիկ, 1903—1905, էջ 452—458:

¹ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1968, էջ 439—441:


տացաք քոյին տեսչութեան յուսալից գոյով տեսանել զայնս յետ սակաւոց ի լաւ անոր վիճակ վերածեալ և ահա խնդրութեամբ բազմալ իմանամք զարդիս, զի չենք բնաւ վրիպեալ ի յուսոյ անոյ Մերմէ:

Զի դու ո՛չ միայն վարժ մտաւոր կրթութեանց զանձն ընծայեցուցանես արժանաւոր գոյ Մերս հայրական համակրութեան այլ և ի գործս հոգևոր գործունեութեանց գոյով ժիր և յարարթունակն յայտնի երևեցուցանես Մեզ զհոգեկան և զմտաւոր բազմատեսակ բարեմասնութեանց քոյոց զգեղեցիկ ապացոյցս, որոց երաշխատոր է յայլ մի կողմանէ նաև անշահախնդիր վաստակք գործունեայ վանահայրութեան քո ի վանս ս. Գայիանեայ, յորում տքնիս յաւետ պայծառութեան և բարեզարդութեան... նորոգելով զխարխալեալ մասունս նորին»⁴:

Մանկավարժական գործունեությունը

Դեռևս ուսանողական տարիներից նա տեսնում է հայ դպրոցի ու մանկավարժության անմխիթար վիճակը: Այդ շրջանին դպրոցի ու ժողովրդական լուսավորության հարցը գտնվում էր հայ մտավորականության ուշադրության կենտրոնում: Ահա թե ինչու դեռ ճեմարանի հիմնդիրը դասարանում սովորելիս 1861 թ. իր դասընկերներ Ստ. Միքայել Տեր-Գրիգորյանցի և Գաբրիել Ստամբոլյանցի հետ ձեռնամուխ է լինում «Մանկական ընթերցարան» պատկերազարդ ամսագրի հրատարակմանը, սակայն կովկասյան կոմիտեն և ճեմարանի վարչությունը չեն թույլատրում:

Հոգևոր կոչում ընդունելուց հետո նրա առջև մանկավարժական լայն ապարեզ է բացվում: 1872 թ. օգոստոսի 10-ին ուղարկվում է Սոմախ քաղաքի դպրոցի գործերը ստուգելու: «Քննությունս ս. Սահակյան հոգեվոր ուսումնարանի ներքին և արտաքին կառավարության» հոդվածում նա վեր է հանում այդ քաղաքի դպրոցներում տիրող թշվառ ու վերափոխման կարոտ վիճակը: Նույն թվականի դեկտեմբերի 12-ին հայրապետական կոնդակով (№ 535) կարգվում է Վաղարշապատի երկսեռ դպրոցների վերատեսուչ: Այդ թվականից սկսած մինչև իր կյանքի վերջը Վահան վարդապետը դառնում է հայկական դպրոցների ղեկավարության հարցում Գևորգ Դ կաթողիկոսի խորհրդատուն: Նա է ոռւերեն լեզվով գրում և պատասխանում դպրոցական հարցերին վերաբերող բոլոր գրություններին: Բաստամյանցի ջանքերով 1873 թ. սկսվում է Վաղարշապատի իգական դպրոցի նոր շենքի



կառուցումը, իսկ 1879 թ. նա իր վանքում չքավոր երեխաների համար մասնավոր դպրոց է բացում: Նա էջմիածնի Գևորգյան ճեմարանի հիմնադիրներից ու դասախոսներից մեկն է եղել, իսկ Կ. Եզյանի խորհրդով 1878 թ. հունիսի 27-ին, Գևորգ Դ կաթողիկոսի հատուկ կոնդակով, նշանակվում է ճեմարանի ուսումնապետ: Նա թեև շատ կարճ է մնում այդ պաշտոնում, այնուամենայնիվ, մի շարք բարեկարգություններ է մտցնում ճեմարանի ուսումնական կյանքում: Նա դասավանդում էր ոռւերեն լեզու, եկեղեցական պատմություն և իրավաբանություն:

Բաստամյանցի մանկավարժական գործունեության մասին խոսելիս անհրաժեշտ է կանո. առնել նրա հրատարակած «Դպրոց» ամսագրի վրա:

Վահան վարդապետը մոտիկից շփվելով հայ դպրոցների հետ և իր ամբողջ էությամբ միջոցառելով դպրոցական գործին, գիտակցում էր դպրոցների անմխիթար ու ծանր վիճակը և ուզում էր իր համեստ լուսման քերել այդ գործին: «Ծրջապատող համաճարներից քաջ համոզված լինելով, որ

⁴ Մատենադարան ձեռ. № 8899, թ. 29:

թե ամենայն ուրեք և թե մանավանդ Ռուսաստանում մեր ազգությունը և մեր կրոնը պահպանելու գլխավոր հիմնաքարը և զենքը ազգային ուսումնարաններն են, որ նույն մանկունք պիտի կրթվեն և զարգանան հայկական հոգով, հայկական մտքով և հայկական սրտով, հարկավոր համարեցի նույնիսկ գործի և ազգի օգտի համար, որ մեր ուսումնարանները բարեկարգված և առաջադեմ լինեն—առաջարկել կաթողիկոսին հրատարակել հոգևոր վարչության կողմից մի առանձին մանկավարժական ամսագիր»⁵:

Եվ ահա նա 1874 թ. ձեռնամուխ է լինում մանկավարժական «Դպրոց» ամսագիրը հրատարակելու գործին: Բաստամյանը «Դպրոց» ամսագիրը նյութական մեծ զոհողություններով ու միայնակ իր սեփական տպարանում հրատարակել է 1874 թ. ապրիլից մինչև 1876 թ. հուլիս ամիսը: Եվ փաստորեն «Դպրոցը» արևելահայերի առաջին մասնագիտական մանկավարժական ամսագիրն էր և նշանակալից հետք թողեց հայ դպրոցի ու մանկավարժության կյանքում: Նա նպաստեց մանկավարժական գիտելիքների զարգացմանն ու տարածմանը: Իր էջերում առաջադրեց նոր ու վերափոխիչ բազմաթիվ խնդիրներ, որոնք հիմք ու խթան հանդիսացան հետագայում էջմիածնի կողմից ընդունված դպրոցական կանոններին:

«Դպրոց» ամսագիրը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը յուր մեջ պարունակում է.

1. Մանկավարժական խորհրդածություններ.
2. Քննություն դպրոցական կանոնադրությունների, դասագրքերի և առհասարակ մանկավարժական մասնագրության.
3. Տերության և ազգային հոգևոր իշխանության կարգադրություններ, հատկապես ազգային ուսումնարաններին վերաբերմամբ.
4. Պատմական և վիճակագրական տեղեկություններ հայոց, ռուս և օտար ազգի դպրոցների մասին.
5. Ազգային դպրոցների վարչությունների հաշիվներ, հայտարարություններ և այլն:

«Դպրոցի» երկրորդ մասն կապարունակել յուր մեջ.

1. Հաղվածքներ ազգային եկեղեցական պատմությունից.
2. Հաղվածքներ հայոց, ռուս և ընդհանուր պատմությունից.
3. Համառոտ տեղեկություններ քնական (ֆիզիկական) և քաղաքական ընդհանուր աշխարհագրությունից.
4. Մասնավոր տեղեկություններ քնական գիտության ամենայն ճյուղերից.
5. Համառոտ քաղվածքներ զանազան երկրներում կատարած ճանապարհորդություններից.

⁵ Մատենադարան, ձեռ. № 8899, թ. 27:

6. Համառոտ կենսագրություններ երևելի մարդոց.

7. Համառոտ հատվածներ ազգային ընտիր շարադրություններից հին (գրոց) և նոր (աշխարհիկ) ոճով.

8. Մանկական վեպեր, ոտանավորներ, առակներ և այլն⁶:

«Դպրոց» ամսագրի առաջին համարի խմբագրականում Վահան վարդապետ Բաստամյանը գրում է. «Դպրոցի նպատակն է ձեռնառն լինել ազգային դպրոցների հառաջդիմության... ուղեցույց լինել դպրոցական վարժապետներին, տեսուչներին և հոգաբարձական վարչություններին... տալ աշակերտներին ընթերցարան հարուստ զանազան օգտակար և հարկավոր տեղեկություններով»⁷: Ամսագրի հոդվածների մեծ մասը գրել է Բաստամյանը, թարգմանել ընտիր հոդվածներ, հայ աշակերտությանն ու մանկավարժներին տվել է մտավորական և հոգեկան սնունդ: Նա («Դպրոցը»—Ս. Բ.) առաջինը եղավ, որ ծանոթացրեց հայ հասարակությանը մեր ազգային ծխական ուսումնարանների ներքին կազմակերպության հետ...: «Դպրոցն» էր, որ տալիս էր հայ ընթերցողներին դպրոցական հաշիվներ, վիճակագրական տեղեկություններ, ծանոթացնում էր գերմանական մանկավարժների կյանքերի հետ, գրում էր ուսուցչական ժողովների մասին, հետաքրքրվում էր ուսումնարանական-առողջապահական կանոններով, անում էր մանկավարժական դասախոսություններ:

Վերջապես «Դպրոցն» էր, որ Բ բաժանմունքում տեղավորում էր մանկական ընթերցանության հարմար գեղեցիկ նյութեր, որ ոչ մի մանկական հրատարակություն (եթե միայն ունի) այդ բանը չի կարող անել⁸:

Ամսագրի տպաքանակը եղել է 200 օրինակ և ունեցել է 150 բաժանորդ: Մեկ տարվա 32 հիմնական հոդվածներից 22-ը գրել կամ ռուսերենից թարգմանել է Բաստամյանը: «Դպրոց» ամսագրի համարներում տպագրվել են մոտ 105 հոդված, որոնցում բազմակողմանիորեն շոշափվում են դպրոցական բազմապիսի և խիստ ուսանելի հարցեր:

Վահան վարդապետ Բաստամյանը մեծ գրկանքներով ու զոհողություններով է կատարել ազգօգուտ այդ գործը: Նա եղել է առաջադեմ ու այդ գաղափարների ջերմ ու կրքոտ պրոպագանդիստ: Ահա թե ինչու ցարական իշխանությունները կասկածել են, որ Բաստամյանը կարող է Հայաստանում

⁶ «Դպրոց», 1874, № 1, էջ 6—7:

⁷ Նույն տեղը, էջ 5:

⁸ Գ. Լևոնյան, «Հայոց պարբերական մամուլը», Ալեքսանդրապոլ, 1895, էջ 355:

կազմակերպվող ազատագրական խմբակներին մասնակից լինել:

1875 թ. ապրիլին Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին Հայաստանի մի շարք շրջաններում քննություն ու խուզարկումներ է կատարում և զեկուցագրեր ներկայացնում իր ղեկավարներին: Այդ զեկուցագրերի մի մասը պրոֆ.-դոկտ. Վ. Ա. Պարսամյանը հրատարակել է իր «Հայ ազատագրական շարժումների պատմությունից» գրքում:


Մայոր Զոլոտովսկին իր 25 օգոստոսի 1875 թ. № 127 զեկուցագրում, որն ուղղված է «Նորին կայսերական մեծության անձնական դիվանատան 3-րդ բաժանմունքին» տեղեկացնում է, թե ինչպես հայերը դրան են հավաքում, դպրոց, տպարան հիմնում, գրքեր հրատարակում: Նա իր ղեկավարների ուղարկությունն է հրավիրում նաև Վահան վարդապետ Բաստամյանցի «Դպրոց»-ի վրա:

«Երևանի նահանգում բացի Էջմիածնի վանքի տպարանից, անցյալ տարվանից բացված են նաև երեք տպարաններ, մեկը բացել է Էջմիածնի վանքում վարդապետ Բաստամյանը, որն երեք տարի առաջ ընդունել է վարդապետական կոչում:

Բաստամյանցն ավարտել է Պետերբուրգի համալսարանը, ազատ մտածողության տեր է և համարձակ քննադատում է ռուսական կառավարության գործողությունները: Վարդապետ Բաստամյանը հրատարակում է հալերեն լեզվով «Դպրոց» ամսագիրը: Բացի այդ ամսագրից, ինչպես ինձ հաղորդեցին, նա իր տպարանում ոչինչ չի տպագրում: «Դպրոց» ամսագիրը կարելի է հրատարակել նաև Էջմիածնի տպարանում: Տպարանի բացումը Բաստամյանի կողմից շատերին զարմացնում է. ևս առավել զարմացնում է այն պատճառով, որ նա գտնվում է Էջմիածնի վանքի պատերում, ուր արդեն տպարան գոյություն ունի: ...Իմ կարծիքը տպարանների հսկողության մասին անձամբ հայտնել եմ նահանգապետին: Մայոր Զոլոտովսկի»⁹:

«Դպրոցը» չկարողացավ երկար ապրել: Հետապնդումները, նյութական ծանր պայմաններն ու քայքայվող առողջական վիճակը Բաստամյանցին ստիպեցին դադարեցնել այդ շնորհակալ գործը: Նա 1876 թ. ամսագրի հունիս ամսվա համարում գրում է. «Անձնական տկարությանս պատճառով մըտադիր լինելով գնալ արտասահման, ես ստիպված եմ առ ժամանակ դադարեցնել

⁹ Վ. Ա. Պարսամյան, «Հայ ազատագրական շարժումների պատմությունից»: Ուսումնասիրություններ և փաստաթղթեր: Երևան, Հայպետհրատ, 1958, փաստ. № 6, էջ 202:



«Դպրոց» ամսկավարժական ամսագրի հրատարակությունը»¹⁰:

Վահան վարդապետ Բաստամյանցը իր քրտնաջան և բեղմնավոր գործունեությամբ մի նոր ու լուսավոր էջ բացեց հայ մամուլի պատմության մեջ: «Դպրոց» ամսագիրը մի վարժարան էր իր կրթիչ, օգտակար և հետաքրքրական բովանդակությամբ: Նրանում կան շատ արժեքավոր էջեր, որոնք այսօր էլ առանձին հետաքրքրությամբ կարդացվում են և ունեն մնայուն արժեք:

Բանասիրական գործունեություն.— Հայ մշակույթի բազմավաստակ բանասերներից մեկն է Վահան վրդ. Բաստամյանցը: Նա իր մանկավարժական գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև գրական և մատենագիտական աշխատանքներով: Նա դեռևս ուսանողական շրջանից սկսել է ուսումնասիրել, հետազոտել, քննել մեր պատմական անցյալի անտիպ գանձերը:

1861 թ. «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում հրատարակում է մի ընդարձակ թարգմանություն՝ «Կենսագրություն Բենիամին Ֆրանկլինի», իսկ նույն թվականին «Կոունկ»-ի մեջ՝ մի այլ թարգմանություն՝

¹⁰ «Դպրոց», 1876, № 12, էջ I:

Հակստհաուգենի ճանապարհորդությունից Արևմտյանի համառոտ կենսագրությունը: Չափածո ոտանավորներով և արձակ գրքավածքներով «Հայ» ստորագրությամբ հանդես է գալիս «Մուսքաթ»-ի մեջ: Գրում է «Տրդատի մահը» վերնագրով մի ողբերգություն, որը հետո իր ընկերները ճեմարանում բեմադրում են: Մատենադարանի «Ջանազան հեղինակներ» ֆոնդում (վավ. 58, թղթ. 65) պահպանվում է Բաստամյանցի մի ուսումնասիրություն՝ գրված Լազարյան ճեմարանի 6-րդ դասարանում, 1862 թ. մարտի 7-ին, որ վերնագիրն է «Համառոտագիծ պատկեր հայկական դպրության», որի առանձին էջում Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչ Մսեր Մսերյանը գրել է.

«Ջարժանին գով թե այլ չըտան
Այդ վաստակող գիշերաջան,
Ես վարժապետս ահա այդ տամ
Բանիս հակիրճ, ո՛ր իմ Բաստամ»:

1866 թ. նա թարգմանաբար կազմում է թվաբանության դասագիրք, ֆրանսերենից թարգմանում է «Պատմություն մի կտոր հացի» գիրքը: Մ. Տեր-Գրիգորյանի հետ թարգմանում են անգլիացի բժիշկ Կոբի «Մանկանց սևուցման և դաստիարակման մասին» աշխատությունը:

Սովորաբար Բաստամյանը գրում էր երկու բնույթի հոդվածներ՝ քաղաքական և ազգային կամ ուսումնական: Առաջինը նա տպագրում էր «Մշակում» 1876—78 թթ., իսկ երկրորդը՝ «Արարատ»-ի և «Դպրոց»-ի մեջ, որոնցից են.

Մի քանի խոսք իմ արեղայության առիթով, «Արարատ», 1872, էջ 139—146:

Թե ինչպես կազմվեցավ հայոց ազգը, «Արարատ», 1872, ապրիլ, էջ 197—207, հունիս, էջ 249—251, օգոստոս, էջ 312—319:

Ի Փարիզէ: (Փարիզահայ կյանքի նկարագրությունը), «Արարատ», 1877, փետրվար, էջ 77—80:

Զմեռնի Գաղղիա (բանասիրական), «Արարատ», 1877, մարտ, էջ 102—107:

Եվրոպացվող գաղափարք հայոց վերա (բանասիրական), «Արարատ», 1877, մայիս, էջ 185—193:

Արգարի նամակը առ Հիսուս Քրիստոս և նորա պատասխանը առ Արգար, «Արարատ», 1877, հունիս, էջ 201—208, օգոստոս, էջ 286—293, սեպտեմբեր, էջ 325—330:

Հանգուցյալ Սարգիս վարդապետ Թեոդորյան, «Արարատ», 1877, հուլիս, էջ 271—278:

Ֆրանսիայի և Գերմանիայի մեջ եղած տարբերությունը, «Արարատ», 1877, սեպտեմբեր, էջ 337—342:

Ա. Ղազարու վանք, «Արարատ», 1877, հոկտեմբեր, էջ 388—395:

Մանչեսթերաբնակ հայք, «Արարատ», 1877, էջ 464—468:

Փարիզի ազգային մատենադարան և հայոց ձեռագիրներ, «Արարատ», 1878, փետրվար, էջ 54—58:

Ի Վիեննայէ, «Արարատ», 1878, մարտ, էջ 112—116:

Թեև «Դպրոց» ամսագրի հոդվածների մեծ մասը ինքն է գրել, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել մի քանիսը:

Ազգային դպրոց, «Դպրոց», 1874, № 1, էջ 9—18:

Դասագիրքի մանկավարժական նշանակությունը, «Դպրոց», 1874, № 1, էջ 19—25:

Մայրենի լեզվի մանկավարժական նշանակությունը, «Դպրոց», 1874, № 2, էջ 44—48:

Պատմական տեղեկություններ ազգային հին և նոր դպրոցների վրա, «Դպրոց», № 1, էջ 26—36, № 2, էջ 69—80:

Ուսումնարանի ազդեցությունը աշակերտների խելքի, բնավորության զարգացման վրա, «Դպրոց», 1874, № 2, էջ 49—54:

Հայտարարություն: («Դպրոց» ամսագրի մասին), «Դպրոց», 1874, № 1, էջ 5—8 և 1875, № 1, էջ 1—8, 1876, № 12, էջ 1—8:

Ազգային դպրոցների այժմյան դրությունը, «Դպրոց», 1876, № 9, էջ 325—333:

Վիճակագրական տեղեկություններ ազգային ուսումնարանների, «Դպրոց», 1876, № 4, էջ 125—142 և այլն:

Առանձին հրատարակվել է նաև «Նկարագրություն Մայր եկեղեցուն հայոց ա. էջմիածնի» հայ և ռուս լեզուա, աշխատ. Վահան վարդապետ Բաստամյանց, Վաղարշապատ, 1877, էջ 29:

Ղ. Աղայանը իր հուշերում գրում է. «Նա գրել էր և Թիֆլիս քաղաքի ընդարձակ պատմությունը, որ եթե տպվեր, մի ահագին հատոր դուրս կգար: Ո՛ր մնացին այդ աշխատությունները—հայտնի չէ ինձ»¹¹:

Բաստամյանցի արխիվի ձևատապիրտը մինչև օրս հայտնի չէ: Նա բազմաթիվ աշխատություններ և թարգմանություններ էր թողել, որոնցից Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 8899-ի տակ է գտնվում Բաստամյանցի անտիպ աշխատություններից միայն «Տարեգրություն»-ը, որը պատմական արժեք է ներկայացնում նրանով, որ մանրամասնորեն նկարագրում է իր ժամանակի դեպքերն ու դեմքերը, Գևորգ Դ կաթողիկոսի օրոք էջմիածնում կատարված իրադարձությունները: Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվի Կ. Եղյանի ֆոնդում (միկրոֆիլմ) պահվում են Վահան վրդ. Բաստամյանցի 25 նամակները, որոնք մի տեսակ գեկուցագրեր են ս. էջմիածնի գործունեության և ընդհանրապես այդ շրջանին վերաբերող դպրոցական և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

Բաստամյանցը ընդհատելով «Դպրոց»-ի հրատարակությունը, 1876 թ. վերջերին ու-

¹¹ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 441:

դեվորվում է արտասահման բուժվելու, եվրոպական երկրների նշանավոր ուսումնական հաստատությունների դրվածքին ծանոթանալու և իրավագիտության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու, հատկապես մագիստրոսական քննություն տալու համար իր պատրաստելիք «Մխիթար Գոշի դատաստանագիրքը» ընդարձակ ուսումնասիրության համար նյութեր հավաքելու:

Ներկա ժամանակներում հերթի վրա է կանգնած մեծ և երևելի հարցը, որոշել սահմանը եկեղեցու և պետության իրավասության, անշուշտ հարկավոր էր հիմնական կերպով ուսումնասիրել, մշակել և ծաղկեցնել եկեղեցական իրավաբանությունը, որը որոշում է և պարզում մի կողմից եկեղեցու ներքին և արտաքին կազմակերպությունը, վարչությունը և այլն, մյուս կողմից՝ նրա և պետության փոխադարձ հարաբերությունները, իրավունքները և պարտավորությունները, մի խոսքով իրավասության սահմանները:

Ահա այս իսկ պատճառով և ի նկատի ունենալով այն մեծ բարոյական և պատմական ազդեցությունը, որը ունեցավ քրիստոնեությունը և Հայաստանյայց եկեղեցին հայոց ազգի կրոնական, բարոյական, մտավորական և քաղաքական զգացմանը վերա, ես խորհրդաբար ընտրեցի եկեղեցական իրավաբանությունը իբրև մասնագիտություն¹²:

Դեռևս Եվրոպայում շրջագայելիս նա մեծ եռանդով աշխատում էր «Մխիթար Գոշի դատաստանագրքի» վրա: Հայրենիք վերադառնալուց հետո բազմաթիվ աշխատանքների մեջ իր գլխավոր հոգան է լինում ավարտել Մխիթար Գոշի դատաստանագրքի գիտական ուսումնասիրությունն ու հրատարակումը: 1879 թ. իր այդ գիտական աշխատության առաջաքանը հրատարակում է «Փորձ» ամսագրում հետևյալ վերնագրով.

«Դատաստանագիրք Մխիթար Գոշի», իրավաբանական հետազոտություն, «Փորձ», 1879, № 6, էջ 65—125, № 7—8, էջ 60—110, № 9, էջ 51—106:

Այնուհետև հրատարակում է ամուսնությունը ըստ հայոց եկեղեցու իրավաբանության, «Փորձ», 1880, № 6—7, էջ 148—167, № 8—9, էջ 51—90, № 10, էջ 11—12, 1881, № 4, էջ 5—6:

1880 թ. ավարտում է Մ. Գոշի դատաստանագրքի գիտական ուսումնասիրության աշխատանքները և հանձնում է տպագրության: Այդ աշխատության համար 1880 թ. ստանում է ծայրագումության աստիճան: Եվ երբ 1881 թ. Էջմիածնի տպարանում տպվում էր նրա տարիների փայփայանքը՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Բաստամյանցը փակում է աչքերը ընդմիջում և չի կարողանում տեսնել իր աշխատասիրության ավարտումը: 1880 թ. վականին այդ աշխատությունը արժանացել է Իզմիրյանց գրական մրցանակին:

Կարճատև հիվանդությունից հետո, 1881 թ. հին տոմարով նոյեմբերի 30-ին, վախճանվում է Մայր Աթոռի գիտնական վարդապետ Վահան Բաստամյանցը, որի «մարմինն ամփոփեցավ ս. Գայանեի վանուց տաճարի արտաքին սրահում, հարավային դրան մոտ»¹³:

Մահվանից տարիներ հետո «Լումայ»-ում տպվում է նրա թարգմանած «Մորեի իշխան» [հունական պատմավեպ], (տես «Լումայ», 1898, № 2, էջ 1—110, 1899, № 1, էջ 111—222):

Հայ մատենագիտության, բանասիրության, տպագրության, դպրոցի ու մանկավարժության պատմության մեջ պայծառ կմնա ս. Էջմիածնի երախտավոր միաբան, Գայանե վանքի արդյունաշատ վանահայր Վահան ծայրագույն վարդապետ Բաստամյանցի անունն ու հիշատակը:

¹² Մատենադարան ձեռ. № 8899, «Տարեգրություն», թ. 79:

¹³ «Արարատ», Էջմիածին, 1881, էջ 80:





Գ. Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ԼԱՍՏԻՎԵՐՑՈՅՆ՝ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ»

11-րդ դարի ակամավոր մատենագիր Ար. Լաստիվերցին¹ իր հանրահայտ Պատմության մեջ հայրենասիրական փոթորկումն սրտով գովերգել է Բագրատունյաց Հայաստանի փառավոր անցյալը, խորն ու սրտակեղեք ողբով ողբացել քաղաքամայր Անիի, վաճառաշահ քաղաքներ Արծնի, Կարինի և ընդհանրապես հայոց ամբողջ բարեջեն աշխարհի ավերումն ու ապականումը Բյուզանդիայի ու թուրք-սելջուկյան հրոսակախմբերի կողմից։ Նա միաժամանակ խարանդել է այդ ապականմանը նպաստողներին և երազել կենտրոնական, ինքնուրույն մի պետականություն, որտեղ արդարություն, առաջադիմություն, ազատություն ու քարեկեցիկ կյանք լինեն, ուր ի մի հավաքվեն «զօրեն աստեղաց մոլորական կոչեցեղոց» աշխարհի տարբեր կողմերը ցրված հայորդիները։

Ար. Լաստիվերցին մույնպիսի կրքոտությամբ, մույնպիսի հայափունջ գեղեցիկ լեզվով գրել է ճառեր ու մեկնություն, որոնք շատ նշանավոր մատենագիրների գործերի հետ տարբեր դարերում արտագրվել են Ճառընտիրներում։ Նրա ստեղծագործության անքակտելի մասը կազմող այդ գործերն ունեն դավանաբանական բովանդակություն, որտեղ դարի նշանավոր վարդապետներից մեկը պաշար է մղել մաս քաղկեդոնականության դեմ, որը հայ ժողովրդին այլ ճանապարհով ցանկանում էր գրել ինքնուրույնությունից և հայոց աշխարհը դարձնել Բյուզանդիայի հավելվածային մի երկրամաս։ Այդ գործերում Լաստիվերցին հիմնավորում է հայ ուղղափառ եկեղեցու անգրունդները, միաբնակության ընդունման հետ կապված ծեսերն ու տոնակատարությունները, որոնք դարձյալ անհաշտ պայքարածն են

ընդդեմ քաղկեդոնականների։ Հետևաբար, սույլաժամանակում ակնհայտ է եղել դրանց հայրենասիրական նշանակությունը, մի բան, որը պետք է ամբողջ խորությամբ հասկացվի ու արժեքավորվի հայ մնացած երախտապարտ սերունդների կողմից։

Միջնադարյան Հայաստանում շատ են եղել Արիստակես անունով վարդապետներ, որոնցից մի քանիսը այլ գործերի հետ գրել են ճառեր, քարոզներ, մեկնել Աստվածաշնչի ընթերցվածները։ Եվ քանի որ նրանց ապրած ժամանակ կամ հետագայում գրիչները այդ աշխատանքները արտագրելիս բաց են թողել հեղինակների մականունները, ստեղծվել է կատարյալ շփոթ։ Մինչև օրս, ըստ հեղինակների, չեն քննվել հաճախ իրարից մի քանի դար ուշ կամ շուտ ապրած Արիստակես վարդապետների այդ գործերը, հատկապես չեն առանձնացվել և ուսումնասիրվել Ար. Լաստիվերցու գրածները։

Որքան մեզ հայտնի է, առաջինը Հ. Միք. Չամչյանն է հայտնել, որ Ար. Լաստիվերցին բացի Պատմությունից գրել է մասնաշաղկապական բնույթի գործեր. «Գրեաց սա (Ար. Լաստիվերցին—Գ. Մ.) ըստ վաղեւահին շարագրութեան իրում և զայլ բազում ճառ գեղեցիկս. որոց զմեմս մ'արթ է տեսանել ի հին ճառընտիրս»²։ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (հտր. առաջին, Վենետիկ, 1836, էջ 9—10) կազմողները խոսելով դրանցից երկուսի՝ «Ճառ Արիստակեսի վարդապետի ի մկրտութիւն Տեսան և ի փորձութիւն անապատի, կամ յութօրեայ անապատիս զկնի յայտնութեան» և «Լաստիվերցուն՝ Մեկնութիւն ընթերցութեան»-ի մասին, բուն քառաբանում ձևագրերից օգտագործել են նրանց հարուստ քառապաշարո՞ք։

² Հ. Միք. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտր. Բ, Վենետիկ, 1785, էջ 988։

³ Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցութեան»-ը դեռևս անտիպ է։

¹ Մենք Արիստակեսին Լաստիվերցի ենք անվանում, ոչ թե Լաստիվերցի, մկատի ունենալով մինչև 17-րդ դարի ձևագրերը, որոնցում մա այդպես էլ կոչվել է։ Տե՛ս «Պատմա-քանասիրական հանդես», Երևան, 1967, № 1, էջ 184—186։

Այնուհետև, մասնակի տեղեկություններ կան մի շարք բաժաներների մոտ⁴, սակայն ինչպես հարկն է, ոչ միայն չեն ուսումնասիրվել Ար. Լաստիվերցու դավանաբանական աշխատանքները, այլև նրա «Մեկնութիւն ընթերցումաճոց»-ի շուրջը շփոթ է ստեղծվել:

Հր. Աճառյանը⁵ ըստ Ֆ. Մակլերի⁶ նշել է, որ Փարիզի ազգային գրադարանում է պահվում Ար. Լաստիվերցուն վերագրվող ծննդյան վերաբերյալ մի գրվածք, սակայն նույն բառարանի վերջին հատորի «Հավելված»-ում (էջ 285) գրել է, որ Լաստիվերցու անունով կա դարձյալ «Մեկնութիւն ընթերցումաճոց», որպես աղբյուր նշելով Բ. Սարգիսյանի Ձեռագրացուցակը⁷, իսկ այդտեղ Բ. Սարգիսյանը նկատի է ունեցել Փարիզի ազգային գրադարանի ձեռագիրը: Եվ այսպես, նույն գործը կրկնվել է երկու անգամ՝ ստեղծելով այն տպավորությունը, թե Փարիզի ազգային գրադարանում Ար. Լաստիվերցու անունով (մեկը նրան վերագրվող, իսկ մյուսը փաստացի նրանը) երկու աշխատանք է պահվում:

Համամասն շփոթի տեղիք է տալիս Բ. Սարգիսյանի վերոհիշյալ Ձեռագրացուցակը, որտեղ (էջ 1061) նա հաղորդել է. «Մատիս գաղափարողը (ճառը Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցումաճոց»-ն է, իսկ գաղափարողը՝ Արս. Բագրատունին—Գ. Մ.) կը ծանոթագրէ, թե զանի պարունակող քանի մը հնուտեպ թուղթերը, որոնք շատ վաղնիս գրչութեամբ գրուած են, գետեղում են յիշեալ Մատենադարանի Հին թիվ 93 (հմտ. F. M. Catalogue, p. 100, № actuel 179), որ սակայն Ցանկիս յօրինողը յիշած չէ սոյն ճառը: Եվ քանի որ Ֆ. Մակլերի այդ Ձեռագրացուցակում (էջ 156) 303 համարի տակ նշված է «Fragment d'Aristakes de Lastiverl, sur la nativite» («Արիստակես Լաստիվերցուց մի հատված Ծննդի վերաբերյալ») ստացվում է, որ իսկապես Փարիզի ազգային գրադարանում Ար. Լաստիվերցու անունով երկու ճառ կա, որից մեկը Ֆ. Մակլերը մոռացել է. նշել իր Ձեռագրացուցակում, 179 համարի տակ:

Վերջերս Փարիզից ՀԱՄՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Սիրարոփի Տեր-Ներսիսյանը ի պատասխան Մաշտոցի անվան

Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանի՝ մեր խնդրանքով գրած նամակին հայտնել է, որ Փարիզի ազգային գրադարանի նախկին № 93 ձեռագիրը երկու մասի է բաժանված, մի մասը այժմյան 179 համարի ձեռագիրն է, մյուսը կրել է «Հայկական հավելված, 106» համարը (այժմ № 303), որտեղ գտնվում է Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցումաճոց»⁸: Միաժամանակ նա հաստատել է, որ այնտեղ Ար. Լաստիվերցուց միայն մեկ մեկնություն կա: Ֆ. Մակլերն էլ իր Ցուցակում դիտել է այս բաժանումը. նա այժմյան № 179 ձեռագրի հին համարը 93-ն է նշել (էջ 100, 180), իսկ ներկա № 303 ձեռագրի նկարագրի սկզբում գրել է. «Ժողովածուն կազմված է № 179 ձեռագրից դուրս մնացած թղթերից» (էջ 155), իսկ վերջում որել է № 303 ձեռագրի նախկին համարը՝ «Հայկական հավելված, 106» (էջ 156, 182):

Սակայն 1824—25 թվերին, երբ № 93 ձեռագրից այս մեկնությունը արտագրել է Ա. Բագրատունին⁹, իսկ 1864 թվականին՝ Ս. Պարոնյանը¹⁰, սույն հիմք ձեռագիրը դեռևս ամբողջական վիճակում էր: Այսպիսով, արդեն պարզ է, որ Փարիզի ազգային գրադարանում եղել է և այժմ էլ պահվում է Ար. Լաստիվերցու միայն մեկ Մեկնությունը, որը նշված է Ֆ. Մակլերի Ձեռագրացուցակում:

Մինչև այժմ տարբեր է նշվել նաև այդ Մեկնությունը պարունակող ձեռագրի գրչության թիվը: Ֆ. Մակլերը նշել է 13-րդ դարը¹¹, Բ. Սարգիսյանը հայտնում է, որ ամբողջ ժողովածուն Բագրատունին արտագրել է 1274—1382 թվերի քնագրից, միաժամանակ տեղեկացնում է (ըստ Բագրատունու հաղորդածի), որ մեկնությունը ավելի հին գրչությամբ է գրված¹²:

Բ. Սարգիսյանի մյուս տեղեկությունից պարզվում է, որ Փարիզի հիշյալ ձեռագիրը գրվել է հայոց ՈԶ (1281) թվականին, Հոռմկլայում, Թորոս գրչի ձեռքով, ի վաղելումն Դավիթ եպիսկոպոսի¹³ (այս հիշատակարանը բառացի բերել է Ֆ. Մակլերը)¹⁴:

⁸ Հարգարժան Ա. Տեր-Ներսիսյանը ուղարկել է նաև այդ մեկնության մեծադիր լուսանկարը, որի համար հայտնում ենք խորին շնորհակալություն:

⁹ Հ. Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 1057:

¹⁰ Հ. Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 1223:

Ա. Բագրատունին և Ս. Պարոնյանը տարբեր ժամանակներում իսկապես արտագրել են նույն ձեռագրից, քանի որ նրանք նշել են միևնույն համարը (93): Նրանք առանձին-առանձին հաղորդել են, որ այս մեկնության ձեռագիրը քայքայված է և կիսատ, ու երկուսն էլ բերել են ավարտի նույն տողերը: Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցումաճոց»-ի ընդօրինակությունները այժմ պահվում են Վենետիկի 294 և 310 համարի ձեռագրերում:

¹¹ F. Macier, նշվ. աշխ., էջ 156:

¹² Հ. Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 1058, 1061:

¹³ Հ. Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 1223:

¹⁴ F. Macier, նշվ. աշխ., էջ 100:

⁴ Մ. վրդ. Մուրադյանց, «Պատմութիւն Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ», Երուսաղեմ, 1872, էջ 426: Հ. Գ. Զարբանալյան, «Հայկական հին դարերի», Վենետիկ, 1897, էջ 595:

⁵ Հր. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», յոթերորդ հտոր., Երևան, 1935, էջ 42: «Հայոց անձնանունների բառարան», հտոր. Ա, Երևան, 1942, էջ 279:

⁶ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 279—80:

⁷ F. Macier, „Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la bibliothèque nationale“, Paris, 1908, էջ 156:

⁸ Հ. Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վեներիկ», հտոր. երկրորդ, Վենետիկ, 1924, էջ 1061:

Հր. Աճառյանը¹⁵ նշել է 1228 թվականը, չհայտնելով իր աղբյուրը: Բոլոր դեպքերում, երբ այլ փաստացի տվյալ չկա, որպես այս Մեկնության ձեռագրի գրչության ժամանակ պետք է ընդունել Թորոս գրչի հիշատակարանի 1231 թվականը:

Մեկնության ձեռագիրը, դատելով նրա լուսանկարից, խիստ քաղաքաված է, միջից և վերջից որոշ թերթեր ընկել են, առանձին էջերի սկիզբը և վերջը անընթեռնելի են: Ձեռագիրը թղթյա է, գրված է անցման բոլորգրով, լուսանկարն ունի 29,3×18,5 մեծություն, որը տարբեր է Փարիզի ազգային գրադարանի № 179 և № 303 ձեռագրերի չափսերից (ըստ Ֆ. Մակլերի նրանց չափսերն են 29,5×15):

Այն ունի «Լաստիվերցուն» Մեկնություն ընթերցում (ոց)» խորագիրը, որն, հարկավ, հիշատակում է Ար. Լաստիվերցուն, քանի որ տվյալ մականունով մեկ այլ մատենագիր չի եղել հայ հին և միջնադարյան գրականության մեջ: Թերևս հենց այդ պատճառով էլ մեր որոշ պատմիչներ ու գրիչներ քավարարվել են Արիստակեսին միայն Լաստիվերցի անվանելով: Մատթ. Ուոհայեցին 11-րդ դարի նշանավոր հայ վարդապետների թվում գրել է նաև «Սալյահանն և կամ Լաստիվերցին»¹⁶, իսկ Մխ. Անեցին իրեն ծանոթ պատմիչների շարքում հիշատակել է. «...և Ասողիկ, և Լաստիվերցին, և Կոզուման»¹⁷: Ինչպես երևում է, Ստ. Տարոնեցին, Ար. Լաստիվերցին և Հովհ. Տարոնեցին 12-րդ դարում այնքան հանրաճառ էին եղել, որ մատենագիրը քավարարվել է միայն նրանց մականունները նշելով: Հետևաբար հիմնավոր չէ «Նոր քաղաքի» Հայկազեան լեզուի» հանրաճառ քառաբանը կազմողների այս առթիվ ունեցած կասկածանքը. «Լաստ. ընթերց. Մեկնություն ընթերցում»-ը պիտի հարթ և ընտիր ոճով: Գուցե սա է և նշանակալի ի վեր անդր՝ Արիստակ. («Նախադրում», էջ 18): (Վերևում նշված են Ար. Լաստիվերցին և նրա Պատմությունը):

Ար. Լաստիվերցու «Մեկնություն ընթերցում»-ը սկսվում է հետևյալ ստղերով. «Տերն մեր Յիսուս Գրիստոս ծնա ի սուրբ Կուսն, զի զհնացեալ արարածս վերստին նորոգեսցէ», իսկ վերջը, ինչպես սովոր, թերի է. «Զի երբևից Տերութեան Ամենասուրբ Երրորդութեան արքութեամբ արծանի լիցուք ծառանգել ուրախութեամբ զպատրաստեալ արքայութիւն նորա ի սկզբանէ աշխարհի արքոց իւրոց, որոց լիցի մեզ...»: Մեզ թվում է, որ Մեկնության վերջից առանձնապես շատ պակաս չէ, քանի որ Հիսուսի Մընընդյան և Հայտնության 8-րդ օրվա կապակցությամբ (Թլփատություն) արդեն ընդարձակ տրված է: Եվ քանի որ 5-րդ, 6-րդ, 7-րդ օրերի մասին գրածները շատ ծավալուն չեն (այդ օրերի ընթերցվածների մեկնությունը համեմատաբար ամբողջական է մեզ հա-

սել), ուրեմն դժվար թե Լաստիվերցին միայն վերջին օրվա կապակցությամբ շատ լայն մեկնություն գրեր:

Տոնացույցը, որի սկզբնական օրինակի կարգողն ու սահմանողը համարվում է Սահակ Պարթևը, սկսվում է Գրիստոսի Մննդյան և Հայտնության կանոնով¹⁸: Այս կանոնը կա նաև «Ճաշոց գիրք» սկզբում. «Կանոն արքայ ծննդեան և յայտնութեան Գրիստոսի աստուծոյ մերոյ»¹⁹: Ծիշտ է, շարակնոցները սկզբում ունեն Աստվածածնի Մննդյան կանոնը, սակայն, ուշադրության կենտրոնում Գրիստոսի Մննդն ու Հայտնությունն են, նման պատկեր ենք տեսնում նաև «Յայսմատուրք»-ներում, ժառընտիրներում, Ժամագրքերում ու Ժամանակագրություններում: «Արդ սկիզբն և զլուխ ամենայն տառնից տերունականաց՝ տնայրեմության որդւոյն աստուծոյ՝ է տառն ծննդեան և յայտնութեան տեսուն...»²⁰. սա շատ վաղուց է սահմանվել և իրագործվել: Ահա թե ինչու տերունական այս կարևոր տոները (Գրիստոսի Մննդն ու Մկրտությունը) վաղուց գրավել է օտարազգի հայ եկեղեցական շատ նշանավոր մատենագիրների ուշադրությունը, որոնք այս տոնին նվիրել են մեթոդական ճառեր, մեկնել նրա խորհուրդը: Ինչպես տեսնում ենք, Գրիստոսի Մննդյանը և Մկրտությանը անդրադարձել է նաև Ար. Լաստիվերցին, որը գրել է այդ տոնի ընթերցվածների մեկնությունը: Բ. Սարգիսյանը իր Ձեռագրացուցակում այսպես է գնահատել այդ Մեկնությունը. «Յոյժ հետաքրքրական է Մեկնաբան ճառս, յորում մրթիմ աստուածաբանութեամբ կը ցուցնէ վարդապետս, թէ Յիսուսի Գրիստոսի հրաշափառ ծննդեամբ ինչպե՞ս նորոգեցան վերինք և մերքինք, քաղդատելով Մննդեան և Աստուածայայտնութեան եօթն օրերը արարչութեան օրերուն հետ»²¹: Այս «Մեկնություն ընթերցում»-ը չնայած ամբողջական չէ, քայք եղածից էլ հնարավոր է եզրակացնել, որ այն իսկապես ճշգրիտ հետաքրքրական, ինքնուրույն և ինքնատիպ աշխատանք է՝ տարբեր Կ. Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան»²² ընթերցվածների մեկնությունից և Գր. Արշարունու «Մեկնություն ընթերցում»-ից²³: Կ. Երուսաղեմացին, օրինակ, առանձին ընթերցումներ է քաղել Աստվածաշնչից և տվել է դրանց մեկնությունը: Իսկ Գր. Արշարունու «նպատակն է, գրքին խորագրին համաձայն, ծիսական երկու մեծագույն տօներու, յատկապես Յայտնութեան և Յարութեան իբր պատրաստութիւն՝ երգում Մարգարէական ընթերցումներու մեկնութիւնը գրել, տրամադրելու համար հաւատացեալներու արտերը քրիստոնէական երկու

¹⁸ «Տօնացույց», աշխատասիրությամբ Սիմեոն Երևանցու, 1774, էջ 25:

¹⁹ «Ճաշոց գիրք», Վաղարշապատ, 1872, էջ 7:

²⁰ Ձեռ. № 7448, էջ 327ա:

²¹ Հ. Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 1061:

²² «Երանելոյն Կիրոյի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան», Վիեննա, 1832:

²³ «Գրիգորիսի Արշարունոյ քորեպիսկոպոսի Մեկնութիւն ընթերցում», 1964, Վենետիկ, աշխատասիրությամբ Հ. Բ. Չրաքյանի:

¹⁵ Հր. Աճառյան, «Հայոց անձնանունների քառաբան», հտր. Ե, Երևան, 1962, էջ 285:

¹⁶ Մատթ. Ուոհայեցի, «Ժամանակագրություն», Վաղարշապատ, 1898, էջ 179:

¹⁷ Ձեռ. № 2678, էջ 240ա:

գլխավոր յիշատակները արժանատի պատրաստություններ կատարելու²⁴։ Իր մեկնության երեսուցորս գլուխներում, համաձայն Քառասներորս պահի օրերի, մա Հին կտակարանի դեպքերը, մարգարեությունները համեմատում է Նոր կտակարանի նյութին, միաժամանակ բացատրում է Ծննդի և Մկրտության մեկ տոն լինելը, Աստվածաբանության և Հարության տոների միմյանց լրացնելը և այլն։

Անշուշտ, Ար. Լաստիվերցին նկատի է ունեցել Կ. Երուսաղեմացու և այլոց համապատասխան մեկնությունները, սակայն նրա նպատակը չի եղել ընթերցվածներ քաղել Աստվածաշնչից և բացահայտել նրանց իմաստը, այսինքն՝ չի ձգտել մեկնելու ս. Գիրքը։ Ար. Լաստիվերցու. «Մեկնություն ընթերցումաց»-ը ավելի մոտ է Գր. Արշարունու մեկնությանը, այն տարբերությամբ, որ Լաստիվերցին առաջ է դրել միմյանց Ծննդի և Մկրտության տոների ութ օրերը և բացատրել այդ օրերի խորհուրդը՝ առաջնորդվելով Աստվածաշնչի համապատասխան ընթերցվածներով. Լաստիվերցին իր մեկնած առանձին օրերին ավելի լայն է անդրադարձել, ստեղծել է ոչ միայն մեկնություն, այլև ներքող է Քրիստոսի Ծնունդն ու Հայտնությունը։

Նա ավելի համարձակ ու լայնորեն է Հին և Նոր կտակարանների համապատասխան հատվածների միջև գուգաֆոններ անցկացրել՝ նպատակ ունենալով ցայտուն դրսևորել Ծննդի և Հայտնության տոնի էությունը, ընդգծել Աստծու Որդու առաքելությունը, փառաբանելու նրան։ Արարչության յոթ տոների օրերի դիմաց («զվեցն գործոց եւ զեւթերորդն հանգիստ») մա ընդունված կանոնին հետևելով՝ դնում է ութ օրեր և առանձին-առանձին մեկնում է դրանց նշանակությունը։ Լաստիվերցին միայն ակնարկում է Քրիստոսի Ծննդյան և Մկրտության մեկ տոն լինելը, սակայն ավելի մանրամասնում է մարդու կողմից աշխարհի և ինքն իրեն ճանաչումը՝ «...այս ար երկին ոչ մոր ստացեալ եղև յանգոյից, այլ մոր ստացեալ եղև ի գիտութիւն մարդկան, իմանալով զմա, թէ արարած է եւ ամենայն, որ ինչ ի մմա, ոչ անել ըստ հեթանոսական բարբառմանցն»։

Այնուհետև, երկիրը և նրանում եղած ամեն ինչ մա գոյացած է համարում այդ օրը՝ ի տես մարդկանց։ Պաշարի սայրերը ուղղելով հերձվածողներին, մա ժխտում է աշխարհի ինքնու կամ տարբեր արարչներից ստեղծված լինելու հանգամանքը։ Այս ամենի մասին մեկնելիս մա ոչ միայն ելնում է Աստվածաշնչից, այլև արձագանքում է ըստ ձեռագրերի Գր. Լուսավորչին, այժմ Մ. Մաշտոցին համարվող «Յաճախապատում ճառք»-ում և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում առաջ քաշված հարցերին, որտեղ ևս շոշափված է մարդու և բնության ոչ ինքնու լինելու խնդիրը՝ պաշարն ուղղելով հեթանոսների դեմ, որոնց ասածները բարբառանքներ են համարվել։ «Յաճախապատում ճառք»-ի և «Եղծ աղանդոց»-ի ազդեցությունը կա նաև Լաստիվերցու «Մեկնություն ընթերցումաց»-ի այլ հատվածներում։

²⁴ Գր. Արշարունի, նշվ. աշխ., էջ 50—51։

Այն մեկնությունը, որն Արարչության և Հայտնության չորրորդ օրերի գուգաֆոնում է, ձեռագրի էջերի ու տողերի եղծման պատճառով աղճատվել է։

Դրանից հետո Լաստիվերցին բացահայտել է 5-րդ օրվա խորհուրդը, «Եւ զարն հինգերորդ պարտ է առաջի դնել քանիս և ախա...»։ Հիշատակելով Արարչության 5-րդ օրում ջրերից կենդանիների առաջանալը, մա Հայտնության 5-րդ օրվա մասին գրում է. «Հինգերորդի հրամայի ժողովել ի լեառն Ջիթենեաց եւ անդ տանախմբել եւ լերանց քարձանց լեալ յիշատակ սաղմոսիւք եւ առաքելական եւ աւ- (ետարա)նական ընթերցումածովք, քանզի երգեն սաղմոս քարձարցումանց...», եւ ոչ էք մատուցեալ առ լեառն շաշափելի²⁵ եւ զմաց, աւե, Մարիամ (1) - եռնակող²⁶ ընթերցեալ լինի»։ («Բարձրացումանց») (Սաղմ. ԻԷ, 9, ՀԳ, 5, 8) գրչագրական սխալ պիտի լինի, քանի որ Սաղմոսի այդ հատվածները Ջիթենյաց լեռը քարձարանալու հետ առնչություն չունեն, իսկ մինչև այժմ այդ օրվա համար երգվում է Սաղմոսի²⁷ «Բարձր արարեալ» (Սաղմ. ՂԸ, 9, մակ՝ ՂԸ, 5)։ Արիստակեսը շարունակում է մեկնել Արարչության 5-րդ օրում ջրերից թռչունների ու ձկների ծննդի և Հայտնության մույն օրում մարդկանց Ջիթենյաց լեռը քարձարանալու և «լերանց քարձանց» հիշատակելու միջև եղած կապը։ Նա գրել է, «Հինգերորդի աստ աւոր ելանել ասի մեզ ի լեառն Ջիթենեաց սաղմոսիւք եւ ընթերցումածովք...»։

Մեզ թվում է, որ Ծննդի ու Մկրտության (մակ տերունական այլ տոների) տոնակատարման շատ տարածված մի կանոն է եղել այս, քանի որ անգամ այսպիսի խորագրով առանձին մեկնությունների ենք հանդիպում ձեռագրերում²⁸։ Ըստ որում այս կանոնը կատարվել է օրվա տարբեր ժամերին. «Եւ աշոյն ժողովին ի Սուրբ լեառն Ջիթենեաց եւ այս կանոն կատարի...»²⁹։ Աստվածաբանության մյուս օրերի կապակցությամբ Լաստիվերցին դարձյալ մեծ կանոններ է առաջ բերում. «Արդ տեսցուք եւ զխորհուրդ վեցերորդ աւորս, քանզի անդ ասաց արաացուք մարդ ըստ պատկերի մերում եւ աստ այսար հրամայի մեզ ժողովիլ (ի) Ղազարուն եւ անտարանալ յիշատակել զարութիւնն Ղազարուն...»։ Ղազարի հարության մույն հատվածը, որը մենք գտել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի № 7443 մեծադի Ծառնետի-րում, բացատրված է հետևյալ ձևով. «Վասն այսր վե-

²⁵ Թուղթ առ երրայեցիս, ԺԲ, 18։

²⁶ Ավետարան Ղուկասի, Ա, 39։

²⁷ Սիմեոն Երևանցի, «Տոնացոյց», էջ 81։

²⁸ Ձեռ. № 7443, էջ 470բ։

«Եւ մույն ժամոյն ելանին ի լեառն Ջիթենեաց եւ անդ կատարեն զերկորեան պաշտաման»։ Նույնը տե՛ս Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց արքե Յակոբեանց», հտր. երկրորդ, Երուսաղեմ, 1953, էջ 5։ Ի լրացումն վերը ասածի, այստեղ կա նաև. «...եւ յար ի մույն զհակումն գիշերոյն»։

²⁹ Ա. արք. Սյուրմեյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի արքե Յակոբեանց վանքի», առաջին հտր., 1948, Վենետիկ, էջ 61։

ցերորդ աւուր կանոնն Ղազարու հրաման(յ)է զմեզ ժողովել ի Ղազարոյն և ստոյմունք բարձր առնել զքեզ...»³⁰։ Ընդհանուր է, Լատինիւերցոյ մօտ Ավետարանն է նշված, իսկ այստեղ՝ Սաղմոսը, սակայն «հրամայողը» բոլոր դեպքերում Ղազարի հարության կանոնն է։ Ուրեմն, Ար. Լատինիւերցին ըստ առանձին օրերի մեկնելով Ծննդի և Մկրտության ընթերցվածները, առաջնորդվել է ընդունված կանոններով։

Լատինիւերցին մնացած օրերի մասին նույնպես հետաքրքիր համեմատություններով ու բացատրություններով շարունակել է իր մեկնությունը։ Նա իր Մեկնությամբ ոչ միայն հարվածել է ամեն կարգի հերձվածողների, այլև պաշտպանելով միաբնակությունը, Ծննդյան և Մկրտության մեկ տոն լինելը և այլ հարցեր, փաստորեն կոմկրենտ պայքարել է քաղկեդոնականության դեմ, իսկ այդ պայքարը, ինչպես վերը ասել ենք, ուներ հայրենասիրական նկատառումներ։

«Մեկնություն ընթերցումածոց»-ը կուր է իր լեզվամտածողությամբ։ Առանձնապես ակնառու է մատենագրի մտածողության՝ այստեղ դրսևորված նրբությունն ու պարզությունը, համեմատություններ կատարելու վարպետությունը, խոսքի պատկերավորությունը, պերճ գործարի հետ աշխարհաբարյան ձևերի օգտագործումը և այլ բարեմասնություններ, որոնք միանգամայն բավական են պարզորոշ ընդգծելու Ար. Լատինիւերցու «Մեկնություն ընթերցումածոց»-ի լեզվական բարձր մշակույթը։ Մեկնությունում ոչ միայն օգտագործված են հայոց լեզվի հարստությունները, այլև կազմված են նոր բարդություններ՝ կամ եղածները հազվադեպ կիրառում են գրավոր խոսքի մեջ։ Օրինակ, Ար. Լատինիւերցին իր Պատմությունում ունի «Գագաթն» բառը՝ կատար, ծայր սովորական իմաստով. «Թորձամ գհասկիցն զկերպարանս ի գագաթնումն երևեցուցանեն»³¹։ Նա այդպես էլ բացատրել է իր «Նոր Կիրակէն» գեղեցիկ ճառում. «Որք ի կատար ընթացիցն ցուցանեն գհասկիցն»³²։ Իսկ այստեղ, հավանաբար, հենց ինքը նոր բառ է կազմել՝ «գագաթնանալ», որը չեզոք սեռի բայ է և նշանակել է «վերանալ, բարձրանալ իբրև գագաթն, կամ մինչև գագաթն»³³։ Լատինիւերցին գրել է. «Ոչ կարացին բարձրանալ և գագաթնանալ»։ «Այլ զկնի Քրիստոսի բարձրացեալ ելաք ամենեքեան ի լեւոն տեսուն առ աստուած, գագաթնացեալք ի բարձրութիւն վերին Երուսաղէմի»³⁴։

Լատինիւերցին ունի նաև «որովայնամոլեալ» բայաձևը. «Եւ միւսովն ոչ զաշտոութեամբ որովայնա-

մոլեալ նման Եւայի...»։ Այն կազմված է «որովայնամոլ» ածականից³⁵։

Բազմաթիվ բարդ և ածանցավոր բառերի հետ այստեղ Լատինիւերցին գործածել է «կենդանագործութիւն, կենդանատեղծել, կենդանատեղծություն, կենդանացուցանել (կենդանացոյց)», ինչպես նաև՝ «կենդանեալ, կենդաստեղծել (կենդաստեղծել)»։

«Ծանկարծակի յակաւ թաթախել ի փող յետին և կենդանեալ կացուցանել զամենխեսան»։ «Եւ նա ինքն կենդաստեղծել զամենայն ծնունդս Ադամայ»։ Այս ընդգծված բառերում, մեր կարծիքով «ան» մասնիկի չլինելը գրչի բաց թողումն է։ Երևի միևնույն էջում նույնատիպ բառերից խուսափելու նկատառմով Լատինիւերցին դիմել է նորակազմությունների, կենդանի բառի արմատը համարելով «կենդ»-ը։

(Ըստ Հր. Աճառյանի կենդանի բառի արմատն է «կե(ա)»-ն, նրանից կազմվել է «կեան»-ը, որի անջեշտ ձևն է «կեն»-ը։ «Կենդ» արմատը կազմվել է նախորդից, «Կ» մասնիկի ավելացումով։ Այնուհետև աճել է «կենդան» արմատը՝ «կենդ»-ի վրա «ան» մասնիկի ավելացումով)³⁶։

Մեծահամբավ լեզվաբանի այս բացատրությունը և ձեռագրում եղած կրկնակի փաստը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ Լատինիւերցին «կենդանի» բառի արմատը համարելով «կենդ»-ը, ու նոր բառեր կազմելով, չի սխալվել, հետևաբար թերևս ճիշտ է նրա կազմած այդ բառերից մեկի նոր սրբագրությունը. «Նա ինքն կենդԱնաստեղծել զամենայն ծնունդս Ադամայ յատուր յետունման»³⁷։

Ար. Լատինիւերցու «Մեկնություն ընթերցումածոց»-ի ավելի մանրաքննիչ ուսումնասիրությունը թողնելով հետազային, մենք այստեղ ցանկանում ենք շոշափել բանասիրական երկու կարևոր հարց։ Առաջինը, որ ըստ մեզ, խիստ ուշագրավ է, մարդու բարձրացման, նրա հոգեկան հարստությունների վեր հանման ձգտումն է, որը բազմաթիվ երանգներով դրսևորվել է 10—11-րդ դարերի հայ վաղ վերածնության հոյակապ գրականության մեջ։ Մարդու հոգու փոթորկումները, խորը ապրումներն ու տվյալամբը, որոնք արտահայտել էր հանճարեղ բանաստեղծ Գր. Նարեկացին, արձագանքվել են 11-րդ դարի ակաճավոր մատենագիր Ար. Լատինիւերցու Պատմության, «Մեկնություն ընթերցումածոց»-ի և այլ գործերի մեջ։ Մասնավորապես այս քննվող Մեկնության մեջ Լատինիւերցին, ճիշտ է, աստվածաբանական հայտնի դրույթներից ելնելով, բայց և Քրիստոսի Մկրտության օրինակով շեշտել է մարդու մաքրագործման, ամբողջ էության մորացման և աստվածացման խնդիրը. Քրիստոսը «աստ ոչ հրամանաւ, այլ անձամբ իւրով կատարեաց կրկնակի առաւել, քան

³⁰ Ձեռ. № 7448, էջ 848բ—849ա։

³¹ Ար. Լատինիւերցի, Պատմություն, Երևան, 1968, էջ 104։

³² Ձեռ. № 2715, էջ 6ա։ Այս ճառին մենք անդրադարձել ենք առանձին։

³³ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուին», հոտ. Ա, էջ 519։

³⁴ Միանք միակ օրինակներ են ՆՀԲ-ում (հոտ. Ա, էջ 519)։

³⁵ ՆՀԲ-ում (հոտ. Բ, էջ 535) այս բառի օգտագործման քննադային փաստ է բերված Մխ. Գոշից և Ար. Լատինիւերցու Մեկնությունից։

³⁶ Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառաբան», հոտ. Գ, Երևան, 1930, էջ 1116—1118։

³⁷ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուին», հոտ. Ա, էջ 1086։

գառաջինն զկենդանատեղծութիւն մեր, քանզի անդ ձեռաք ստեղծ մարդն, եւ աստ ոչ ձեռաք զայլոք ստեղծ, այլ ինքն անձամբ իրով ի Կուսէն ընկալեալ մարմին, ստեղծագործեցաւ մարդ որպէս եւ ինքն կամեցաւ, եւ եղև երկրորդ սկիզբն ազգի մարդկան,

Ծառընտիր

(Ձեռ. № 7443, էջ 350ա, № 2042, էջ 43ա)

«...Ի Կուսէն առեալ մարմին ստեղծագործեցաւ մարդ որպէս ինքն կամեցաւ: Աստուած միացեալ ի մարմնի. եւ եղև երկրորդ ազգի սկիզբն, մարդ փոխանակ առաջին մարդոյն. ինքն ընդ մեզ և աստուած և մարդ ծննդեամբ ի Կուսէն, զի զմեզ արասցէ աստուած ծննդեամբ առազանին»:

Ուշագրաւ է, որ Գր. Նարեկացին ինքն էլ նախապէս նման ձևով մեծարելով մարդուն, այնուամենայնիւ այդ մասին այդպէս խոսելը «ախարհ» է համարել. «Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստուծոյ յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց, աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին, և ընդ հաստողիդ միա՛նալ տերունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ»³⁸:

Այն ժամանակաշրջանում մարդու նման բարձրացման ճիշտ ընկալումը մասնավորապէս գտնում ենք 14—15-րդ դարերի ականավոր փիլիսոփա և աստվածաբան Գր. Տաթևացու մոտ: Նա գրել է. «Ջայն է իմանալ՝ զի թէպէտ հրեշտակք չորիք պատւարք են, քան զմարդիկ. այլ գալստեամբն Քրիստոսի մարդիկ գերապատիւք եղեն, քան զհրեշտակս. որպէս ասէ սուրբն Գրիգոր Նարեկացին: Եւ զայս ցուցանեմ տասն կերպիս»³⁹: Այստեղ Գր. Տաթևացին իրեն հատուկ խորությամբ ու մտքի ճկունությամբ հոյակապ մեկնություն է տվել, որտեղ բացահայտել է մարդկանց տալը առավելությունները հրեշտակների նկատմամբ: Այդ մեկնություններից մեկը ձևակերպված է իր մեծ նախորդ վարպետների բացատրությունների հետևությամբ. «Հորորդ» զի ուտելով և ըմպելով զաստուած՝ աստուածանամք. և նոքա ոչ ունին զայս»⁴⁰:

Բանասիրական հետաքրքրություն ներկայացնող մյուս խնդիրը Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի՝ այլ վարդապետների գործերի հետ միավորված՝ Ծառընտիրների և «Յայնամարտք»-ի մեջ թափանցելն է: Այս կարևոր է ոչ միայն որոշելու այդ միավորման մոտավոր ժամանակը, այլև վերականգնելու Լաստիվերցու այս մեկնության առանձին հատվածները, որոնք, ինչպէս ասացինք, միակ հիմք ձեռագրի տեղ-տեղ եղծման պատճառով անընթեռ-

փոխանակ առաջին մարդոյն ինքն ընդ մեզ եղև մարդ ծննդեամբ ի Կուսէն զի զմեզ ընդ իւր արասցէ աստուած ծննդեամբ առազանին»: Հետաքրքիր է, որ այս հատվածը թափանցել է Ծառընտիրների և «Յայնամարտք»-ի մեջ:

Գիրք, որ կոչի Այնամարտք

(Կ. Պոլիս, 1730, արացի Ե, հունվարի ԺԲ)

«...Ի Կուսէն առեալ մարմին ստեղծագործեցաւ որպէս և ինքն կամեցաւ, ծննդեամբ մարդ ի Մարիամայ՝ զի զմեզ աստուած արասցէ ծննդեամբ սուրբ առազանին»:

Նկի եւն դարձել, կամ մոտավորապէս մշելու այդ ձեռագրից կորած 3—4 էջերի բովանդակությունը: Մի շարք Ծառընտիրներում կան Լաստիվերցու «Մեկնություն ընթերցուածոց»-ի ազդեցությամբ գրված Ծննդի և Հայտնության ութ օրերի մեկնություններ⁴¹:

Ամենամաքոքականները Մաշտոցի Մատենադարանի № 7443 ձեռագիր մեծ Ծառընտիրն (1352—53 թթ.) ու Երուսաղեմի ա. Հակոբյանց վանքի նույնպէս մեծադիր № 145 Տոմարատնոն⁴² են (1358 թ.), որոնք համարյա նույն ժամանակ արտագրվել են Դրիմում: № 7443 ձեռագրում (էջ 322բ) նախորդ նյութերից գլխագարդով անջատված կա հետևյալ խորագիրը. «Սուրբ վարդապետացն առացեալ վասն յայտնութեան և ծննդեան տեսուն և հաւատոյ հաստատութեան ընդդէմ երկաթնակացն վկայություններն Տեսնեղբարն և Կիւրդի Երուսաղեմի հայրապետին»: (Սկզբնատողը. «Յորժամ ոք կամիցի...»): Այնուհետև կան հետևյալ նյութերը. «Յեկեղեցական պատմութեանէ զոր երկրորդեալ է Սարկաազի վարդապետի» (էջ 325ա): «Սամուէլի և Պաղոսի և այլոց վարդապետացն վերալուծութիւն ընթերցուածոց գրոց» (էջ 326բ): 328ա—362ա էջերում նույն թեմայի շուրջը այլ նյութեր կան, որոնց մեջ են նաև Լաստիվերցու Մեկնության ազդեցությամբ գրված «Պատճառ սուրբ»-ները (էջ 334բ—355ա):

Դրված է նոր գլխագարդ, որից հետո սկսվում է

⁴¹ Ձեռ. № 2042, № 7443, էջ 334բ—355ա: № 2042 ձեռագիրը (ԺԲ դար) գրված է ավելի հմուտ գրչի ձեռքով, քան սկզբնագիրը, ինչպէս երևում է, տեղ-տեղ եղծված է եղել: Ահա թե ինչու կան հատվածներ, որոնք ավելի ճիշտ են տրված, քան № 7443 ձեռագրում, սակայն որոշ տեղեր էլ հասկացվում են մյուս ձեռագրի զուգարդությամբ. առանձին բառեր քան են թողնված, հետո ավելացված են ենթադրաբար, որոնք այնպէս չեն ձուլվում բնագրին, ինչպէս № 7443 ձեռագրում է:

⁴² Ն. Կապ. Պողոսյան, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հոբ. երկրորդ, Երուսաղեմ, 1953, էջ 4:

³⁸ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 133—134:

³⁹ Գր. Տաթևացի, «Գիրք բարոգութեան, որ կոչի Ամատան հատոր», Կ. Պոլիս ԻժԴ (1741), էջ 661:

⁴⁰ Գր. Տաթևացի, նշվ. աշխ., էջ 661:

այլ նյութ. «Պատճառք առաջադր պահոցն» (էջ 382ա):

Ծառ փոքր տարբերությամբ նյութերի մասն դասավորություն կա ման Երուսաղեմի ա. Հակոբյանց վանքի № 145 Տոնապատճառում և Մաշտոցի Մատենադարանի ԺՂ դարում գրված № 2042 ձեռագրում: Այս խոսում է անշուշտ մի այնպիսի հիմք ձեռագրի մասին, որտեղ իսկապես եղել են միևնույն նյութերը և այն էլ մասն դասավորությամբ⁴³: Այստեղ ամենաուշագրավը «Սամուելի եւ Պաղոսի եւ այլոց վարդապետացն...» է, քանի որ նրա նյութը համընկնում է Լատինիկերու «Մեկնություն ընթերցում»-ին: Տարբեր վարդապետների գործերը ի մի բերող մեզ անհայտ հեղինակը այդտեղ գրում է. «Արդ բազումք ի վարդապետաց եկեղեցւոյ վասն խնդրոյս այսորիկ մեծաւ աշխատութեամբ փոյթ ի յանձն առեալ երկայնաձիգ պատմութեամբ զասացելոցս բացայայտեցին զխորհուրդս և ոչ եթէ մեք մերով աղքատ և հի(ւ)ծ քանիս զանոց ջանն աղարտել կամիմք, գործ առաջի եղաք, այլ ի մոցանէ յամենեցունց զագուտակարն ի մի հաւաքելով իբր ի բազմագունակ ծաղկանց պսակ հիւսելով կամ ըստ արիմակի երկոտասան ականցն ընդլուգանելոցն ի պատմութեան քահանայ(ւ)իս, որով շքեղանայր ի ձեռն վակասին, գոր կրծանոցս կոչեն: Այսպես և իմ ի մոցա աշխատութեանցն զկարևորսն համառատաբար հաւաքելով ի զարդ վայելչութեան ուսումնասէր անձանց»⁴⁴: Արդյո՞ք բնական է, որ այսքան ընդարձակ խոսքից հետո բերվի շատ փոքր մի նյութ, եթե հաշորդը (էջ 328ա) մի այլ հեղինակի համարենք: Անշուշտ, անբնական կլիներ, մանավանդ, որ հաջորդ նյութերն էլ իրենց թեմայով Ծննդի և Մկրտության վերաբերյալ են և այն էլ հավաքված մի քանի վարդապետների գործերից: Անգամ խորագրով անջատված «Պատճառք առաջադր պահոցն» աշխատանքի նյութը ձևափոխված է հավանաբար նույն հեղինակի ձեռքով: Հայտնի է, որ Հովհ. վարդապետ Տառնեցի (Վանական վարդապետ) 1181—1251) ունի «Պատճառք վասն առաջադրաց պահոցն»⁴⁵, որն սկսվում է «Յոյութ եմ բանք վասն այսր պահոց, այլ զասկանսն ասացուք փոխանակ բազմացն...»⁴⁶: Ահա այս գործն է, որ արտագրված է Ծառընտիրում, ըստ որում նոր հեղինակից կրելով

փոփոխություն. «Բազում պատճառք են առաջադր պահոցն, բայց զասկանսն ասա(ս)ցուք ուսումնասիրաց»⁴⁷: Հիշենք, որ «Սամուելի և Պաղոսի և այլոց վարդապետացն...» նյութի սկզբում հեղինակը նույնպես մտահոգվում էր «ուսումնասէր անձանց» համար: Պրպտումները ցույց են տալիս, որ մասն մի գործ պետք է, որ գրված լիներ 18-րդ դարի առաջին տասնամյակից⁴⁸ մինչև 1281 թվականը, քանի որ այդ ժամանակի մի ձեռագրում կա «Սամուելի և Պաղոսի և այլոց վարդապետացն վերալուծութիւն ընթերցում»-ը⁴⁹:

Իսկ թե Փարիզի ազգային գրադարանի № 93 ձեռագրում, երբ այն չէր բաժանված, ամբողջովին կ'ար մեզ հետաքրքրող հատվածը, դժվար է հաստատ որևէ բան ասել: Սակայն մեզ թվում է, որ այն այդպես էլ պակասավոր է եղել, քանի որ այդ նույն ժողովածուում է եղել Ար. Լատինիկերու «Մեկնություն ընթերցում»-ը: Մի՞թե նույն ձեռագրում գրիչը միևնույն թեմայի վերաբերյալ կարտագրեր համարյա իրար կրկնող երկու նյութ (նկատի ունենք Լատինիկերու այս Մեկնությունը և նրա ազդեցությամբ գրված Ծննդի և Հայտնության տոնի «Պատճառք առաջադր»-ը):

Ձեռագրական նոր տվյալները, իհարկե, կարող են ավելի պարզ դարձնել այս վիճելի հարցը: Այնուամենայնիվ, դատելով առկա նյութից, մեզ թվում է, որ այն միևնույն անձնավորության ձեռքով է ի մի հա-

⁴⁷ Զեռ. № 2042, էջ 57ա, № 7448, էջ 382ա:

⁴⁸ Վանական վարդապետի «Պատճառք վասն առաջադրաց պահոցն» այս ժամանակից շուտ գրված լինել չէր կարող:

⁴⁹ Հ. Բ. Մարգարյան, նույնը, էջ 1230:

Այստեղ Բ. Մարգարյանը տեղեկացնում է, որ այս մեկնությունը կիսատ է. «Մնացեալսն ամբողջ կը պակսի, և կամ զաղափարողն զանց ըրած է օրինակել: Վամուելս՝ Կամբջաձորեցին է հաւանօրէն, իսկ Պաղոսն՝ Տարօնացին»: Այս նյութը գտնվում է վենետիկյան № 810 ձեռագրում, որը, ինչպես վերևում ասել ենք, 1864 թվին արտագրված է Փարիզի Ազգային գրադարանի հին թիվ 98 (ըստ Բ. Մարգարյանի նոր թիվ 179 ձեռագրից): Սակայն Ֆ. Մակլերի ծուցակում այդ նյութը չկա: Որ այդպիսի նյութ չկա № 179 ձեռագրում, կարող ենք բերել Ա. Տեր-Ներսիսյանի վերջերս գրած մամակի հետևյալ տողերը.

«Այդ ձեռագիրը կաթարմակե միայն Ներսես Ծնորհալու և Գրիգոր Տղայի մամակները, որոնք արդեն հրատարակված են ծուցակին մեջը: Ասված է, թե Մխիթար Գռչի Դատաստանագրքի վերջավորությունը կա, բայց այդ ճիշտ չէ, այդ մասը կորսված է, և միայն էջ 1-ի հիշատակարանին մեջ դատաստանագրին ակնարկությունը կա»: Այս փաստը մեկ ավելորդ անգամ ապացուցում է, որ Փարիզի Ազգային գրադարանի № 98 (հին թիվ) ձեռագիրը երկու մասի բաժանելիս (№ 179 և № 808), հավանաբար հենց այս ժամանակ, այդ ձեռագրից վերցվել են որոշ նյութեր, այդ թվում «Սամուելի և Պաղոսի և այլոց վարդապետացն...» մեկնությունը:

⁴³ № 2043 ձեռագրի (ԺՂ դար) նյութերը նույնպես ունեն մասն դասավորություն, սակայն «Սամուելի և Պաղոսի եւ այլոց վարդապետացն վերալուծութիւն ընթերցում»-ից հետո այլ նյութ է հաջորդում. չկան Ծննդի և Հայտնության օրերի մեկնությունները: Իսկ № 2045 ձեռագիրը (ԺՂ դար) ավարտվում է այդ նյութով, որտեղ ևս չկա հիշյալ ութ օրերի մասին:

⁴⁴ Զեռ. № 7448, էջ 326բ:

⁴⁵ № 1952 (ԺՂ դար) և № 4822 (1491 թ.) ձեռագրերը նույն նյութի վերնագրում ունեն «Պատճառք վասն առաջադրաց պահոցն արարեալ (կամ ասացեալ) վանական վարդապետի վասն հակառակացն և ալպանողացն զուրք պահա»:

⁴⁶ Զեռ. № 714, էջ 105ա:

վաքված, ըստ որում նա եղել է նշանավոր և բանիմաց մի վարդապետ, քանի որ այլ հեղինակներից քաղելով նյութը, ինքն էլ է լրացրել, դրել մի կուտ ամբողջության մեջ: Նա միաժամանակ Ծննդի և Հայտնության ութ օրերին վերաբերող հատվածներին առանձին-առանձին ավարտում տեսք է տվել, մինչդեռ Ար.

Լաստիվերցու «Մեկնություն ընթերցումածոց»-ում այդ ամենը խիստ շաղկապված են միմյանց հետ: Այդ հեղինակը Լաստիվերցուց հաճախ քաղել է ոչ թե նույնությամբ, այլ կրճատելով կամ նոր հավելումներ կատարելով: Բերենք զուգահեռ մի բնորոշ օրինակ.

Ար. Լաստիվերցի, «Մեկնություն ընթերցումածոց»

Ձեռ. 7448

Էջ 885ա

«...Յառաջին արարչագործության գոյացոյց գերկինս վերին և գերկիր, գջուր, գաւղ, գիւր, գիրեշտակ: Եւ գիրեշտակս⁵⁰ եւթն արարածոց յանգոյիցն ըստ ասացելոցն աւուրս եւթն կարգեաց. զվեցն գործոց և զեթներորդն հանգիստ աստուծոյ անուանեալ: Եւ աստ դարձեալ ի նոր արարչութեանս այնմ թուով ասուրց տաւնախմբեմք, միով միայն առաւելեալ թուով, որ ի հանդերձեալսն հայեցուցանէ զամենիսեան և փոխանակ...»:

«Ըստ առաջնոյն տեսանեմք կարգեալ զամենայն, զի յառաջին աւուրն գոյացոյց գերկինսն հրեղէն, զվերին և ըզհրեշտակս և զլոյս և ապա գերկիր և ըզջուր և զաւղ և գիւր և ըստ եւթն արարածոց կարգեաց աւուրս եւթն. զվեցն գործոյ և զեթն հանգիստ աստուծոյ կոչեաց և դարձեալ ի նոր արարչութեանս զնոյն թիւս տաւնախմբեմք, մի առ աւել թիւ և մի որ ի հանդերձեալսն հա(յ) եցուցանէ զամենիսեան և փոխանակ...»:

Կարող ենք այսպիսի շատ օրինակներ բերել, ապացուցելու մեր ասածը, բայց կարծում ենք արդեն պատկերը պարզ է:

Եթե Ար. Լաստիվերցու «Մեկնություն ընթերցումածոց»-ից հանենք այս ժառանգորդում եղած գործի նման հատվածները, ապա տեղում քիչ բան կմնա: Սա կողմնակի ճանապարհով ապացուցում է, որ ժառանգորդի այդ նյութը կազմողը իսկապես օգտվել է Լաստիվերցուց, ոչ թե մեկ այլ աղբյուրից, որից գուցե և օգտված լիներ Լաստիվերցին:

Այսպես դուրս կգա, որ Արիստակեսը մեծ մասամբ քաղել է ուրիշից, մինչդեռ հենց ինքը յոթերորդ օրվա մեկնությունում խոսել է իր գործի ինքնուրույնության մասին: Նա գրել է.

«Արդ որպիսութիւն խորհրդոյն հզարագունիցն և իմաստնոցն յայտ է, բայց մեզ տկարագունիցս որպէս հասանելի է ողորմութեամբն աստուծոյ, ասացուք...»:

Ինչպես ասացինք, Ար. Լաստիվերցու «Մեկնություն ընթերցումածոց»-ի ազդեցությունը կա նաև «Յայսմաւորք»-ի վրա, սակայն ոչ բոլոր խմբագրությունների: Այդ կա միայն Գր. Խլաթեցու խմբագրած «Յայսմաւորք»-ում⁵¹, քանի որ տեղ Իսրայելի⁵² և

Կիրակոս Արևելցու (Գանձակեցի)⁵³ խմբագրածներում չկա Ծննդյան և Մկրտության տոմի «Պատճառաւորք»-ը: Ըստ որում Ծննդի և Հայտնության ութ օրերի մասին ժառանգորդների և «Յայսմաւորք»-ների այս նյութերի կազմողները տարբեր մարդիկ են և աչքի առաջ չեն ունեցել միմյանց գործերը: Նրանք իրարից անկախ օգտվել են Ար. Լաստիվերցու Մեկնությունից. «Յայսմաւորք»-ում այնքան մեծ չէ այս Մեկնության ազդեցությունը, որքան ժառանգորդներում է:

Այն փաստը, որ Ար. Լաստիվերցու «Մեկնություն ընթերցումածոց»-ը այսքան լայնորեն օգտագործված է ժառանգորդներում և «Յայսմաւորք»-ում, ցույց է տալիս դարեր շարունակ այդ գործի հարգի լինելն ու անհրաժեշտությունը հայ առաքելական եկեղեցու ոչ միայն սկզբնաղբերի պաշտպանության առումով, այլև առօրյա ծիսական պետքերի համար:


Ամփոփելով վերը շարադրածը, ավելացնենք, որ այսքանով չի ավարտվում «Մեկնություն ընթերցումածոց»-ի արժանիքների բացահայտումը: Ար. Լաստիվերցու գեղեցկահյուս Պատմության հետ միասին ինչպես այս, այնպես էլ նրա դավանաբանական մյուս գործերի ավելի խորն ու մանրաքննի ուսումնասիրությունը միայն հնարավոր կդարձնի իսկապես ճանաչելու 11-րդ դարի հայ մեծ հայրենասեր մատենագրին և արժեքավորելու մեզ հասած նրա գրական անուրանալի վաստակը:

⁵³ Ձեռ. № 4684, (1407 թվ.):

⁵⁰ Հատվածի աղճատումը հնարավոր է վերականգնել ըստ ձեռ. № 7448-ի:

⁵¹ «Գիրք որ կոչի Այսմաւորք», Կ. Պոլիս, 1780: (Այս ազդեցությունը տե՛ս Ծննդյան և Հայտնության հինգերորդ (արացի Գ, հունվարի Ժ), վեցերորդ (արացի Դ, հունվարի ԺԱ) և յոթերորդ (արացի Ե, հունվարի ԺԲ) օրերի «Պատճառաւորք»-ներում):

⁵² «Յայսմաւորք; ըստ կարգի ընտրեալագոյն օրինակի յայսմաւորաց տէր Իսրայելի», Կ. Պոլիս, 1834:



«ԱՐԱՐԱՏ»-Ն ՈՒ ԵՐԳ-ԵՐԱԺԾՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ*

Այստեղ ևս առկա է թե՛ աղբյուրների բազմազանությունը և թե՛ միաժամանակ, միջնադարյան հայ մշակույթի մույն կենտրոնի կատարած ավելի քան վճռական դերը: Հայտնի է, որ Հովհաննես Կոլոտի աշակերտների թվում կան և չորս սարկավագներ՝ Մարտիրոս սարկավագ, Պետրոս Թերզիօղլու, Պողոս Ախրորյան և Կարապետ Չիլիկիրյան⁶⁸: Մի կողմից, այստեղ եթե՛ Հովհաննես Կոլոտի դարոցում՝ պաշտոնավարում է նաև Գասպար դպիր Սեբաստացին, որը Կոլոտի խոսքերով առած՝ «քաղում երախտիս ունի ի վերայ մանկանց մերոց համբակաց»⁶⁹: Մյուս կողմից, Գրիգոր դպիր Գապասաքայանը, ԺԸ—ԺԹ դարերի մեր անվանի երաժիշտների մեջ ժամանակագրական կարգով «ամենն հինը»⁷⁰, 1790-ական թվականների սկզբներին, 35—40 տարեկան հասակում Կեսարիայից գալով Կ. Պոլիս (ինչպես պարզաբանեց Ար. Ալպոյաճյանը)⁷¹, հանդիսանում է «անդրանիկ» հեղինակը, որ «երաժշտական արվեստին վրա ուշադրություն կդարձնե երեք տպագրյալ հատորներով»⁷²: Մի երրորդ կողմից էլ սակայն, ԺԸ դարում հայ երաժիշտների մեջ մի ուրիշ համբավվող դեմք՝ «Պաղտատը Տիրացու կամ Սարկավագ Հովհաննես Մեծն, որ Էջմիածնա Սիմեոն կաթողիկոսի

ձեռնասուններեն էր, կըսվի. սա՛ Պոլիս կուգա և Ծարականի երգոց ոմանց եղանակները կկանոնավորե: Սույն Պաղտատցիին կարդացվածքն այնքան անուշ և սրտորսակ էր, որ լավ գեղգեղող երաժշտին՝ ավանդաբար՝ Պաղտատը աղզը կհորջորջեն ցարդ»⁷³: Ավելին, «ըստ ոմանց՝ Պաղտատցիին աշակերտ կըկարծվի» Կ. Պոլսի նշանավոր սարկավագ Ջեննե-Պողոսը, իսկ «Պաղտացի շարականագետ Կարապետ Վարժապետն» էլ՝ «սույն Պաղտատցիին թողը կհամարվի ըստ երաժշտական արհեստի»⁷⁴: Այստեղ, ուրեմն, կրկին իմաստով հանդիպում են Պոլիսն ու Էջմիածինը, որովհետև, ինչպես հայտնի է, Էջմիածնում ևս հաղեջից եկած վարդապետներ հաստատեցին տեղի մոր դարոցը: Միայն թե՛ Արք. Այվազյանը չի՝ սխալվում արդյոք, երբ Սիմեոն Երևանցու Կ. Պոլիս եկած սարկավագին «Հովհաննես» է անվանում: Վերը տեսանք, որ «Արարատի» խմբագրության պատասխանի մեջ մույն(“) սարկավագի անունն է «Թեոդորոս»: Եվ սա հաստատում են երկու այլ հեղինակներ էլ՝ Մեսրոպ եպ. Սմբատյանը և Մ. Արևելյանը, որոնք մույնպես պնդում են նաև, թե Գեվորգ Դ-ի երգած ու Ն. Թաշճյանի ձայնագրած եղանակների բուն աղբյուրը հենց հիշյալ Թեոդորոսն է: Գևորգ Դ-ի մասին Մ. Արևելյանը գրում է. «Ունենալով երգեցողության հաջող ձայն և մանկությունից սովորած լինելով շարականների եղանակը Գում-Գափուի մայր եկեղեցու դպիրներից, որոնք իրենց եղանակը երևանցի Սիմեոն կաթողիկոսի Թեոդորոս դպրից էին սովորած, շատ շարականներ ինքը՝ Կաթողիկոսը երգում է և Ն. Թաշճյանին կամ մորա հմուտ աշակերտներին ձայնագրել տալի»⁷⁵: Ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս Մ. եպ. Սմբատյանը: «Վեհափառ Տ. Տ. Գեորգ Դ կաթողիկոսն

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1969 թվականի № Գ-ից:

⁶⁸ Անդ, էջ 72:

⁶⁹ Անդ, էջ 89. Այստեղ տես նաև Հակ. պոր. Նալյանի մույնաման վկայությունը՝ «տիրացու Գասպար մահուեսի մեծ ամուսնա կոչեցեալն Սեբաստացի»-ի մասին:

⁷⁰ Ար. Հիսարյան, Պատմություն հայ ձայնագրության և կինսագրությունը երաժիշտ ազգայնոց (1768—1909), Կ. Պոլիս, 1914, էջ 22:

⁷¹ Պատմություն հայ Կեսարիո, հատ. Բ., Գաֆիլեն, 1937, էջ 1583:

⁷² Անդ, էջ 1582:

⁷³ Արք. Այվազյան, Ծար հայ կինսագրությանց, պր. Ա., Կ. Պոլիս, 1893, էջ 121 (Ջեննե-Պողոս):

⁷⁴ Նույն տեղում:

ուսնալ է զեղանակս Ծարականի հայոց ի Կ. Պոլիս ի Սամաթիա մեծ թաղն հայոց և ի մայր Եկեղեցի պատրիարքարանին ի Գում-Գափու հույնութեամբ որպէս ի հնումն երգէին ի Ս. Էջմիածինն. քանզի Թեոդորոս քաջավարժ շարականագետ և տրամաբան Ասազ Սարկուսազ աշակերտն երջանկայիշատակ Սիմեոն կաթողիկոսի Երևանցոյ ի 1777 ամի ունենալով ի Կ. Պոլիս գրագում աշակերտս ուսնալս զեղանակս Ծարականի ըստ երգեցողութեան միաբանից Ս. Էջմիածնի ի սկզբանէ անտի և հաւորս Սիմեոն կաթողիկոսի. հոքա մինչ ի վերջին ժամանակս ի 1839 ամի երգէին ի Ս. Աստուածածին մայր Եկեղեցոյ Կ. Պոլսոյ զնոյն եղանակ շարականս, որոց մին է ուսուցիչ Վեհ. Հայրապետին մերոյ տիրացոյ Միքայէ վարժապետ քաջ շարականագետ և տրամաբան, որ յետո ըստ թախանձանաց իշխանաց և ժողովրդեան ձեռնարկեալ է քահանայ ի Սամաթիա ի Ս. Գեորգ եկեղեցին անանկելով Յովսէփ, որ ի քահանայութեան և շարունակէր զպաշտօն ուսուցչութեան իբրև քանքարաշահ ծառայէն⁷⁶: Եվ իր ասածներին որպէս ապացոյց, հեղինակը հետևյալ շահեկան փաստերն է բերում: «Վասն զի դեռ գտանին,— գրում է նա,— անկիսն մեծին Հայոց Արարատեան և ի Սիւնեաց նահանգս ծերունի քահանայք և դպիրք (հալֆա կոչեցեալք), որք պահպանելով զհին եղանակն Սրբոյ Էջմիածնի՝ երգեն զԾարականն այնպէս, որպէս այժմեան ձայնագրեալ եղանակն է. զօ. ի Նախիջևանու գաւառի Զուղայեցի Պօղոս և Աստապատցի Աբրահամ քահանայք (վախճանեալք անցեալ ամսն). որոց զերգեցողութիւնս շարականաց լուսնալ են եւ ինքնին և համեմատեալ ընդ այժմու եղանակին, որք և ուսնալ աւելին. 75 ամօք առաջ ի վանս սուրբ Նախավկայի Կարաշաբաթ, նմանապէս և ի Սիւնեաց նահանգի գտանին ծերունի քահանայք և դպիրք ըստ պատմելոյ Գրիգոր եպիսկոպոսի Տաթեւացոյ, որք զհին եղանակն շարականաց երգեն ըստ ձայնագրեալ եղանակին, զօ. Ալիսաթեանցի տիրացոյ Եղիան, Գետաթաղցի Յովսէփ քահանան և այլք, որք ուսնալ են 60—70 ամօք առաջ ի վանս Տաթեւոս»⁷⁷:

Քննարկվող ձայնագրայլ ժողովածուների մասին մեր խոսքն ամփոփելուց առաջ հարկ է նշել հետևյալը ևս: Հայտնի է, որ հայոց եկեղեցական երաժշտության կարգավորության ու ձայնագրայլ ժողովածուների ստեղծման անհրաժեշտությունը նախապես գիտակցվել է պոլսահայ շրջաններում, ուր հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ 1864—1873 թվականների ընթացքում ժողովներ են գումարվել և մասնաժողովներ կազմվել՝ կատարվելիք աշխատանքներին հնարավորին չափով քննական ուղղություն տալու համար: Այդ ժողովները տարիներ շարունակ սպասված արդյունքը չեն տվել լոկ այն պատճառով, որ Կ. Պոլսի մի շարք հեղինակավոր շարականագետ տիրացու-երաժիշտները բոլոր հար-

ցերում համակարծիք չեն եղել: 1878-ին, երբ Գևորգ Դ-ը, արդեն որպես կաթողիկոս, ինքը նախաձեռնեց գործը, Պոլսից Ար. Հովհաննիսյանի հանձնարարությամբ Էջմիածին են գալիս երկու երաժիշտներ, «Պալաթու դպրապետ» տիրացու Կարապետ Պաղտատյանը և Երանյանի աշակերտներեն Նիկողայոս Թաշճյանը, որպեսզի մին երգե, իսկ մյուսը՝ ձայնագրե»⁷⁸: Այս, անշուշտ, արված էր՝ Թաշճյանին հմուտ օգնական տալու մտահոգությամբ, և ոչ թե այն նկատառումով, որ Թաշճյանը լոկ ձայնագրագետ էր, այլ ոչ շարականագետ: Չէ՞ որ գիտենք, թե երբ Թաշճյանը Էջմիածնից վերադարձավ Պոլիս՝ «Մայր Եկեղեցվո դպրաց դասուն թախանձանք տառնձեց տեղվույն երաժշտապետության պաշտոնը»⁷⁹: Քիչ է սա, հայ եկեղեցական երաժշտության հմուտ էր Գևորգ Դ-ն էլ, որը տակավին «Պոլսո պատրիարքության ժամանակ մեծ համբավ մը ունեցած է իբր քաջ շարականագետ»⁸⁰: Եվ որովհետև կաթողիկոսը համոզված էր, որ իր իմացած եղանակները բուն հին հայկական, Էջմիածնական եղանակներն են (և ոչ առանց հիմքի, ինչպես երևում է վերոբերյալ տվյալներից), ամեն ջանք գործադրեց, որպեսզի Թաշճյանը ձայնագրի հիմնականում իր երգածը: Սրա համար է, որ Կարապետ Պաղտատյանն էլ, երբ «տեսավ թե իր երգածին հար և նմանը չի ձայնագրեր Նիկողայոս Թաշճյան», նախամեծար համարելով Վեհ. կաթողիկոսին տուն տված եղանակը, չուզելով իր սկզբունքը զոհել շահահիրության համար, ուստի արհամարհելով իրեն հատկացված թոշակը, անմիջապես թողուց և Էջմիածինը և Պոլիս վերադարձավ⁸¹: Պաղտատյանի հեռանալուց հետո գործին աջակցել է Մանկունի սրբազանը: Այսպիսով, Ն. Թաշճյանի պատրաստած ձայնագրայլ ժողովածուները չենք կարող դիտել որպես համակողմանի քննական աշխատանքության արդյունք (ինչպես ակնարկել ենք տարիներ առաջ ևս)⁸²: Բայց դրանք արժեքավոր են նրանով, որ ներ-

⁷⁸ Ար. Հիսարյան, Պատմություն հայ ձայնագրության, էջ 77:

⁷⁹ Անդ, էջ 119:

⁸⁰ Անդ, էջ 79:

⁸¹ Անդ, էջ 77—78:

⁸² Տես մեր հոդվածը՝ Մակար Եկմայան (ստեղծագործական դիմանկարը), «Էջմիածին», 1958, Դ, էջ 59: Ի դեպ ասենք, որ Ն. Թաշճյանը ինքը ևս գիտակցելով դա, իրապես սիրով ունկնդրել է իր կատարած ձայնագրությունների մասին արվող անաչառ դիտողությունները և աշխատել հաշվի առնել դրանք: Համեմայն դեպս, շատ ուշագրավ փաստ է, որ Թաշճյանն իր հրատարակած ձայնագրություններին հետագայում նորից անդրադառնալով՝ մատիտով սրբագրություններ է թողել դրանց վրա, ինչպես վկայում է Ա. Գոլոյանը. «Անոր՝ Էջմիածին (1875) հրատարակված ձայնագրայլ շարականին մեկ օրինակին վրա մատիտով կատարած փոփոխությունները մինչև 1890 թվականը դեռ Մայր Եկեղեցվո դպրանոցին մեջ կմնար» (տես՝ Ակոբ, Բալու, Գաբրիել, 1932, էջ 279):

⁷⁵ Մ. Արեղյան, Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 35:

⁷⁶ Հայկական ձայնագրություն, «Արարատ», 1881, էջ 480—481:

⁷⁷ Անդ, էջ 479—480:

կայացնում: Են հայ եկեղեցական երգերի և անակա-
վորման մի ուղղություն, որի հետեւորդներից է եղել
ճակ Գևորգ Դ-ը, որը ժամանակին պաշտոնապես
վավերացրել է մեր հոգևոր բարձրագույն իշխանու-
թյունը, և որը պատմականորեն իրոք կապված է եղել
նույն երգերի բուն հայ միջնադարյան ու էջմիածնա-
կան եղանակավորման ուղղության հետ: Ուստի
խնդրո՞ւ առարկա ժողովածուների մասնաժողով-
ների վերաբերմունքը համագելու էր այն բանին, որ
մասնագետները՝ ըստ արժանվույն գնահատելով
դրանք, միաժամանակ պետք է բարձրացնեին հայ
հոգևոր երգերի գոյություն ունեցող այլ եղանակա-
րումները ևս գրի առնելու հարցը, թեկուզ և լոկ գի-
տության ծառայելու նպատակով: Ասեմք՝ պոլսահայ
միջակայքի վերոհիշյալ ժողովների ու մասնաժողով-
ների վերաբերմունքը առարկայականորեն դրան էլ
համագել, երբ ի վերջո վճռվեց կանգ առնել Ե. Տըն-
տեւյանի ձայնագրած Ծարակնոցի վրա, որն և հուսկ
ուրեմն տպագրվեց բարեբախտաբար⁸³: Իսկ Արևել-
յան Հայաստանում, ուր եկեղեցական երգեցողության
էջմիածնական ուղղությունը Սիմեոն Երևանցուց և
ճրա Թեոդորոս սարկավազից հետո մի ամբողջ դար
քարացած չէր կարող մնալ, և ուր, բացի այդ, կարող
էր լինել (ու եղել է) ճակ Սյունյաց աշխարհի ավան-
դույթներին կապված մի ուղղություն, դրանք հրա-
պարակելու համար գործնական միջոցների չեն դի-
մել, ինչքան հայտնի է: Հարցը մամուլում բարձրաց-
րել է Ս. Ամատունին, միայն ցավով՝ չափազանց բա-
նավիճողական հոդվածում⁸⁴, ուր նա նույնիսկ կոնկ-
րետ ծրագիր է առաջ քաշել, բայց հաստատ չգի-
տենք, թե իրագործել է արդյոք այն: Սահակ Ամա-
տունու գրավոր ելույթին առիթ է տվել Ն. Թաշճյանի
հոդվածը պոլսահայ «Հայրենիք» լրագրում, որտեղ
անվանի երաժիշտը իր դեմ ուղղված կողմնակալ
բազմաթիվ հարձակումները տարիներ շարունակ վե-
հանձնաբար լուրջաբար մատնելուց հետո, մի սխալ
տեղեկության հիման վրա այն մասին, թե էջմիած-
նում, իբր, անգամ միաբանների ու Սիմեոնի վերա-
բերմունքը խիստ փոխվել է Գևորգ Դ-ի օրոք իրա-
գործված ձայնագրությունների նկատմամբ, համբե-
րությունից դուրս գալով, դժբախտաբար՝ սեփական
գրչին անարժան արտահայտություններով պարսա-
վանքներ է տեղացել աչ ու ձախ, և Արևելյան Հա-
յաստանի եկեղեցական երգերը, իր հերթին, անվա-
նել «պարսկական խառնաշփոթ» եղանակներ: Միև-
դեռ խեղաթյուրված ձևով Ն. Թաշճյանին հաղորդված
փաստը իրականում այն է եղել լոկ, որ էջմիածնում
լուրջ խռակցության առարկա է հանդիսացել Ծա-
րակնի եղանակները ճակ Երևանցիի Գրիգոր երա-
ժիշտ-եպիսկոպոս Հովսեփից ձայնագրելու գովելի
մտադրությունը: Բացատրելով այս ամենը, Սահակ
Ամատունին ինքն էլ, սակայն, չափազանց տարվում

է բանավիճողական կրքերով. Ն. Թաշճյանին նա հա-
մարում է «բաշ ձայնագրագետ», բայց ոչ շարակա-
նագետ, որը մեր եկեղեցական երգերի եղանակները
պետք է գրի առած լինեն հատկապես Կարապետ
Պատուհյանի երգածից, ճակ մի բանի հակասա-
կան դիտողություններ է անում ինչպես Ծարակնի
ձայնագրության ընթացքի, այնպես էլ արդեն հրա-
տարակված երգերից առանձին նմուշների վերաբե-
րյալ, նույնիսկ 1881-ին ծերունի ու կիսահիվանդ կա-
թոլիկոսի կատարումով իր իսկ ձայնագրած «օրհնու-
թյունների քաղվածքները» անվանում է «հարմարեց-
ված», միայն թե շահի բանավեճը և այլն: Ամատու-
նու հոդվածի վերջին մասը, ուր հեղինակը մի ան-
գամ ևս հաստատելով, որ էջմիածնի միաբանների և
Սիմեոնի տրամադրությունների վերաբերյալ Ն. Թաշճ-
յանին տրված տեղեկությունները սխալ են, գրում է.
«Վերջացնելով հոդվածս, ինչպես շատերի, նույնպես
և Սրբազան Սիմեոնի անդամոց ուղադրությունը դարձ-
նում եմ հետևյալ խնդրի վրա, որ ես՝ ամենայն նե-
ղություն հաճեմ առնելով, կկամենամ գնալ Երևան, և
որքան կարելի է շուտով ձայնագրել վերոհիշյալ
եպիսկոպոսի մեր հին շարականների եղանակները,
և այս այն նպատակով, որ եթե տպագրությամբ լույս
տեսնելու քաղող չի ունենա, գոնե իբրև մի հնություն
կպահվի վաճառի մատենադարանի մեջ. ապա թե ոչ
կգա մի օր, որ կորցրած կլինենք մեր հին շարականի
ձայները և իզուր տեղի տված կլինենք մեր հաջորդ-
ներին մեզ վրա ծիծաղելու և մեր անհոգության հա-
մար մեզ իրավամբ հանդիմանելու և նախատելու:
Ուստի ժամանակավորապես վաճառքս հետանալու լոկ
թույլտվություն եմ խնդրում նույն Սրբազան Սիմեոնի
անդամներից»: Կարծում ենք, որ արժե մասնավոր
որոնումներ նախաձեռնել պարզելու համար, թե Ա-
մատունին երբևէ իրագործել է հիշյալ երգերի ձայ-
նագրությունները, և եթե այո, ապա որտե՞ղ են գըտ-
նվում դրանք այժմ: Համենայն դեպս հիմքեր կան
պնդելու համար, որ շարական երգերի եղանակների
էջմիածնական կամ արևելահայկական և կամ «տե-
ղական» կոչված տարբերակներ իրոք գոյություն ու-
նեցել են, և դրանք նույնպես ձայնագրվել են: Արշակ
Բրուսյանը, ամենայն հավանականությամբ, նույնիսկ
ձեռքի տակ ունեցել է այդ ձայնագրությունները և
դրանք համեմատել Ն. Թաշճյանի հրատարակած Ծա-
րակնոցի հետ: Ինչպես ցույց է տալիս հետազոտու-
թյունը, Բրուսյանի դիվանում պահվող վավերաթղթ-
երից մեկում հաստատագրված են ճրա կատարած
հիշյալ համեմատության արդյունքները: Այդ վավե-
րաթուղթը մեծադիր էջեր ունեցող մի տետր է, ուր
«Ծարականներ» ընդհանուր խորագրի տակ յուրա-
քանչյուր երես բաժանված է չորս պոնակի: Դրան-
ցից առաջինում բերվում են երգի սկզբնաբառերը,
երկրորդում՝ եղանակի տեսակի անունը («ԱՎ», «ԲԶ»
և այլն). երրորդում ցույց է տրվում, ինչպես պարզ-
